

2417


3049

IMI
R-19

2917

3049

ИМИ
Г-19



146.4
n-16

01 JUL 2008

ՊԱՏՄԱԿԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԻԶՄԻ

ԱՅԲՈՒՖԵՆԸ

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԻՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԽՈՍԿՈՒ

1928

1МИ
Р-19

Ա. ՌԱԶԵՎՈՍԿԻՅ

ՊԱՏՄԱԿԱՆ
ՄԱՏԵՐԻԱԼԻ ԶՄԻ
ԱՅՐՈՒԲԵՆԸ

Թարգմանված և հապավումներով:
Արված էն փոփոխություններ յեզ լրացումներ:

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԻՇԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՌԱՎԱԿԱՆ

1928

3049

ՀԵՂԻՆԱԿԻ ԱՌԱՋԱԲԱՆԻՑ

Գրքույկիս նպատակն է պատմական մատերիալիզմի հիմունքները մատչելի դարձնել ընթերցողների վորչափ կարելի յեւ լայն խավերին։ Դրա համար յես պետք է բաց թողնելի մի քանի այնպիսի հարցեր, վորոնք յենթակա չեն տարրականացման։ Լայն խավերին հասկանալի գառնալու համար յես պետք է շատ հաճախ դիմելի որինակների ոգնության, այդպես ել վարվել եմ։

Այս գրքույկի արժեքը գուցե նաեմացնում է այն հանգամանքը, վոր յես որինակները վերցնում եմ մեծ մասամբ մեր ժամանակաշրջանից։ այդ արել եմ (ի վաս գրքույկի) գիտակցաբար՝ նկատի առնելով այն, վոր գրքույկիս ընթերցողները կարող են անձանոթ լինել Հոռմի, Հունաստանի կամ Ֆրանսիական Մեծ Հեղափոխության պատմությանը։

Ինձ գուցե կշտամբեն և նրա համար, վոր յես, խոսելով կուսակցության մասին—խոսում եմ զիսավորապես Համ։ Կոմկուսի մասին, խոսելով դասակարգի մասին—խոսում եմ զիսավորապես պրոլետարիատի մասին և այն։ Դա իհարկե ակադեմիական



Главлит № 98.326

Տираж 4000.

սլրիոմ չե, բայց յես ձգտել եմ թեորեաիկ խնդիրները
բացատրել այնպիսի որբնակներով, վորոնք ընթերցող-
ների լայն խավերին ծանոթ են և լիովին հասկանալի:

Թեորեաիկներից մեջբերումներ անելու համար յես
ընտրել եմ միայն Վ. Ի. Լենինին, ցանկանալով, թե-
կուղ նվազ չափով, ոգտագործած լինել այն փայլուն
ձեակերպումները, վոր նա տվել ե մեր թեորիայի հա-
մարյա բոլոր հարցերի վերաբերմամբ:

Մի շարք ընկերներ, գրքույկիս ձեռագիրը կար-
դալով՝ արել են ցուցմունքներ, վորոնք և յես ոգտա-
գործել եմ:

ԽՍԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԿՈՂՄԻՑ

Ա. Ռայելսկու այս աշխատությունը տալիս ենք փոփո-
խություններով.—ուստ հրատարակության մասին կենտրո-
նական որգանների արած դիտողությունները նկատի յեն
առնված և կատարված են համապատասխան շակումներ:

Այս գրքույկի բնագիրը ներկայումս ընդունված ե կեն-
տրոնական վայրերի բանֆակներում:

Սկսնակ ընթերցողի համար սա մի հաջող ուղեցույց-
ձեռնարկ ե, վոր խիստ համառոտ և մատչելի ձեռվ տալիս
ե եյականը: Հանձնարարելի յե վոչ միայն մեր բանվոր-
ների լայն խավերի, այլև մեր կռմյերիտականների, ուսու-
ցիչների, մանավանդ բանֆակների և Ա. աստիճանի դպրոց-
ների բարձր խմբերի աշակերտության համար:

Վ. Ար.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդս իր գիտելիքները ձեռք ե բերում առար-
կաների վրա աշխատելով, հասարակության մեջ մարդ-
կանց հետ շփվելով. իր ձեռք բերած այդ բոլոր գի-
տելիքների հիման վրա նա կազմում ե իր աշխար-
հայացքը բնության յերևույթների և մարդկային
հասարակության մասին:

Սակայն մենք գիտենք, վոր բոլոր մարդիկ միա-
տեսակ չեն նայում աշխարհի վրա: Վոմանք կարծում
են, վոր ամբողջ բնությունը և մարդուն ստեղծել ե
աստված, և վոր գոյություն ունի հոգի և յերկնային
(անդրգերեզմանային) կյանք, մյուսները, ընդհակա-
ռակը, ժխտում են այդ ամենը՝ ապացուցելով, վոր վոչ
աստված, վոչ հոգի և վոչ ել յերկնային կյանք չկան,
և վոր մեր արեգակնային սիստեմը (արել, յերկիրը և
ուրիշ մոլորակները) գոյացել են բնության վորոշ
որենքի համաձայն: Այնուհետև՝ վոմանք համարում
են, վոր մարդուն մարդու միջոցով շահագործելը միշտ
ել յեղել ե պետք ե գոյություն ունենա, և վոր կա-
պիտավորմը հավեժ, միշտ ել կլինի: Մյուսները, ընդ-
հակառակը, հայտարարում են դրան ուղղակի հակա-
ռակը և նախագուշակում կապիտավորմի մոտպուտ
մահը ամբողջ աշխարհում, և այլն:

Ուրեմն մարդկանց աշխարհայեցողությունը միաւ-
տեսակ չեւ: Դա կախված է նրանից, թե մարդ ինչ-
պես է ապրում, ինչպիսի դեր է կատարում, ինչ
դիրք ունի հասարակական արտադրության մեջ: Բան-
վորների աշխարհայեցողությունը այլ է, կապիտալիստ-
ներինը—այլ, կալվածատերերինը նույնպես ուրիշ է:
Ուրեմն աշխարհայեցողությունը դաստ-
կարգային բնույթ ունի:

Մենք այս գրքույկում կիսուենք վոչ թե ընդհան-
րապես աշխարհայեցողության մասին, այլ միայն
պըռլետարական աշխարհայեցողության
մասին: Միայն վերջինս ե բոլորովին ճիշտ անդրա-
դարձնում իրականությունը, համապատասխանում
իրականությանը: Մնացած բոլորը, և ամենից առաջ
բուրժուական աշխարհայեցողությունը, աղավաղված,
խեղաթյուրված են ներկայացնում այն, ինչ կա: Ինչու
յե այդպես: Նրա համար, վոր բուրժուական հասա-
րակության մոտալուս վախճանը բուրժուազիային
վախեցնում է: Ուստի և վերջինս ձգտում է դրսերել
շրջապատող իրականության մեջ միայն այն, ինչ
դեռ ևս ցույց ե տալիս կապիտալիստական իրավա-
կարգի ամուր լինելը: Յեվ ընդհակառակը, այն ամենը,
ինչ ցույց ե տալիս նրա մոտալուս կործանումը,
բուրժուազիան աշխատում է զանց առնել: Այստեղից
և ստացվում է սխալ պատկեր: Բուրժուական
աշխարհայեցողությունը ճիշտ չե անդրադար-
ձնում իրական կյանքը:

Իսկ պոլետարական աշխարհայեցողությունը ճիշտ
ե անդրադարձնում կյանքը: Դա տեղի յե ունենում

այն պատճառով, վոր հասարակական զարգացումն
ընթանում է պըռլետարիատի դասակարգային հիմնա-
կան շահերի ուղղությամբ: Կապիտալիստական հա-
սարակության զարգացումն ընթանում է կապիտա-
լիզմի վոչնչացման և կոմունիստական հասարակու-
թյան ստեղծման ուղղությամբ: Պոլետարիատը, շնոր-
հիվ իր զիրքի, չափազանց շահագրգուված է, վոր այդ
անցումն կատարվի, վոր կապիտալիզմին փոխարինե կո-
մունիզմը: Այդպիսով, հասարակության մասին ամեն մի
աղավաղված, խեղաթյուրված, սխալ պատկերացումն
շահավետ չե բանվոր դասակարգի համար, ընդհակա-
ռակը—նա շահագրգուված է՝ կապիտալիստական հասա-
րակությունը և այդ հասարակության զարգացման գիծը
ճանաչել այնպես, ինչպես զա իրոք կա, իսկ այդ զար-
գացումը կատարվում է հոգուտ բանվոր դասակարգի:

Այն, ինչ մենք ասացինք հասարակության վերա-
բերյալ, բնականաբար անդրադառնում է նաև բնական
գիտությունների վրա: Այստեղ բուրժուական գիտնա-
կանները մտցնաւմ են իրենց սխալ հայացքները, վոր
նրանք քաղել են հասարակությունը հետազոտելուց:
Այնպես վոր՝ բուրժուական ամբողջ աշխարհայեցո-
ղությունը թափանցված է սխալ, խեղաթյուրված
պատկերացումներով: Դրանից իհարկե չի կարելի հե-
տեցնել, վոր բուրժուական բոլոր գիտելիքներն ել
անպետք են: Ընդհակառակը, պըռլետարիատը շատ
բան է վերցնում բուրժուազիայից, բայց պըռլետա-
րիատը ստիպված է այդ բոլորը զտելու, մաքրելու
ամեն տեսակի սխալ յեզրակացություններից, ոեակ-
ցիոն, փթած կարծիքներից:

Պրոլետարական աշխարհայացքը՝ այլ կերպ կոչվում է մարքսիզմ։ Դա այդպես է կոչվում Կարլ Մարքսի անունով (այդ հանձարեղ մտածողն ու հեղափոխականը ապրում եր 1818—1883թ.): Մարքսը իր ընկեր Ֆրիդրիխ Ենգելսի (ապրում եր 1820—1895թ.) հետ միասին մշակեց պրոլետարական աշխարհայեցողության կամ՝ ինչպես սովորաբար ասում են՝ պրոլետարական իդեոլոգիայի բոլոր գլխավոր հիմունքները։ (Իդեոլոգիա—ծագում և իդեյա խռոքից, վոր նշանակում և միտք, գաղափար։—Գաղափարախոսություն),

Մարքսը և Ենգելսը բանվորներ չեն յեղել, նրանք դուրս յեն յեկել բուրժուական ինտելիգենցիայի շըրջանից։ Բայց բանվորական մասսայական շարժման ազգեցության տակ անցյալ դարի կեսին նրանք անցան բանվոր դասակարգի կողմը և նրան ոգնեցին ստեղծելու իր, պրոլետարական իդեոլոգիան։ Մարքսը և Ենգելսը յեղել են և յեն բանվոր դասակարգի մեծ ուսուցիչները։ Նրանք բանվոր դասակարգի պայքարին խիստ ոգնեցին նրանով, վոր լուսաբանեցին մարդկային հասարակության ամբողջ բարդ կառուցվածքը։ Դեռ ավելին—Մարքսը և Ենգելսը բանվոր դասակարգին ցույց տվին այն միջոցը, վորով նա կարող ե ըմբռնել դասակարգային պայքարի ամենաբարդ դրությունները։

Այժմ ամեն մի գիտակից բանվոր ձգտում է հասկանալ մյուս մեծ ուսուցչի ուսմունքը՝ բանվորական մասսաների ուսմունքը՝ Վ. Լենինի ուսմունքը—Լենինիզմը։ Բայց յեթե մենք քննենք, թե ինչումն է կայանում լենինիզմի թեորիան, ապա կտեսնենք, վոր

նա միայն շարունակությունն է, հետագա զարգացումն է Մարքսի և Ենգելսի թեորիայի։ Լենինը ժամանակակից իրականությունը ուսումնասիրում եր այնպես, ինչպես մեզ պատգամել են Մարքսը և Ենգելսը։ Լենինը նրանց աշակերտն եր։ Լենինիզմը—կապիտալիզմի մահացման և պրոլետարական հեղափոխության եպօխայի (ժամանակաշրջանի) մարքսիզմն է, այսինքն այն եպօխայի, յերբ կապիտալիզմը արդեն հասել է այն դրության, վոր այլև ճնարավորություններ չունի իր գոյությունը շարունակելու, յերբ նա կործանվում է, յերբ պրոլետարիատը իշխանությունը իր ձեռքն է գցում և ձեռնամուխ ե լինում կոմունիստական հասրակության կառուցման։

Դրանից յերեսում է, թե ինչ հակայական նշանակություն ունի մարքսյան թեորիան, վորով զբաղվելու յենք այս գրքույկում։ Մենք նախ կանգ կառնենք և կսովորենք թե բնության և թե հասարակության զարգացման ընդհանուր որենքները, վոր դիալեկտիկական մատերիալիզմ անունն է կրում, իսկ հետո արդեն կզբաղվենք մարդկային հասարակության կառուցման և շարժման քննությամբ՝ կիրառելով դիալեկտիկական և մատերիալիստական մեթոդ։

I

ԴԻԱԼԵԿՏԻԿԱԿԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԻԶՄ

Դիալեկտիկական մատերիալիզմը մի ուսմունք ենության և մարդկային հասարակության գոյության ընդհանուր որենքների մասին¹⁾: Դա ի՞նչ է նշանակում: Ինչպես յերկում ե հենց այդ արտահայտությունից, դա մի այնպիսի թեորիա յե, վորը գոյություն ունեցող ամեն ինչ բացատրում ե դիալեկտիկական և մատերիալիստական տեսակետով: Հետևապես մենք պետք ե պարզաբանենք, թե ի՞նչ է դիալեկտիկան և ի՞նչ է մատերիալիզմը: Նախ կանդ առնենք վերջինի վրա:

ՄԱՏԵՐԻԱԼԻԶՄ

Մարդիկ շատ վաղուց, միշտ ել հետաքրքրվել են այսպիսի հարցերով.—ի՞նչ ե աշխարհը, ի՞նչպես ե նա հայտնվել, ի՞նչ ե մտածողությունը և այլն: Զանազան մտածողներ զանազան պատասխաններ են տվել նման

¹⁾ Պետք ե տարբերել՝ ա) մարդու իրեն ձեռքով սահմանած որենքները, որինակ՝ պետական որենքները, և բ) մարդու կամքից անկախ որենքները, որինեկտիվ որենքները, բնության որենքները: Դիալեկտիկան կազմում է հենց այդ յերկրորդ տեսակի որենքները, վորոնք կախում չունեն մարդկանցից:

հարցերին: Բայց զրանց բոլորին կարելի յե բաժանել յերկու մեծ խմբերի, քանի վոր այդ խմբերից յուրաքանչյուրի ներկայացուցիչների տված պատասխանները քիչ թե շատ համանման են:

Իդեալիզմ. — Յեթե հարցնեք քահանային, թե ով ե ստեղծել աշխարհը, նա ձեզ կպատասխանի—աստված: Աստված նրա համար միակ ստեղծողն ե բոլոր գոյածությունների, վորոնց և նա ղեկավարում ե ու կառավարում: Իսկ յեթե նման հարցով դիմեք բուրժուական պրոֆեսորին, կստանաք նույնպիսի պատասխան, միայն ավելի նուրբ և մթագնած ձևով: Նա հազար աեսակ անհասկանալի բառեր կհոլովե, բայց ի վերջո կասե, վոր աշխարհը ստեղծել ե «վոգին», առաջ վորպես թե յեղել ե «վոգին», իսկ հետո արդեն դրանից հայտնվել ե մատերիան (նյութը), «Վոգին», այդ պրոֆեսորների կարծիքով, նյութական (մատերիական) աշխարհից բարձր ե, նրան շունչ ե տալիս, նրա վրա իշխում ե:

Ինչպես աեսնում եք, այդ ուսմունքը վոչնչով չի տարբերվում տերտերական աստվածալաշտությունից: Իզուր չե, վոր Լենինը այդպիսի պրոֆեսորներին (իսկ դրանց թիվը բուրժուական հասարակության մեջ մեծ ե) սիրում եր՝ անվանել տերտերականության լակեյներ:

Նման բոլոր հայացքները, վորոնք ընդունում են, վոր նախ յեղել ե «վոգին» և ապա արդեն հայտնվել ե ամբողջ բնությունը, նման հայացքները կոչվում են՝ իդեալիզմ, վորովետև նրանք ընդունում են, վոր սկզբնականը, գլխավորը—իդեյան ե, միտքն ե,

«վոգին» եւ Այդ տեսակետի վրա կանգնած, այդ տեսակետը պաշտպանող բոլոր մտածողները կազմում են իդեալիստների բանակը*):

Մատերիալիզմ. — Մտածողների այլ խումբ են կազմում նրանք, վորոնք համարում են, վոր վոչ թե «վոգին» եւ ստեղծել նյութը, այլ ընդհակառակը, նյութն եւ ստեղծել «վոգին» («վոգուն»). Դրանք—մատերիալիստներ են: Պրոլետարական փիլիսոփայությունը**)—մատերիալիզմն եւ Նա ամեն ինչի հիմք եւ ընդունում մատերիան (նյութը): Բայց ինչ եւ մատերիան: Մատերիան, — պատասխանում են

*) Զպետք եւ այդ իդեալիզմի հետ շփոթել այսպես կոչված գործնական իդեալի կմը: Որինակ՝ այն կոմունիստը, վոր պայքարում եւ բանվոր դասակարգի իդեայի համար, կոմունիզմի համար, իր կյանքը գիտակցարար հաճախ զոհարերում եւ զրանց համար— այդպիսին գործնական իդեալիստ եւ, բայց թեորիայում մատերիալիստ եւ, վորով հետև չի ընդունում, վոր բնությունը ստեղծել եւ աստված կամ «վոգին»: Ընդհակառակը բուրժուազիան թեորիայում իդեալիստական եւ, այսինքն ընդունում եւ, վոր բնությունը ստեղծել եւ «վոգին» կամ աստված, բայց գործնական կյանքում այդ բուրժուազիան կոպիտ մատերիալիստ եւ բառիս ամենավատ իմաստով, այսինքն ձգտում եւ հարստության, վորկրամոլության եւ այլն.

**) Փիլիսոփայությունը մի գիտություն եւ, վոր զբաղվում եւ մարդկային ձանաչողության ամենաընդհանուր հարցերով,— թե ի՞նչպես եւ զարգանում աշխարհը, թե վորս եւ նրանում ամենահիմնականը— մատերիան թե «վոգին», թե ի՞նչպես եւ մարդ այդ աշխարհը ըմբռնում եւ այլն: Դիալեկտիստի մասունքն ամենը լավ կյանք խոստանալով «Են աշխարհում», նա հենց զրանով ել նրանց յետ եւ պա-

զիալեկտիկ-մատերիալիստները, — դա այն բոլորն եւ, ինչ գոյություն ունի ոքիյեկտիվ կերպով (ոքիյեկտիվ—մեր գիտակցությունից անկախ, մեր գիտակցության հետ, մեր ապրումների հետ կապված): Մատերիան— դա այն ամենն եւ, ինչ, ազդեցով մեր զգայացարանների վրա, մեր մեջ առաջ եւ բերում զգայություններ: Որինակ՝ սեղանը— մատերիայի յեւ ինչու: Վորովհետեւ նա գոյություն ունի ոքիեկտիվ կերպով, այսինքն անկախ նրանից, թե մենք գիտենք նրա մասին թե չգիտենք, դուք եւ գալիս նա մեզ թե դուք չի գալիս: Նա կդադարեր գոյություն ունենալուց, յեթե բոլոր մարդիկ միանգամից մեռնելին, և այլն: Իսկ այդ մատերիան ձանաչել մենք կարողենք միայն այն գեպքում, յերբ նա ներգործում եւ մեր զգայարանների (աչք, մաշկ) վրա և հարուցում զգայություն (պնդություն, ձեւ և այլն):

Ուրիշ խոսքով՝ այն ամենը, ինչի հետ վոր մարդ ընդհարվում եւ կարող եւ ընդհարվել, բոլոր գոյածությունները— մատերիայի յեւ, և նույն իսկ մեր մըտքերը ևս այդ նույն մատերիայի արտահայտություններն են միայն:

Պետք եւ ասել, վոր իդեալիստական հայացքները վոչ միայն սխալ են, այլ և հանդիսանում են յետադիմական, ոեակցիոն հայացքներ, հեղափոխական պայքարին խանգարող հայացքներ, վորովհետեւ իդեալիզմը հասցնում եւ աստվածպաշտության, — շահագործվող մասսաներին ավելի լավ կյանք խոստանալով «Են աշխարհում», նա հենց զրանով ել նրանց յետ եւ պա-

հում շահագործողների դեմ հեղափոխություն անելուց:
Ուստի և պրոլետարական մատերիալիստական վիլի-
սովայությունը պայքարում է իդեալիզմի դեմ:

Պրոլետարիատի վիլիսովայությունը (մատերիա-
լիզմը) հաստատում է, վոր վոչ թե «վոգին» ե ստեղ-
ծել մատերիան (նյութը, նյութին), այլ մատերիան ե
ստեղծել «վոգին» («վոգուն»): Իդեալիստները հիմնովին
սխալվում են, յերբ պնդում են, թե «վոգին» ինքնու-
րույն եյություն ե: «Վոգին»—դա մեր մտածողու-
թյունն ե, մեր գիտակցությունն ե: Իսկ մեր մտածողու-
թյունը—մատերիայի, մեր ուղեղի գործնեյությունն
ե միայն: Չե՞ վոր մարդկային զլիսից դուրս, ուղեղից
դուրս—ուրիշ վոչ մի «վոգիներ» չկան: Վոչնչացրեք
ուղեղը, և միաժամանակ կանհետանա գիտակցու-
թյունը, կամ ինչպես իդեալիստներն են ասում՝ «վոգին»:

Յեթե մենք մտածող մարդու ուղեղը քննենք,
այստեղ ուրիշ վոչինչ չենք գտնի, բացի ֆիզիկական և
քիմիական յերևույթներից, նման այն յերևույթներին,
վոր կարեի յե դիտել քիմիական գործարաններում,
միայն թե՝ ավելի բարդ ձևերում: Ուրեմն «վոգին»
(գիտակցությունը կամ մտածողությունը) վոչ այլ
ինչ ե, յեթե վոչ՝ ուղեղի ապրումները:
Յեթե կողմանակի կերպով լավ քննենք, կտեսնենք վոր
դա մատերիա յե և նրա գոփոխությունները, իսկ
իրեն մարդուն դա թվում ե վորպես մտածողու-
թյուն: Ուղեղից դուրս՝ վոչ մի միտք, վոչ
մի «վոգիներ» չկան: Կա միայն մատերիա: Ինքը
ուղեղը, վորի գործնեյությունը մտածողություն ե,
կազմում ե նույնպիսի մատերիա, ինչպես և պող-

վատի կամ յերկաթի կտորը: Միայն թե նա նրանցից
տարբերվում է կառուցվածքի շատ մեծ բարդությամբ:

Մարդկանց կամ վրոշվում է յրենց կյանքից
պայմաներով. — Մեր խորհրդածություններով մենք
մոտենում ենք մի կարևոր հարցի: Յեթե մեր մտա-
ծողությունը վոչ այլ ինչ ե, յեթե վոչ՝ վորպես
մարդու ուղեղի սուբիեկտիվ (անձնական) զգացում,
հետևապես մարդկանց բոլոր մտքերն ու ցանկու-
թյունները վորոշված են ուղեղի վիճակով, այն ազ-
դեցություններով, վորոնց նա յենթարկվում ե: Յեթե
յես ցանկանում եմ համեմ վորեւե բանի, դա անպայ-
ման տեղի յե ունենում այն պատճառով, վոր իմ
կամքը իմ կյանքի պայմաններով և իմ որգանիզմի
վիճակով վորոշված ե յեղել, այսինքն ուղղված ե
յեղել զեպի այդ կողմը: Մարդկանց կամեցողություն-
ները լինում են չափազանց բազմազան, բայց միշտ
ել կարող ենք գտնել այս կամ այն պատճառը, վոր
սահմանական այսպես և վոչ այլ կերպ:
Որինակ՝ յես ուղում եմ ուտել: Ինչո՞ւ: Նրա համար,
վոր իմ ստամոքսում տեղի յե ունենում նյութական
(մատերիական) վորոշ պարզես: Յերբ յես իմ ստա-
մոքսը լցնում եմ կերակրով, իմ ցանկությունը անց-
նում ե: Պարզ ե, վոր այստեղ իմ կամքը ամբողջովին
վորոշվում եր իմ որգանիզմի վիճակով:

Բայց մենք կարողենք վերցնել ավելի բարդ որի-
նակ: — Մեր յերկրի բանվոր դասակարգը կապիտա-
լիստներից ազատազրվեց և դիմում ե դեպի կոմու-
նիզմ: Ի՞նչպես բացարել այն, վոր հեղափոխություն
կատարելու այդ ցանկությունը միլիոնավոր մարդկանց

մեջ առաջացավ միանդամից: Այդտեղ յուրաքանչյուրի
մեջ յեղել ե արդյոք ազատ կամք: Իհարկե վոչ:
«Աղատ», այսինքն և վոչ մեկից կամ փոչնչից
անկախ կամք չկա: Ամեն մեկի կամքը փորոշվում է
իր կյանքի պայմաններով: Վոր բանվոր դասակարգն
իր մեծամասնությամբ կարողացավ համերաշխ դուրս
դալ կապիտալիստների դեմ,—դրա պատճառն այն եր,
վոր բոլոր բանվորները գտնվում են կյանքի համա-
նման պայմաններում, վորոնք դասավորվել են այնպես,
վոր քաղցի, ցրտի, ֆրոնտներում բազմաթիվ մարդ-
կանց կործանման հետևանքով, բանվորներն Ռուսա-
տանում դուրս յեկան և կատարեցին հեղափոխությունը:

Այնպես վոր մենք տեսնում ենք, վոր յուրաքան-
չյուր մարդու, ինչպես և ամբողջ դասակարգերի
կամքը փորոշվում է իրենց կյանքի պայմաններով:
Գործելու «բացարձակ ազատություն» ուրեմն չկա:
Ամեն մեկը անում ե այն, ինչ վոր իրեն ստիպում
են անել պայմանները: Ի հարկե, մարդիկ այդ հաճախ
չեն նկատում: Յերբ մարդ վորեւ բան ե ցանկանում
և անում, նրան թվում ե թե ինքը դրան հասնում է
իր սեփական «աղատ» կամքով, թեև նրա կամքը
իրոք փորոշվում է մի շարք ազդեցություններով:
Յեթե անկենդան առարկաները մտածել կարողանային,
ապա նրանք հավանաբար կկարծեցին, վոր իրենց
շարժումները, վորոնք պայմանավորվում են արտա-
քին ազդեցություններով, իսկապես վոր աղատ են:

Իդեալիստներն, ընդհակառակը, համարում են,
վոր մարդու կամքը բոլորովին «աղատ» ե: Մարդը
այս կամ այն կերպ ե վարվում նրա համար, վոր նա

այդպես ե կամենում, և նրա կամեցողությունը վոչնչով
չի պայմանավորվում: Մի խոսքով, իդեալիստները ցան-
կանում են ասել, վոր այդ բնազավառում գոյություն
չունեն պատճառներ, ինչպես ամենուրեք տենում ենք
մեր աշխարհում. դա մի առանձին «հոգեկան» աշխարհ
է, ուր թագավորում է աստվածային ազատություն:

Բայց մենք տեսանք, վոր իդեալիստների ուսմունքը
«հոգեկան» առանձին եյության մասին—սնանկ ե:
Իսկ յեթե չկան ինքնուրույն «վոգիներ», ապա չի
կարող լինել և կամքի ազատություն: Զե՞ վոր կամքը—
մեր ուղեղի վիճակն ե: Հետևապես, այս կամ այն
ազդեցության տակ՝ այդ կամքը ուղղված կլինի այս
կամ այն կողմը: Մի խոսքով—մարդու կամքը միշտ
փորոշված ե. կամքի ազատությունը—իդեալիստական
անմտություն ե, անհեղինեղություն ե:

Այսպես ե մատերիալիստական թեորիան: Բայց
մարդս յան մատերիալիստական ուսմունքը, ինչպես
մենք տեսանք, կայանում ե նրանում, վոր նա մա-
տերիալիզմը դիալեկտիկայի հետ միացնում ե:

Նա ցույց ե տալիս վոչ միայն այն, վոր աշխար-
հումս բացի մատերիալից ուրիշ վոչինչ չկա, վոր
«վոգին» մատերիալի (նյութի) արտահայտությունն ե
և ինքնուրույն գոյություն չունի, այլ և ցույց ե
տալիս, թե ինչպես այդ մատերիալիստական աշխարհը (դրա
մեջ՝ նաև մարդը) դիալեկտիկորեն փոփոխվում ե:
Աշխարհը, բնությունը—դա շարժվող մատերիա յե:

Մենք քննեցինք մատերիալիզմի եյությունը: Մենք
այժմ պետք ե սովորենք, թե ինչ ե դիալեկտիկան—
շարժման որենքն այն ամենի, ինչ գոյություն ունի:



ԴԻԱԼԵԿՏԻԿԱ

«Ամեն ինչ հոսում է յեզ փոփոխվում»:—Դիալեկտիկայի առաջին կանոններից մեկն ասում ե, վոր վոչինչ չկա անշարժ և անփոփոխ: Ընդհակառակը, ինչ ել վոր վերցնենք, մենք կնկատենք, վորդա գտնվում ե փոփոխությունների պրոցեսում: Յեթե մենք դիտենք մեր շուրջը գտնված բնությունը, յերկիրը իր ծովերով, լեռներով, անտառներով, արեր, աստղերը և այլն,—մենք կարող ենք (յեթե լավ ենք դիտում) նկատել, վոր վոչ մի բան շարունակ իր տեղում և միակերպ վիճակում չի գտնվում. ընդհակառակը, ամեն ինչ անդադար փոփոխվում ե: Այսպես, մեր յերկիրը մի ժամանակ յեղել ե հալ ընկած կրակե գունդ, իսկ ավելի առաջ—շիկացած գաղի հակայական քուլա: Այժմ նա բոլորովին այլ տեսքունի, քան առաջ եր: Ուրեմն յերկիրը շարունակ յենթարկվում ե փոփոխության, և նույնիսկ ներկայումս ել յերկիրը, ճիշտ ե՝ դանդաղ, բայց փոփոխվում ե: Նույն բանն ենք տեսնում բնության նաև ուրիշ յերեւութների մեջ, բույսերի և կենդանիների կյանքում:

Նույն բանն ե կատարվում նաև հասարակական կյանքի բնագավառում: Որինակ՝ մեզանում առաջ կարմիապետական-բուրժուական իրավակարգ և պաշտոնական*, իդեոլոգիան եր՝ իմապերիալիստական իդեոլոգիան, սեհարյուրակային, միապետական, տերե-

* Պաշտոնական—պետության կողմից, իշխող դասակարգերի կողմից ճանաչված:

րական իդեոլոգիան: Իսկ այժմ Խորհրդային իրավակարգ ե, իշխող իդեոլոգիան ե՝ պրոլետարական իդեոլոգիան: Իսկ այս վերջինն ել, իր հերթին, անփոփոխ մնում է հարկե, նա շարունակ հարստացվում ե, շարունակ զարգանում: Հետևապես—մշտական վոչինչ չկա, ամեն ինչ փոփոխվում ե, այլ դրություն ընդունում:

Բայց յերբ ուշադրությամբ դիտում ենք, մենք տեսնում ենք, վոր այդ փոփոխություններն ունեն ևս մեկ հետաքրքիր կողմ: ամեն մի յերևույթ, փոփոխվելով, այլ դրություն ընդունելով,—դառնում է հակադիր յերևույթ: նա իր առաջվա վիճակը կորցնում ու բոլորովին հակառակ տեսք ե ընդունում: Առարկաների, յերևույթների մեջ կատարվող փոփոխությունների հետևանքով դրանք վոչնշանում են, իսկ դրանց տեղը հայտնվում են, դրանցից ստեղծվում են ուղղակի հակադիր առարկաներ կամ յերևույթներ:

Մենք այդ ինչից ենք հետեւցնում: Նրանից, վոր մենք դիտում, քննում ենք: Ինչով ե վերջանում մարդկանց, կենդանիների և բույսերի կյանքը: Մահով: Ի՞նչ ե ստեղծվում մահացած կենդանիներից և բույսերից: Նոր կյանք: Ի՞նչը փոխարինեց պրոլետարիատին ճնշող կապիտալիստական պետությանը: Խորհրդային պետությունը, վորը ճնշում ե բուրժուազիային: Յեվ այլն և այլն:

Այդպիսով, ինչպես մենք տեսնում ենք, զարգացումն ընթանում ե վոչ թե ուղիղ գծով, այլ զիգզագ-ներով, պատյաներ գործելով, մեկ յերևույթից ստեղծվում ե մի ուղիղը, հակադիրը: Բայց այդ նորը վոչ



միայն հակադիր ե լինում նախկինին, այլ և սովորաբար հանդիսանում ե դեպի առաջ կատարված միքայլ, ավելի զարգացած, ավելի լավ։ Նա իր մեջ պահպանում ե այն, ինչ յեղել ե սկզբնական յերեվույթի մեջ, սակայն դա հարստացնում, լրացնում է։ Այսպես, որինակ, Խորհրդային պետությունը հանդիսանում ե բուրժուական պետության վեհ միայն հակադիրը, այլև—մարդկության զարգացման պատմության մեջ դեպի առաջ կատարված մի քայլ ե։ Եկանում ե, ի հարկե, նաև հետադարձ շարժում, յերբ նորը հանդիսանում ե դեպի յետ կատարված մի քայլ, և վոչ թե դեպի առաջ։

Դա—դիալեկտիկայի մյուս կողմն ե,—զարգացումն վոչ թե ուղիղ գծով, այլ զիգզագներով (պտույտներով), հակադիր յերկություներ ստեղծելով։

Եվոլյուցիա յեվ հեղափոխություն (ուկոլյուցիա)։—Բայց դա բոլոր չե։ պետք ե նաև ասել, վոր զարգացումն տեղի յե ունենում յերկու կերպ, յերկու ձևերով։ Որինակի համար՝ վերցնենք փոկը, վորը շարժումը կենտրոնական շարժիչից հաղորդում ե դադահին (այսպես կոչված՝ տրանսմիսիա)։ Շարժվելով, գլանի վրա պատվելով, նա հետզհետե մաշվում ե, ավելի բարակ և անդիմացկուն ե դառնում։ Սակայն գործում ե, մինչև վոր, վերջապես, հասնում ե ժամանակը և կտրվում է։ Այդ ամբողջ պրոցեսը հեշտ ե բաժանել յերկու մասի—1) նրա դանդաղ մաշվելը, 2) թոփչքները (ցատկումները), անցումն նոր՝ անֆաս դրությունից մինչև կտրվելը, փչանալը։ Հետեւապես աստիճանական դանդաղ փոփոխությունը փախարկվեց թոփչքով։

Նույնն ե նկատվում նաև հասարակական կյանքում։ Դանդաղ զարգացման ժամանակաշրջաններին* փոփոխություն են հեղափոխությունները, այսինքն հասարակական թոփչքները, վորոնցից նետո նորեն սկսում ե տեղի ունենալ դանդաղ, աստիճանական զարգացումը։ Այդպիսով, հասարակական կյանքը, ինչպես նաև բնության կյանքը, ցույց են տալիս վոր թոփչքները կազմում են զարգացման անհրաժեշտ մասը։

Դրա դեմ առարկում եյին այն մտածողները, վորոնք ժխտում եյին թոփչքակերպ փոփոխությունների գոյությունը և համենայն դեպս համարում եյին (յերբ նրանց մատնանշում եյին անսառարկելի փաստեր) թե դա պատահականություն ե, բացառություն, միանգամայն բնորոշ չե բնության և հասարակության կյանքի համար։ Նրանք իրենց թեորիան անվանեցին եվոլյուցիա, դրա տակ հասկանալով մի այնպիսի զարգացումն, վոր տեղի յե ունենում առանց վորեւ թոփչքների։

Այդ թեորիան ճիշտ չե։ Դա նկատի յե առնում յերեսույթների միայն մեկ կողմը, իսկ թոփչքակերպ փոփոխությունների անդադար հեղեղը դա չի նկատում։ Նման մոտեցումն բացատրվում ե նրանով, վոր բուրժուազիայի տիրապետող դասակարգին (վորին և պատկանում են այդ մտածողները) շահավետ չե այդ ուսմունքը թոփչքների մասին, հեղափոխությունը պատկանում է այդ ամբողջ պատահականությանը։

* Ժամանակաշրջան (պերիոդ, եպոխա) — վորոշ շրջան, վորը վորեւ բանով տարբերվում ե. որինակ՝ հականեղափոխության տիրապետության ժամանակաշրջան, պրոլետարական հեղափոխության ժամանակաշրջան, և այլն։

թյունների մասին, վորովհետև բուրժուազիան վախենում եւ բանվոր դասակարգի հեղափոխությունից:

Սակայն ի՞նչպիսի կապ կա եվոլյուցիայի և թըռիչքների միջև: Եվոլյուցիան նախապատրաստում եւ առում եւ հեղափոխություն: Դրանք վոչ միայն պարզ կերպով փոխարինում են իրար, այլև յուրաքանչյուր թոփչքին, խիստ փոփոխությանը նախորդում են նախապատրաստական աստիճանական փոփոխություններ: Վերցնենք այսպիսի որինակ: Կշեռքի մի նժարի մեջ ավագ լցնենք. քանի դեռ այդ ավաղը քիչ ե (թեթև ե)՝ մյուս նժարում դրած քարերի համեմատությամբ, կշեռքի մեջ վոչ մի փոխոփոխություն չի կատարվի, թեև լարվածությունը կշեռքի լժակի վրա հետզհետեւ կավելանա, մինչև վոր կշեռքը իր անշարժ վիճակից դուրս կդա և ավաղով լցված նժարը կսկսի ցած իջնել: Ավագի աստիճանական կուտակումն նախատարաստեց թոփչքի անցումն, անշարժ դրությունից շարժման մեջ դրեց նրան:

Յեթե դիտենք հասարակության կյանքը, ապա այդտեղ ևս նույնը կտեսնենք: Ռուսաստանում 1917 թ. հոկտեմբերին տեղի ունեցավ պլուետարական հեղափոխությունը: Միթե նա յերկնքից իջավ: Վոչ, մեր հեղափոխությունը նախապատրաստվել եր դասակարգերի փոխհարաբերությունների նախորդ դանդաղ զարգացումով. դրա հետևանքն արդեն յեղավ թոփչքը— հեղափոխությունը: Յերկար տարիների ընթացքում բանվորներն ու գյուղացիները տնտեսապես շահագործված և քաղաքականապես ձնշված եյին: Յերեք տասնյակ տարիների ընթացքում տարվում եր բան-

վոր դասակարգի մասսայական հեղափոխական պայքարը ընդդեմ բուրժուազիայի և միապետության: Այդ ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում ոռւս պրոլետարիատը կուտակում եր պայքարի իր արյունոտ փորձը, ստեղծում եր իր կոմունիստական կուսակցությունը:

Գյուղացիությունն ևս բազմիցս ապստամբել ե, զրանով ճգնելով թուլացնել այն դաժան լուծը, վոր ընկած եր նրա վրա (կալվածատիրական և կապիտալիստական շահագործումն, իրավազրկություն):

Իմպերիալիստական պատերազմը բանվորների և գյուղացիների ծանր վիճակն ել ավելի անտանելի դարձեց: Կապիտալի պետքերի համար գետերով հոսեց աշխատավոր ժողովրդի արյունը: Քաղաքներում գլուխ բարձրացրեց սովը: Գյուղում քայլայվեց տնտեսությունը, վորովհետև բացի 10—12 միլիոն մարդկանցից, պատերազմի պետքերի համար հետզհետեւ մեծ չափերով վերցնում եյին նաև անասուններ և այդպիսով գյուղում մնացածներին զրկում աշխատելու ու ապրելու հնարավորությունից: Քաղաքի արդյունաբերությունն ընկավ և չկարողացավ հոգալ գյուղի անդամ ամենալազ պահանջները: Բանակը հոգնել եր: Անդադար պարտությունները, կյանքի սարսափելի պայմանները, որեկան հազարավոր կյանքերի մահը... Ահա թե ինչը նախապատրաստեց (դանդաղ, որըսորե) այն պայթյունը, վոր մենք կոչում ենք Փետրվարյան հեղափոխություն—միապետության կործանման որը:

Այդ որինակից մեզ համար պարզ ե դիալեկտիկայի յերրորդ կողմը—մեկ յերեսույթ փոխվում

Ե մի ուրիշ յերկույթի՝ թռիչքներով, սակայն դրա նախապատրաստությունը կատարված է աստիճանաբար (եվոլյուցիոնանապարհով):

Այդպիսով մենք տեսանք, թե ինչպես են տեղի ունենում յերկույթների փոփոխությունները, բայց մենք չբացատրեցինք, թե ինչն է պատճառը այդ փոփոխությունների, թե ինչն է ստիպում վոր այդ փոփոխությունները կատարվին և թե ինչո՞ւ յեն կատարվում:

Հակասությունները մղում են առաջ:—Այդ ուժի դեր են կատարում զանազան յերկույթների փոփոխարձ հակասությունները կամ վորուել յերկույթի ներսում գտնված առանձին ելեմենտների* հակասությունները: Նախ բացատրենք, թե մենք հակասություններ բառի տակ ի՞նչ ենք հասկանում: Յեթե յերկու ուժեր (բնության կամ հասարակական) ճնշում են մի կետի վրա զանազան ուղղություններով, այդ դեպքում ասում են, վոր այդ ուժերը գտնվում են հակասության մեջ: Հակասություններ են նկատվում ամեն տեղ—և բնության մեջ, և հասարակության մեջ: Որինակի համար վերցնենք կենդանիների և բույսերի զարգացումը: Ամեն կենդանի և բույս յենթարկվում է շրջապատող ամբողջ մեռյալ ու կենդանի աշխարհի թշնամական ազգեցության: Այդ թշնամական ազգեցությունների գեմ նրա մղած պայքարից առաջանում է զարգացում՝ հետևյալ ճանապարհով. իրենց շրջապատին չհարմարվածները (մորթու վոչ ձեռնոու գույնը, վոր վատ և պաշտպանում թշնամինե-

* Ելեմենտներ—վորուել բանի բաղկացուցիչ մասեր:

րից, շարժման դանդաղությունը, արագաշարժ թշնամիները և այլն) չեն կարողացել դիմանալ և վոչնացել են. Մնացածները, իրենց շրջապատին քիչ թե շատ հարմարվածները, կարողացել են հաղթահարել, և առաջացրել են սերունդ: Այս վերջինները իրենց հերթին բաժանվել են ավելի կամ պակաս չափով հարմարվածների (իրենց շրջապատին) և այլն: Այդպիսով առաջ ե յեկել ժամանակակից կենդանիների և բույսերի ամբողջ բազմազանությունը:

Մարդկային հասարակության մեջ ևս մարդկանց խմբերի պայքարը, դասակարգերի պայքարը միշտ ել կազմել ե հետագա զարգացման պատճառ: Այսպես, որինակ, 150—200 տարի առաջ Յեվրոպայում գոյություն ուներ ֆեոդալական քաղաքական իրավակարգ, իշխանությունը ֆեոդալիզմի որոք պատկանում եր գյուղացիներին շահագործող խոշոր կալվածատերերինապնականներին: Գյուղացիները լիովին կախում ունեյին նրանցից, պարտավոր եյին մի շարք կոռ ու բեգար վճարել, իրենց տերերի հողերի վրա աշխատել և այլն: Յեվ գյուղացիական տնտեսության ամբողջ արդյունքը, բացառությամբ մի չնշին մասի, անցնում եր աղա-ֆեոդալին, վորին պատկանում եյին գյուղացիական հողերը:

Դեռ այն ժամանակ բուրժուազիան արդեն գոյություն ուներ. Նա ևս, ինչպես և գյուղացիությունը, անբավական եր ֆեոդալների տիրապետությունից, վորովհետեւ ֆեոդալները իրենց եյին վերցնում ժողովրդական յեկամուտների խոշորագույն մասը: Իսկ բուրժուազիան կամենում եր ի՞նքը շահագործել ժո-

Դովրդական մասսաները։ Այստեղից և—նրա պայքարը
ընդում հին, ֆեռդալական իրավակարգի։

Այդ ուժերն ել—բուրժուազիան և գյուղացիու-
թյունը—պայքարի միջոցով, հեղափոխության միջոցով
վոչչացը ին ֆեռդալիզմը, հողատեր-ազնվականների տի-
րապետությունը։ Ֆեռդալական իրավակարգը փոխարի-
նվեց ավելի առաջավոր՝ բուրժուական իրավակարգով։

Նույնպես և այժմ—իր դարը ապրած կապիտա-
լիստական իրավակարգը փոխարինվում է ավելի դար-
գացած, կոմունիստական իրավակարգով, և դա կա-
տարվում է պայքարի միջոցով, պրոլետարիատի կա-
պիտալիստների դեմ մղվող պայքարի միջոցով։

Նույնիսկ կոմունիստական հասարակության մեջ
պայքար կլինի։ Այնուղ տեղի չի ունենա պայքար
մարդկանց միջև, բայց հակասությունները և պայքարը
մարդկային հասարակության ու բնության սիջե՛
ինարկե կմնան։ Մարդը յերեք չի կարող դա վոչըն-
շացնել, մարդը միշտ ստիպված պիտի լինի աշխա-
տելու, վրապես զի բնությունից ստանա այն ամենը,
ինչ իրեն անհրաժեշտ ե։ Ուրեմն այն ժամանակ ևս
հակասության որենքը գոյություն կունենա։

Հակասությունը—մղում ե առաջ։ Պայքարը—
ամեն ինչի ծնողնեւ, —ահա ինչ ե ասում դիալեկտի-
կան, բացատրելով, թե ինչո՞ւ յե տեղի ունենում
գարգացումը թե բնության մեջ և թե հասարակա-
կան կյանքում։

Այդպիսով դիալեկտիկական որենքն այն
ամենի, ինչ գոյություն ունի, կամ, ինչպես սո-
վորաբար ասում են—դիալեկտիկան։ Պարզ ե, վոր
յեթե բնությունը և հասարակությունը գոյություն
ունեն ու զարգանում են համաձայն այդ որենքի,
ապա և նրանք պետք ե ուսումնասիրվեն համաձայն
դրանց։ Պետք ե ամեն մի յերեսույթ, վորը մենք հաս-

1) Անշարժ (կայուն, հաստատուն) և անփոփոխ
վոչինչ չկա. ընդհակառակը, ամեն ինչ հոսում ե և
փոփոխվում։

2) Ամեն տեսակի փոփոխություն կատարվում է
վոչթե ուղղակի կերպով, այլ զիգզագներով (պառյա-
ներով)։ Ամեն մի յերեսույթ փոխվում է հակադիր
յերեսույթի, այդ վերջինն ել իր հերթին շարունակում
է փոխել դարձյալ նույն կերպ, և այլն։ Բայ վորում
կատարվում է վոչ թե յետաղարձ (վերադարձ), այլ
շարժում՝ դեպ առաջ։

3) Մեկ յերեսույթ փոխարինվում է մի ուրիշով
այնպես, վոր դրանց մեջ կապը պահպանվում է (չի
լինում այնպես, վոր մեկ յերեսույթից առաջացած
մյուս յերեսույթի մեջ վոչ մի կապ չկանի)։ մեկ յերե-
վույթը վոչ թե ուղղակի փոխվում է մյուս յերեսույ-
թի, այլ վեր և ածվում այդ յերեսույթի։ Բայ վորում
առաջինում կատարվող դանդաղ փոփոխությունները
(եվլյուցիա) նախապատրաստում են արագ անցումն
(հեղափոխություն), թոփչք դեպի յերկրորդ յերեսույթը։

4) Դեպ առաջ կատարվող ամեն տեսակի շարժ-
ման պատճառը հանդիսանում է հակասությունների
պայքարը, տարբեր ուժերի բաղիսումը։

Այսպես ե զարգացման դիալեկտիկական որենքը
այն ամենի, ինչ գոյություն ունի, կամ, ինչպես սո-
վորաբար ասում են—դիալեկտիկան։ Պարզ ե, վոր
յեթե բնությունը և հասարակությունը գոյություն
ունեն ու զարգանում են համաձայն այդ որենքի,
ապա և նրանք պետք ե ուսումնասիրվեն համաձայն
դրանց։ Պետք ե ամեն մի յերեսույթ, վորը մենք հաս-

կանալ ենք կամենում, քննել դիալեկտիկական տեսակետից, պետք ե դիալեկտիկորեն մտածել։ Ուստի և մենք հետազում դիալեկտիկա կանվանենք վոչ միայն բնության մեջ ծանոթ որենքը, այլև նրա անդրադարձումն մեր գլուխներում, այսինքն՝ դիալեկտիկայի թեորիան։

Ի՞նչպես ե, որինակ, ընկ. Լենինը ուսումնասիրել կապիտալիզմը։

Ամենից առաջ, ընկ. Լենինը կապիտալիստական հասարակությունը դիտել ե վոչ թե վորպես մի սառած, հաստատուն, անփոփոխելի բան, այլ վորպես շարունակ փոփոխվող հասարակական յերևույթ։ Լենինը վորոնել և գտել ե նրա արմատները, քննել նրա փոփոխությունները, հետևել նրա հետազա զարգացման ուղին (դիալեկտիկայի առաջին գիծը)։

Բայց ինչ նշանակություն ունեցավ կապիտալիզմի զարգացման ուղիների ուսումնասիրությունը։ Ընկ. Լենինը այդպես վարվելով ուշադրություն դարձրեց այն բանի վրա, ինչը վոր պետք ե փոխարինե կապիտալիզմին, այսինքն՝ պրոլետարիատի դիկտատուրայի և կոմունիզմի վրա, վորոնք կապիտալիզմին ուղղակի հակադիր են։ Ըստ վորում նա տեսնում եր, վոր կոմունիզմը կապիտալիզմին վոչ միայն հակադիր ե, այլև նա վերցնում է կապիտալիզմից այն ամենը ինչ լավ ե (որինակ՝ զարգացած տեխնիկան) և վոր կոմունիզմը դեպ առաջ կատարվող մի քայլ ե։ Ահա դիալեկտիկայի յերկրորդ գիծը, վոր ընկ. Լենինին ողնեց ստեղծելու բանվոր դասակարգի աղատագրման իր թեորիան։

Բայց ընկ. Լենինը գիտեր, վոր կոմունիզմը միանգամից սահմանվել չի կարող. նա գիտեր, վոր գրան պետք ե նախորդի յերկար դանդաղ (Եվոլյուցիոն) նախալարաստական աշխատանք։ Հասարակական արտադրությունը նախ կնախապատրաստվի կապիտալիզմի որոք գոյություն ունեցող հսկայական զարգացմամբ։ Բանվոր դասակարգը թվով կավելանա, նրա աղքատությունը ել ավելի կմեծանա՝ բուրժուազիայի հարստությանը զուգընթաց։ Բազմաթիվ կոփվերը նրան կոռում կոփում են և նրանից ստեղծում վճռական և ուժեղ մարտնչող ընդդեմ կապիտալիզմի։ Միայն այդ ժամանակ կսկսվի պրոլետարական հեղափոխությունը։ Բուրժուական իրավակարգի հակասությունների, պրոլետարիատի գիկտատուրայի, վորը հանդիսանում է մի աստիճան դեպ կոմունիզմը (դիալեկտիկայի յերրորդ գիծը)։

Այսպես դիալեկտիկորեն գնահատելով այն նախապատրաստությունը, վոր կապիտալիզմի հետևանքով տեղի յե ունենում հոգուտ պրոլետարական դիկտատուրայի և կոմունիզմի, ընկ. Լենինը մղում եր համապատասխան պայքար։ Նա ամեն կերպ ոգնում եր բանվոր դասակարգի զարգացման գործին, աշխատում եր այդ արագացնել, բայց նա յերբեք իրեն նպատակ չի դրել արհեստականորեն հեղափոխություն առաջ բերել, Վորովիչետե նա գիտեր, վոր արհեստական հասարակական թոփչք, այսինքն արհեստական հեղափոխություն ստեղծել չի կարելի։ Ամեն մի հեղափոխություն պետք ե նախապատրաստվի զրան նախորդող զարգացումով։

Մյուս կողմից, յելնելով այդ նույն դիալեկտիկայից, ընկ. Լենինը անխնա պայքարում եր այն դեկավար-դավաճանների դեմ, վորոնք հեղախոխությունը ժխտում եյին; Նրանք պնդում եյին, վոր կապիտալիզմը կոմունիզմով կփոխարենվի հետզհետե, այսպես ասած՝ քայլ առ քայլ: Հեղափախությունը ավելորդ ե: Եվլուցիոն ուղին ավելի հաստատ կհասցնի կապիտալիզմի վոչնչացման:

Ընկ. Լենինը կծու կերպով ծաղրում եր այդ կեղծ-սոցիալիստներին: Նա ապացուցում եր, վոր նրանք դիալեկտիկան ու հեղախոխությունը ժխտում են, վորովհետև իրոք պաշտպանում են բուրժուազիայի շահերը: Վերջինիս համար սարսափելի չեն բանվոր դասակարգի դրության մասնակի զանազան բարփությունները կապիտալիզմի որոք. բուրժուազիան յերբեմն նույնիսկ հաճույքով համաձայնվում ե դրանքանվորական առանձին խավերին կապելով գոյություն ունեցող իրավակարգի հետ: Բայց բանվոր դասակարգը այդ ճանապարհով յերբէք չի աղատագրվի շահագործումից: Լավագույն դեպքում նա կարող է միքիչ բարելավել իր դրությունը. միաժամանակ հըսկայական չափերի կհասցվեն բուրժուազիայի հարըստությունները: Միայն հեղափոխությունը կարող է բուրժուազիային ընկճել, վորովհետև բուրժուազիան առանց կովի իր ձեռքից յերբէք բաց չի թողնի ֆարբիկաներն ու գործարանները—բանվորներին շահագործելու միջոցները:

Ընկ. Լենինը դիալեկտիկայի այդ կողմն ել այդպես եր կիրառում՝ հասարակական կյանքը քննելիս:

Այստեղ մենք անցնում ենք դիալեկտիկայի մեկուրիշ կողմին—ուժերի պայքարին: Ընկ. Լենինը յերբեք չեր մոռանում, վոր պայքարը այն միակն ուժն ե, վոր մզում ե դեպի առաջ: Նրա համար բանվոր դասակարգի կոփվը ընդգեմ բուրժուազիայի նշանակում եր վոչ թե անկարգություն կամ սխալ, ինչպես այդ կարծում եյին բուրժուական պրոֆեսորները կամ բուրժուազիային անձնատուր յեղած սոցիալ-դեմոկրատ-մենցիկները: Դասակարգերի պայքարը հասարակության ներսում կապիտալիզմի որոք ընկ. Լենինի համար ներկայանում եր հասարակության դասակարգային կառուցման միանգամայն բնական արդյունքները: Այստեղ, ուր կան դասակարգեր, այնտեղ անհրաժեշտորեն ծագում ե պայքար այդ դասակարգերի միջև: Պայքարը վերացնելը՝ յերբ գոյություն ունենակարգեր՝ ձեռնատու յե միայն տիրապետող դասակարգերին: Ընկ. Լենինը այդ պայքարի առիթով վոչ թե արցունք եր թափում՝ ինչպես քաղքենի-մենցիկները, այլ քննում և ցույց եր տալիս, թե ինչպես այդ պայքարը կհասցնի և հասցնում ե կապիտալիզմի կործանման, պրոլետարիատի դիկտատուրային:

Այդ որինակից մենք տեսնում ենք, թե դիալեկտիկան ինչ հակայական ոգուտ ե տալիս բանվոր դասակարգին՝ յեթե դա հմտորեն և ուղիղ կիրառվի: Զպետք ե կարծել, վոր Լենինը միայն այդ դեպում եր կիրառում դիալեկտիկան: Նա ամեն բան ուսումնասիրելիս մտածում եր դիալեկտիկորեն: Դա հասկանալի յե, քանի վոր դիալեկտիկան զարգացման որենքն:

Ե այն ամենի, ինչ գոյություն ունի: Հետևապես, այդ բոլորը հասկանալ կարելի յէ միայն այն գեղքում, յերբ մոտեցումը դիալեկտիտական է, այսինքն յերբ մտածում ես դիալեկտիկորեն:

Տկա՛ վոյինչ անջատ: — Մեր բացատրությունը լիկ չի լինի, յեթե կանգ չառնենք դիալեկտիկայի հետևյալ յերկու կողմերի վրա ևս: Յենթազրենք թե մենք ցանկանում ենք ուսումնասիրել վորեւ մարդու: Կարելի՞ յէ այդ անել՝ քննելով միմիայն նրան և ուրիշ վոչ վոքի ի նկատի չունենալ, ուրիշ վոչնչով չհետաքրքրվել: Ի հարկե վոչ: Չե՛ վոր նրա վրա աղդեցություն են գործում բազմաթիվ զանազան հանգամանքներ—և ընտանիքը (վորտեղ նա մեծացել և ապրում է), և դասակարգը (վորին նա պատկանում է), և գոյություն ունեցող իրավակարգը, և դասակարգային պայքարը, և ժամանակակից դիտությունը, և գեղարվեստը, և ելի ուրիշ բազմաթիվ յերեսույթներ: Ուրեմն նույնիսկ առանձին մարդուն ուսումնասիրելիս պետք է նկատի ունենալ հսկայական քանակությամբ այնպիսի յերեսույթներ, վորոնք այսպես թե այնպես կապված են նրա հետ: Այստեղից և հետևում է այն յեղակացությունը, վոր ամեն ինչից անջատ (այսինքն վոչ մի բանի հետ կապ չունեցող) վոչինչ չկա, —ամեն բան, ամեն յերեսույթ հազարավոր թելերով կապված է մեսած աշխարհի հետ:

Մարքսի դիալեկտիկան, —գրում ե լենինը, —լինելով գիտական-եվլյուցիոն մեթոդի վերջին խոսքը, արգելում ե (դեմ ե) անջատումն, այսինքն՝ առարկայի կամ յերեսույթի միակողմանի և սխալ, աղավաղ-

ված քննությունը, ուսումնասիրությունը: Դիալեկտիկան պահանջում ն հաշվի առնել բոլոր կապերը, բոլոր հանգամանքները:

Այդ ուղղությամբ, դիալեկտիկայի կիրառման հրաշալի որինակ ե տվել ընկ. Լենինը Բրեստի հաշտության ժամանակ. դա հիշատակենք, վորպես համանման բազմաթիվ դեպքերից մեկը: —

Ինչպես հայտնի յէ, 1918 թվի սկզբին գերմանական իմպերիալիզմը մեր Խորհրդային իշխանությանը առաջարկեց հաշտության չափազանց ծանր պայմաններ: Շատ շատերը այն կարծիքն ելին, վոր այդպիսի ծանր պայմանները ընդունելի չեն, վոր այդ՝ ինչպես այն ժամանակ ելին ասում՝ «ստորացուցիչ» հաշտությունը վոչ մի դեպքում չպետք ե ստորագրել, քանի վոր դա համազոր կիներ ճորտացման և հեղափոխության կործանման:

Լենինը, ընդհակառակը, պնդում եր վոր հաշտությունը կնքվի՝ ինչ գնով ել լինի, միայն թե գերմանական իմպերիալիզմը չվոչնչացներ Խորհրդային իշխանությունը: Նա ապացուցում եր, վոր մեր Խորհրդային յերիտասարդ հանրապետությունն այն ժամանակ պատերազմել չեր կարող: Անհրաժեշտ եր դադար առնել, վորպեսզի մենք կարողանայինք կարգի բերել բանակն ու տնտեսությունը: Այժմ խոսել պատերազմի մասին—ապացուցում եր լենինը—դա նշանակում ե՝ կովի դուրս գալ կարտոնե սրով, պարապել հեղափոխական ֆրազներով և վոչ թե հեղափոխական գործով:

Իսկ ինչու ընկ. Լենինը այդպես համոզված եր ասում այն մասին, վոր կոփիլ գերմանական իմպե-

բիալիդմի դեմ պետք է հետաձգել և առայժմ՝ համաձայնվել այդ «ստորացուցիչ», ծանր հաշտությանը։ Վորովինետև նա դատում եր դիալեկտիկորեն։

Նա մտածում եր. պատերազմել այժմ—կնշանակի հեղափոխությունը անվերադարձ կործանել։ Բայց միթե Բրեստի հաշտությունը չի կործանում հեղափոխությունը՝ դնելով ճորտական ծանր պայմաններ։

Վոչ,—պատախանում եր նա: Չի կարելի անջատ վերցնել միայն Խորհրդային Ռուսաստանի և Գերմանիայի հարաբերությունները։ Աշխարհում ամեն բան կապված են իրար։ Յեվ Գերմանիայի, և Խորհրդային Ռուսաստանի դրությունը, և նրանց հարաբերությունները կախում ունեն ուրիշ շատ հանգամանքներից, և ամենից առաջ՝ իմպերիալիստական սպանդանոցի յելքից։ Գերմանիայի դիրքը փայլուն չե, նրա պարտությունը մոտիկ ապագայում շատ հնարավոր ե, — ֆրանսիական, անգլիական և ամերիկական իմպերիալիզմը նրան չեն խնայիլ։ Բրեստի հաշտությունը ել ավելի յեռանդուն պայքար ե ստեղծելու ընդդեմ իմպերիալիստական Գերմանիայի՝ հնարավորություն տալով ուրիշ յերկրների իմպերիալիստաներին սպեկուլյացիայի առարկա դարձնալու այն նեղումներն ու ճնշումները, վորոնք Գերմանիայի հաղթության դեպքում սպասում են ուրիշ ժողովուրդներին, և այլն։

Յեվ ի՞նչ։ Լենինյան դիալեկտիկան հաղթեց, Գերմանական իմպերիալիզմը պարտություն կրեց ուրիշ յերկրների իմպերիալիստաների կողմից, Գերմանիայում պոռթկաց հեղափոխություն և Բրեստի «ստորացուցիչ» հաշտությունը 1918 թվի նոյեմբերին վոչնչաց-

վեց։ Խորհրդային Ռուսաստանը փրկվեց։ Բոլոր հանգամանքների հաշվառումն հնարավորություն տվեց գտնելու ուրիշ ճանապարհ։ Միակողմանի, անջատ քննությունը, դատողությունը կարող եր կործանիչ լինել։

Մենք այստեղ ևս տեսնում ենք, վոր դիալեկտիկան իւրացիորեն կիրառելը ոգնում ե լուծելու ամենադժվար խնդիրները, վոր պատմությունը դնում ե մարտնչող պրոլետարիատի առաջ։

Վերացական աշխարհություն յկա, աշխարհությունը կոնկրետ է։ Հենց այդ որինակով մենք մոտենում ենք դիալեկտիկայի մեկ կարևոր հատկությանը, վորի կիրառումը կազմում եր ընկ։ Լենինի և կոմունիստական կուսակցության հսկայական ուժը։ Դա այն որենքն ե, վոր ասում ե — արարակա (վերացական) ճշմարտություն չկա, ճշմարտությունը միշտ կոնկրետ ե։

Բուրժուական պրոֆեսորները, ընդհակառակը, աշխատում են հորինել այնպիսի որենքներ, վոր պետքական լինեն բոլոր ժամանակների և բոլոր ժողովուրդների համար — ընդհանուր վերացական որենքներ։

* Կոնկրետը արստրակտից (կամ վերացականից) տարրերվում ե նրանով, վոր դա նշանակում ե առանձին յերեվությն իր բոլոր կողմերով, իսկ արստրակտը (կամ վերացականը) — մեկ կողմն ե՝ սակայն շատ յերեսությների։ Որինակ, կուսակցության ավյալ անդամ X-ը — դա կոնկրետ ե, իսկ կուսակցության անդամներն ընդհանրապես — դա վերացական ե (կամ արստրակա), և կամ՝ բոլոր մարդիկ քայլում են — դա ընդհանուր կամ վերացական որենք ե։ Ընդհակառակի որենք ե։

Նրանք միենույն տեսակետով են քննում մարդկության կյանքի բոլոր գանազան եպիսակաները (ժամանակաշրջանները):

Նրանք այդ իզուր չեն անում. նրանք ցանկանում են ապացուցել, վոր կապիտալը, այսինքն՝ մի խմբակի տիրապետությունը միլիոնների վրա և բուրժուական իրավակարգի ուրիշ շատ հրաշալիքները միշտ ել գոյություն են ունեցել, ուրեմն և այսուհետեւ ևս պետք է շարունակեն գոյություն ունենալ: Ուրիշ խոսքով, նրանք ճգնում են կապիտալիստական իրավակարգը ամրապնդել:

Բայց իրականաւթյունը դրա հետ չի հաշտվում: Իրականության մեջ մենք տեսնում ենք, վոր բուրժուական այդ հավիտենական, արտարակտ ճշմարտությունները գրոշ չարժեն: Այն, ինչը ուղիղ եր մի վորոշ տեղում և մի վորոշ ժամանակում, այն դուրս ե գալիս կեղծ և սխալ՝ մի ուրիշ ժամանակում և մի ուրիշ տեղում: Հետևապես, ամեն մի յերևույթ մենք պետք ե ուսումնասիրենք իր առանձնահատկություններով, պետք ե հաշվի առնենք այն ամենը, ինչով նա տարբերվում ե ուրիշներից, պետք ե հաշվի առնենք, թե ավյալ մոմենտում ինչպիսի հարաբերությունների մեջ ե գտնվում իրեն շրջապատի նկատմամբ և այլն:

Ընկ. Լենինը ընդհանրապես խիստ կարևոր եր համարում այս ուսմունքը (այսինքն ուսմունքն այն մասին, վոր ճշմարտությունը միշտ կոնկրետ ե): Նա այդ շարունակ կիրառում եր: Բրեստի հաշտության գործում դա արգեն պարզ յերևաց: Այն հարցին,

թե արդյոք կարելի յե, վոր հեղափոխական յերկիրը գործարքի մեջ մտնի իմպերիալիզմի հետ, միթե դա չեր նշանակի՝ դավաճանել համաշխարհային պրոլետարիատի պայքարին: Ընկ. Լենինը դրան մատասխանում եր՝ նայած թե յերբ, վիրտեղ, ինչ պայմաններում: Յերբեմն չի կարելի, յերբեմն ել վոչ միայն կարելի յե, այլ և պետք ե: Յերբ (ինչպես Բրեստի ժամանակ) դրվում եր այսպիսի հարց—կամ գործարք, կամ Խորհրդային Հանրապետության կործանումն, — կարելի յեր և պետք եր գործարքի մեջ մտնել: Դա չի նշանակում՝ դավաճանել պրոլետարական գործիքներին: Իսկ յեթե, որինակ, գերմանական մենշևիկները գործարքի մեջ են մտնում համաշխարհային իմպերիալիզմի հետ՝ դրանով ստրկացնելով Գերմանիայի բանվոր դասակարգը—ապա դրանք սրիկաներ և դավաճաններ. են: Յեկալին: Միենույն գործողությունները տարբեր պայմաններում կարող ե ճիշտ գնահատություն ե տալիս այն ամենին, ինչ կա, գոյություն ունի, ինչպիս և այն ամենին, ինչ պատրաստվում ե ստեղծվել գոյություն ունեցող պայմաններից: Մի խոսքով, նա, ուսումնական, կարող ե առաջորեն տեսնել, թե ինչպես կդասավորվեն պայմանները ապագայում, վորովհետեւ նա գիտե զարգացման որենքը, իսկ հայտնի

Այդպիսով մենք ընդգծեցինք դիալեկտիկայի բոլոր կարևոր կողմերը: Այժմ պարզ ե, վոր նա հեղափոխական ամենապուժեղ գործիքն ե: Բանվոր դասակարգը նրա ոգնությամբ կարող ե ճիշտ գնահատություն տալ և ճիշտ գնահատություն ե տալիս այն ամենին, ինչ կա, գոյություն ունի, ինչպիս և այն ամենին, ինչ պատրաստվում ե ստեղծվել գոյություն ունեցող պայմաններից: Մի խոսքով, նա, ուսումնական, կարող ե առաջորեն տեսնել, թե ինչպես կդասավորվեն պայմանները ապագայում, վորովհետեւ նա գիտե զարգացման որենքը, իսկ հայտնի

յե, վոր ով զիտե՞նա իր մեջ ուժ ե զգում, նա զորեղ
ե, ով առաջորեն տեսնում ե՝ նա իր թշնամիներից
միշտ ել ուժեղ դուրս կցա:

Միայն թե չպետք ե կարծել, վոր, իմանալով
դիալեկտիկան—արդեն ամեն ինչ զիտես: Ընդհակա-
ռակը, զիտեկտիկան պահանջում ե խիստ ուշադիր
կոնկրետ ուսումնասիրություն: Նա պահանջում ե,
վոր ամեն մի յերևոյթ ուսումնասիրվի առանձին,—
միայն այդ դեպքում կարելի յե ասել թե ինչպես և
վորտեղ նա կփոփոխվի: Կարելի յե ասել, վոր դիա-
լեկտիկան բանալի յե տալիս բոլոր դաների համար,
բայց ամեն մի կողպեքին պետք ե մոտենալ այդ բա-
նալիով ուրիշ տեսակ: Ի՞նչպես: Դա մեզ ցույց կտա
ինքը ամեն մի կողպեքին առանձին:

Վոյ միայն բացատրել, այլ եվ վորփոխել:—Վերև
գրածին մենք պետք ե ավելացնենք նաև հետեւյալը:
Մատերիալիստական դիալեկտիկան, այսինքն մարք-
սիզմը, այնպիսի թեորիա չե, վոր միայն նկարա-
գրում ե աշխարհը: Նա—դեկավարություն ե՝
գործողության համար: Բանվոր դաստիարդի ինդիրը
կայանում ե վոչ թե նրանում, վոր նկարագրի իր ժա-
մանակակից կապիտալիստական հասարակությունը, այլ
նրանում, վորպեսզի նա այդ հասարակությունը փոփոխի:
Պրոլետարիատը կապիտալիզմը ուսումնասիրում ե վոչ
միայն նրա համար, վոր դա զիտենա. Նա այդ ուսում-
նասիրում ե ամենից առաջ նրա համար, վորպեսզի
հենց դրանում գտնի ուղիներ՝ կոմունիզմի համար,
ուղիներ՝ ամեն տեսակի շահագործում վոչնչացնելու
համար:

Ահա թե ինչու Մարքսը ասել ե, վոր «փիլիսոփա-
ները մինչև այժմ միայն բացատրել են աշխարհը,
իսկ պրոլետարիատի խնդիրը կայանում ե նրանում,
վոր նա դա փոփոխի»: Ահա այդ մտքի մեջ ե և
Մարքսի և Լենինի ուսմունքի ամբողջ եյությունը:

Յեթե դա այդպես ե, ապա մեզ համար ավելի յե
պարզ դառնում, թե թեորիան բանվոր դաստիարգի
պայքարի մեջ ինչպիսի դեր ե կատարում: Նա չոր
ու ցամաք վերացական դատողությունների հավաքա-
ծուից դառնում ե ամբողջ մարդկությունը վերակա-
ռուցելու գործիք: «Առանց հեղափոխական թեորիայի—
ուղարկում ե Լենինը—չի կարող լինել և հեղափոխական
զրում»: Դրա համար ել նա անխնա պայքարում
եր այն ամենի դեմ, ովքեր հեղափոխական թեորիայի
դերը բանվոր դաստիարգի համար նվազեցնում եին
և աղավաղում:

Յերբ ընկ. Լենինին ասում եյին—բայց չե վոր
բանվորը առանց են ել հասկանում ե, թե ով ե իր
թշնամին և թե ինքը ինչպես պետք ե կովի նրա
դեմ,—ընկ. Լենինը դրան պատասխանում եր—այդ
միշտ ե, բայց այդ քիչ ե: Բանվորը յերկար ժամա-
նակ կպարտի և սխաներ կգործի՝ յեթե նրան չոգնի
պրոլետարիատը հեղափոխական պարզ թեորիան: Բան-
վորական մասսաների տարերային շարժումը հարկա-
վոր ե միացնել հեղափոխական թեորիայի հետ,—այդ
դեպքում դա անպարտելի կդառնա: Անգամ ամենա-
լավ թեորիաները անուժ են՝ յեթե դրանք գտնվում
են միայն զրքերի մեջ: Բայց և բանվորների ահազին
մասսաներ գործում են աչքերը կապած՝ յեթե նրանք

տեղյակ չեն հեղափոխական թեորիային։ Թեորիան դառնում է ուժ՝ յերբ միանում է բանվորների մասսաներին, իսկ բանվորների մասսաները ամեն ինչ հաղթահարում են՝ յերբ իրենց ճանապարհը պայծառ լուսավորում է հեղափոխական թիորիան։

Անա թե ինչու ընկ, Լենինը այդպիսի մեծ նշանակություն եր տալիս պրոլետարական թեորիայի գարգացմանը և այդ թեորիան բանվորական ամենաւլայն խավերում պրոպագանդ անելուն, վորովհետև առանց դրան՝ հնարավոր չե հեղափոխություն։ Իսկ պրոլետարական հեղափոխության պատրաստման և դրա իրագործման մեջ ե կայանում հեղափոխական դիմեկտիկական մատերիալիզմի — պրոլետարական փիլիսոփայության եյությունը։

II

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Դիալեկտիկական մատերիալիզմը բնության և մարդկային հասարակության գարգացման ընդհանուր որենքն ե։ հետևապես նրա ողնությամբ պետք է ուսումնասիրել թե մեկը և թե մյուսը. այսինքն նա մի միջոց է, վորով պետք է ուսումնասիրել թե բնությունը և թե հասարակությունը։ Այդ միջոցի կիրառումն մարդկային հասարակության ուսումնասիրության խնդրում — կրում է պատմական մատերիալիզմ՝ անունը։ Այդպես ե կոչվում, վորովհետև պատմական մատերիալիզմը մարդկային հասարակությունը ուսումնասիրում է մատերիալիստական տեսակետից, այսինքն յելակետ ե ընդունում վոչ թե «վոգին», այլ մատերիան (նյութը), վոչ թե մարդկանց գիտակցությունը, այլ նյութական արտագրությունը։ Մենք հետո կտեսնենք, թե դա ինչպես ե կատարվում։

ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ։ ԱՐՏԱԴՐՈՂ ՈՒԺԵՐ.

Մարդկային հասարակությունը յերկար պատմություն ունի։ Հարյուր հազարավոր տարիներ առաջ են մարդիկ տարբերվել մնացած կենդանական աշխարհից, Այդ ժամանակից շարունակ փոխվել են նրանց

աշխատանքի գործիքները, փոխադարձ հարաբերությունները, բարքերը, գիտելիքները և այլն։ Բայց մի քան անփոփոխ ե մնացել, դա — մարդկային աշխատանքի փաստն ե։ Փոխվել են պայմանները, փորոնց մեջ մարդիկ աշխատելիս են յեղել, փոխվել են մարդկանց փոխարաբերությունները, բայց ինքը մարդկային աշխատանքը մնացել ե, վորովհետև աշխատանքը մարդկային հասարակության կյանքի անկապտելի մասն ե։ Յերբեք չի յեղել և չի լինի մարդկային հասարակության այնպիսի կազմակերպություն, վորտեղ մարդիկ աշխատած չլինելին կամ վորտեղ մարդիկ չաշխատեն։

Դա միանգամայն հասկանալի կլինի, յեթե մենք հիշենք, թե ի՞նչ ե կատարվում մարդկային աշխատանքի հետ։

Աշխատանքի միջոցով մարդիկ բնությունից ստանում են այն ամենը, ինչ իրենց անհրաժեշտ ե — կերակուր, նյութեր՝ հագուստի, բնակարանի և իրենց բաղմազան պետքերի համար։ Բայց այն ամենը, ինչ մարդիկ բնությունից ստանում են, դա այս կամ այն կերպ գործ են ածում, — հացը ուտվում ե, յերկաթը մաշվում, փայտը փառում և այլն։ Ուրեմն բոլոր առարկաները կամաց-կամաց վոչնչանում են և պահանջվում ե վոր զբանք փոխարինվեն նորերով։ Այդպիսով, հասարակությունը շարունակ կարիք ունի, վորպես զի բնությունից անդադար ստացվին հարկավոր նյութն ու եներգիան, վոր փոխարինեն այն ամենին, ինչ մարդիկ գործ են ածում ու սպառում։ Տեղի յե ունենում, այսպես ասած, իրերի փոխանակություն՝ բնու-

թյան և հասարակության միջև, ճիշտ նույնալիսի փոխանակություն, ինչպիսին տեղի ունի առանձին մարդու մեջ։ մի շարք նյութեր են առնվում, մյուսները դուրս գնում, և այդ պլոցեսը (այդ շարժումը) կազմում է թե՛ առանձին մարդու և թե ամբողջ հասարակության կյանքի հիմքը։

Նույն ենք նկատում կենդանիների մոտ։ Նրանք և բնության հետ նյութերի փոխանակություն են կատարում։ Յեվ այդ բանում մարդը կենդանական աշխարհից չի տարբերվում։ Դա միանգամայն հասկանալի յե, վորովհետև ինքը մարդը ծագել ե կենդանական աշխարհից, նրա մարմնի որգանները ընդհանուր առմամբ կազմված են այսպես, ինչպես կենդանիներինն ե։ Տերտերական հեքիաթներն այն մասին, վոր մարդկային բնությունը բոլորովին այլ ե քան կենդանիներինը — հիմար և սխալ բաներ են։

Մարդու սարքերությունը կենդանուց։ Աշխատանքի գործիքների դերն այդ խնդրում։ — Բայց այստեղ վորոշ և եյական տարբերություն կա։ Դա բացատըրվում ե այն հատուկ պայմաններով, վորոնց մեջ մարդս ստիպված ե ապրելու դեռ շատ վաղ ժամանակներից։

Տարբերությունը կայանում ե նրանում, վոր կենդանիները իրենց համար անհրաժեշտ բանը բնությունից ստանում են անմիջականապես իրենց մարմնի բնական մասերով, ինչպես են՝ կտուց, ստամեր, մագիկներ։ Իսկ մարդն այդ անում ե գործիքների միջոցով, ինչպես են՝ փայտ, կացին, հրացան, մեքենա։ Զեռքի ու նյութի (վոր նաև արտադրում ե իր պետքերի համար) միջև մարդը դնում ե գործիքը

և դրանով շատ անգամ ավելացնում իր գորությունը։ Այստեղ ե ահա նրա գլխավոր տարբերությունը մնացած կենդանական աշխարհից։ Մարդը — կենդանի յե, բայց այնպիսի կենդանի, վորը գործիքները ե շինում և դրանք իր աշխատանքի մեջ գործադրում։ Առանց իր արհեստական գործիքների մարդկային հասարակությունը գոյություն ունենալ չի կարող։

Բայց չե վոր շատ առաջ, հարյուր հազարավոր տարիներ առաջ, մարդս իր կերակուրը ձեռք եր բերում ճիշտ այնպես, ինչպես և մյուս կենդանիները*։

Ի՞նչպես ե կատարվել անցումն կենդանուց դեպի մարդը։ — Ի՞նչպես ե մարդս անցել գործիքների ոգտագործման։ Այժմ ել կարելի յե դիտել, վոր կապիկների զանազան ցեղեր այս կամ այն դեպքում, կերակուր ձեռք բերելու կամ թշնամիներից՝ պաշտպանվելու համար գործ են ածում փայտ կամ քարեր։ Բայց նրանց համար այդ փաստը յերկրորդական կամ յերրորդական նշանակություն ունի։ Նրանք իրենց համար հարկավոր կերակուրը ձեռք են բերում գլխավորապես իրենց մարմնի բնական մասերով։ Յերկի ճիշտ այդպես են վարվել նաև մեր հեռավոր նախնիքները։ Բայց կյանքի վատթարացող պայմանները (կիմայի փոփոխությունը, մարդաբնակ անտառների այրվելը և այլն) ստիպել են նախնական մարդկանց ավելի ու ավելի հաճախ գործադրել իրենց սաղմային

* Գիտությունը ապացուցել է, վոր ժամանակակից կապիկները և մարդիկ առաջացել են մեկ ընդհանուր նախնիքից՝ մարդկապիկից։

գործիքները (ճյուղեր, քարեր, պտուղներ), մինչև վոր դա հասցըել ե գործիքների մշտական ոգտագործման։ Այդ փոփոխությանը նպաստել են յերկու հանդամանք.

1) Քանի վոր մեր նախնիքները սկզբում հավանաբար ապրելիս են յեղել անտառներում, ապա և նրանց առաջի թաթերը, վորոնցով նրանք ստիպված պիտի լինելին մազլցելու ծառերի վրա, շատ ավելի պարզացած պիտի լինելին, քան յետելի թաթերը։ Դա համարակիրություն ե տվել գործիքներ գործածելուն քիչ թե շատ հեշտությամբ հարմարվելու։

2) Մարդիկ յերբեք չեն ապրել զատղատ (միայնակ) կամ զույգերով։ Ընդհակառակը, նրանք կազմել են խմբեր և ապրել մի քանի տասնյակներով՝ մինչև գործիքների մշտական գործածությունը։ Առանց այդպիսի հասարակական կյանքի, ինարկե, գործիքների մշտական գործածությանը անցնելը և դրանց հետագա զարգացումն համարավոր չեր լինի։ Հարկավոր եր ունենալ շատ մարդկանց և շատ սերունդների փորձը, վորապես զի կարելի լիներ մի փոքրիկ քայլ անել դեպի առաջ։ Իսկ նման փորձը և նրա կուտակումը կարող ելին տեղի ունենալ միայն կոլեկտիվի մեջ, խմբի մեջ։

Ահա այս ամենից հետո կատարվեց անցումն կենդանական կյանքից դեպի մարդկային կյանքը, այսինքն՝ նրան, վոր մարդս իր գոյությունը պահպանելու համար հարկավոր միջոցները սկսեց ձեռք բերել արհեստական գործիքների ոգնությամբ։

Սկսած այն ժամանակից, յերբ մեր նախնիքները սկսեցին միշտ գործածել աշխատանքի գործիքներ,

և դրանով շատ անգամ ավելացնում իր գորությունը։ Այստեղ ե ահա նրա գլխավոր տարբերությունը մնացած կենդանական աշխարհից։ Մարդը — կենդանի յե, բայց այնպիսի կենդանի, վորը գործիքներ ե շինուած և գործանք իր աշխատանքի մեջ գործադրում։ Առանց իր արհեստական գործիքների մարդկային հասարակությունը գոյություն ունենալ չի կարող։

Բայց չե վոր շատ առաջ, հարյուր հազարավոր տարիներ առաջ, մարդս իր կերակուրը ձեռք եր բերում ճիշտ այնպես, ինչպես և մյուս կենդանիները*։

Ի՞նչպես ե կատարվել անցումն կենդանուց դեպի մարդը։ — Ի՞նչպես ե մարդս անցել գործիքների ոգտագործման։ Այժմ ել կարելի յե դիտել, վոր կապիկների զանազան ցեղեր այս կամ այն դեպքում, կերակուր ձեռք բերելու կամ թշնամիներից՝ պաշտպանվելու համար գործ են ածում փայտ կամ քարեր։ Բայց նրանց համար այդ փաստը յերկրորդական կամ յերրորդական նշանակություն ունի։ Նրանք իրենց համար հարկավոր կերակուրը ձեռք են բերում գլխավորապես իրենց մարմնի ընական մասերով։ Յերեկ ճիշտ այդպես են վարվել նաև մեր հեռավոր նախնիքները։ Բայց կյանքի վատթարացող պայմանները (կլիմայի փոփոխությունը, մարդաբնակ անտառների այրվելը և այլն) ստիպել են նախնական մարդկանց ավելի ու ավելի հաճախ գործադրել իրենց սաղմային

* Գիտությունը ապացուցել է, վոր ժամանակակից կապիկները և մարդիկ առաջացել են մեկ ընդհանուր նախնիքից՝ մարդկապիկից։

գործիքները (ճյուղեր, քարեր, սլատուղներ), մինչև վոր դա հասցըրել ե գործիքների մշտական ոգտագործման։ Այդ փոփոխությանը նպաստել են յերկու հանգամանք։

1) Քանի վոր մեր նախնիքները սկզբում հավանաբար ապրելիս են յեղել անտառներում, ապա և նրանց առաջի թաթերը, վորոնցով նրանք ստիպված պիտի լինելին մազլցելու ծառերի վրա, շատ ավելի զարգացած պիտի լինելին, քան յետեկի թաթերը։ Դա հնարավորություն ե տվել գործիքներ գործածելուն քիչ թե շատ հեշտությամբ հարմարվելու։

2) Մարդիկ յերեք չեն ապրել զատ-զատ (միայնակ) կամ զույգերով։ Ըստհակառակը, նրանք կազմել են խմբեր և ապրել մի քանի տասնյակներով՝ մինչև գործիքների մշտական գործածությունը։ Առանց այդպիսի հասարակական կյանքի, ինարկե, գործիքների մշտական գործածությանը անցնելը և դրանց հետագա զարգացումն հնարավոր չեր լինի։ Հարկավոր եր ունեղարդագույն համար այդպիս կամ առաջնական դեպքում միայն կոլեկտիվի մեջ, խմբի մեջ։

Ահա այս ամենից հետո կատարվեց անցումն կենդանական կյանքից դեպի մարդկային կյանքը, այսինքն՝ նրան, վոր մարդս իր գոյությունը պահպանելու համար հարկավոր միջոցները սկսեց ձեռք բերել արևեստական գործիքների ոգնությամբ։

Սկսած այն ժամանակից, յերբ մեր նախնիքները սկսեցին միշտ գործածել աշխատանքի գործիքներ,

այդ ժամանակից Նրանց զարգացումն ընթացավ միանգամայն այլ ճանապարհով, քան մնացած կենդանիներինը։ Տեսնենք թե ինչպիսի ճանապարհով։

Ամեն մի կենդանի կամ բույս բնությանը հարմարվում է։—Կենդանին կամ բույսը իր սովորությունները, մարմնի կազմը, գույնը հարմարեցնում են անդան այն պայմաններին, վորոնց մեջ բույսերի կամ կենդանիների տվյալ տեսակը կամ ցեղը ստիպված է ապրելու։ Այդ հարմարվիլը կատարվում է գլխավորապես հենց իրեն՝ կյանքի ընտրության ոգնությամբ։ Տվյալ ցեղից նրանք, վորոնք քիչ չափով են հարմարվում շրջապատող պայմաններին (որինակ՝ դանդաղ վազքը՝ յերբ կան արագավագ թշնամիներ, կամ մարմնի գույնը՝ վոր չի թացցնում թշնամու աչքից, և այն), շուտով վոչնչանում են և հաճախ չեն հաջողում սերունդ թողնելու։ Ընդհակառակը, բեղմնավորվում են նախ նրանք, վորոնք թեկուղ մի քիչ ավելի յեն հարմարված կյանքի պայմաններին։ Նրանց սերունդից նորեն մնում են ապրելու և սերունդ են թողնում միմիայն նրանք, վորոնք տվյալ վայրում կարողանում են գոնե մասամբ հարմարվել բնության պայմաններին։ Որինակ, յենթադրենք թե հյուսիսում, ուր մշտական ձյուն է, ապրում են մոխրագույն նապաստակներ։ Պարզ է, վոր ավելի շուտ յերկար կապրեն նրանցից այնպիսիները, վորոնց գույնը ավելի բաց է, քանի վոր թշնամին այդպիսիներին ավելի դժվարությամբ կնկատի։ Նրանք կթողնեն սերունդ, այդ վերջինից նույնպես կառաջանան ավելի բաց գույն ունեցողներ, և այն։ Բայց վորովհետև ծնող-

ների առանձնահատկությունները թեկուղ մասամբ փոխանցվում են սերնդին, ապա և շատ սերունդներից հետո նապաստակները խիստ սպիտակում են, այսինքն հարմարվում են կյանքի բնական պայմաններին։

Բնությանը այդ կերպ հարմարվիլը կոչվում է բիոլոգիական (բիոլոգիա բառից, վոր նշանակում է գիտություն՝ կյանքի մասին)։

Մարդու հարմարվիշը թնության պայմաններին։—Ուրիշ բան ենք մենք նկատում մարդու մոտ։ Նա չի փոխում իր մարմնի կազմվածքը, գույնը և այլն, ինչպես այդ անում են կենդանիները և մասամբ բույսերը։ Փոխադրվելով ցուրտ յերկրներ, մարդը չի ծածկվում թանձը բրդով, այլ ձեռք և բերում կենդանիների տաք մորթիներ։ Զրում լողալու համար մարդը հետզհետեւ չի ձեռափոխում իր ձեռներն ու մարմինը, ինչպես այդ տեղի յեւ ունենում կենդանիների հետ, այլ հնարում և նավակ (իսկ ավելի ուշ՝ նաև շոգենավ)։ Մի խոսքով՝ նա այնքան չի փոփոխում իրան, ինչքան փոփոխում է այն, ինչը նա դնում է իր և բնության միջև—նա փոփոխում է իր աշխատանքի միջոցները (զործիքները), վորոնք տեխնիկա անունն են կրում։ Հետևապես մարդու հարմարվիլը բնությանը—վահ թե բիոլոգիական է, ինչպես կենդանիներին է, այլ տեխնիկական, արհեստական զործիքների ոգնությամբ, վորոնք մարդ դնում է իր և բնության միջև։

Այստեղից ել առաջանում է վերև հիշած տարբերությունը բնության ծոցում կատարվող զարգացման և մարդկային հասարակության մեջ կատարվող զար-

գացման միջև։ Վերջինում նա տեղի յե ունենում շատ անգամ ավելի արագ։ Այստեղ գործում ե վոչ թե կյանքի դաստիար ընտրությունը մի շարք սերուղներում, այլ տեղի ե ունենում գործիքների փոխարինումն։ Վերջինս կարող ե կատարվել շատ արագ։ Դրանում համոզվելու համար բավական ե ծանոթանալ տեխնիկայի զարգացմանը վերջին 20—30 տարիներում։ Սկսած այն ժամանակից, յերբ մեր նախնիքները սկսել են շանունակ, մի քանի հարյուր հազար տարիներ, գործ ածել գործիքներ,—մարդկությունը հակայական չափերով զարգացել ե՝ կենդանական աշխարհից վեր բարձրանալով։ Մարդկությունը իր այդ աստիճանին հասել ե շնորհիվ տեխնիկայի զարգման։

Տեխնիկա։ Արտադրող ուժեր։—Իր տեխնիկան (աշխատանքի բոլոր գործիքները միասին վերցրած) մարդ գործ ե դնում արտադրության մեջ—բնությունից նյութեր ձեռք բերելիս և դրանք մշակելիս։ Սակայն արտադրության պըոցեսում մասնակցում են վոչ միայն տեխնիկական և զանազան հում նյութեր, այլ և ինքը մարդը՝ վորպես բանող ուժ։ Մարդը հանդիսանում ե արտադրության կարևորագույն մասը, վորովհետև այդ արտադրությունը վարում ե ինքը, և այդ արտադրությունը իր համար ե։ Աշխատանքի ամբողջ գործիքները, հում նյութերը և մարդկային բանող ուժը, ամբողջովին վերացրած, մենք անվանում ենք մարդկային հասարակության արտադրող ուժեր։ Նրանք արտադրում են այն ամենը, ինչի կարիք ունի այդ հասարակությունը։

Արտադրող ուժերի զարգացումը։—Իհարկե հետաքրքիր ե հարցնել, թե ինչու են զարգանում արտադրող ուժերը։ Ի՞նչն ե ստիպում մարդկանց՝ տեխնիկան բարելավելու։

Դրան չի կարելի մեկ խոսքով պատասխանել։ Դիալեկտիկայի մասին դիսում մենք ասացինք, վորամեն մի յերևույթ պետք ե ուսումնասիրել կոնկրետ կերպով, տեսնել թե դա ինչով ե տարբերվում ուրիշներից։ Այդպես և այստեղ։ Պատմության մեջ մարդկի իրար հետ զանազան կերպ են կապեր հաստատել։ Տարբեր են յեղել մարդկային հասարակությունները։ Յեկ նրանց մոտ մարբեր ձևերով ե կատարվել արտադրող ուժերի զարգացումը։

Հարցը քննենք միայն կապիտալիստական արտադրության շրջաններում։ Ի՞նչպես ե այստեղ։ Այստեղ չկա միասնական հասարակություն, վեջինս բաժանված ե դասակարգերի։ Կապիտալիստները բոլորովին այլ գործով են զբաղված, քան բոլոր մարդկանց կարիքներին բավարարություն տալն ե։ Նրանք միայն ձբգտում են վորքան կարելի յե շատ շահվել, քամել բանվորական աշխատանքից և վորքան կարիքի ե շատ կապիտալներ կուտակել։ Այդպիսի հաւարակության մեջ արտադրող ուժերի զարգացումը տեղի յե ունենում (1) բանվորների՝ կապիտալիստների գեմ մզած պայքարի և (2) կապիտալիստների իր ենց միջև կատարվող պայքարի ազգեցությունների տակ։

Այդ ինչպես ե տեղի ունենում։ Առաջին։ Բանվորների պահանջների (աշխատավարձը բարձրացնել,

բանվորական որը կրճատել և այլն) դեմ պայքարելիս կապիտալիստները գործի մեջ են դնում ավելի լավ մեքենաներ, վորոնք հնարավորություն են տալիս գործը ավելի քիչ (պակաս թիվ) բանվորներով վարելու, գործազրկությունը աճում է, և բանվորները ստիպված են լինում վատթարացած պայմաններին համաձայնվելու։ Յերկորդ։ Հենց իրենց՝ կապիտալիստների միջև տեղի յե ունենում պայքար շուկաների համար, մրցություն։ Նրանցից յուրաքանչյուրը ձգում է իր ապրանքը եժանացնել, փորովնետե նա միայն դրանով կարող է թակել ուրիշ այն կապիտալիստներին, վորոնք նույնանման ապրանք են շուկա հանում։ Բայց նա այդ անել կարող է միայն կատարելագործված մեքենաներ մտցնելով գործի մեջ։

Ուրիշ խոսքով, բութուական հասարակության մեջ արտադրող ուժերի զարգացման պատճառներ են հանդիսանում՝ 1) կապիտալիստների պայքարը ընդում բանվորների, 2) կապիտալիստների պայքարը իրար դեմ (կոնկուրենցիան, մրցումը)։

Աշխարհագրական միջավայրը յեվ հասարակության զարգացումը։—Պետք է շեշտել, վոր արտադրող ուժերի զարգացման վրա վորոշ ազդեցություն են գործում նաև բնական պայմանները (աշխարհագրական միջավայրը)։ Յերկրագնահի վրա այդ պայմանները զանազան են։ Վերցնենք թեկուզ ցուրտ կլիմայով յերկրները, հյուսիսային ըևեռին մոտ գտնված յերկրները և այն յերկրները, վորոնք ունեն տաք կամ բարեխառն կլիմա։ Տարբերությունը շատ մեծ է, կամ յերկրներ, ուր, որինակ, ոգտակար հան-

քեր քիչ կան, իսկ կան և այնպիսի յերկրներ, վորտեղ նման հանքեր շատ կան։ Մի շարք յերկրներ ծովերից հեռու յեն և գետերով ել աղքատ, մյուսները, ընդհակառակը, բոլոր կողմերով շրջապատված են ծովերով (կղզիները) և գետերով ել հարուստ են։

Պարզ է, վոր այս ամենը պետք է տարբեր ազգեցություն ունենա արտադրող ուժերի զարգացման վրա։ Ծովը նպաստում է նավագնացության գործի զարգացմանը, յերկաթի և քարածուխի հանքերը նպաստում են մեքենաների կառուցման, պտղաբեր հողը և տաք կլիման—հողագործության։

Բայց բնական պայմանները միայն նպաստում կամ դանդաղեցնում են զարգացումը, և վոչ թե առաջ բերում։ Որինակ՝ այնտեղ, ուր պրոդուկտների փոխադրության կարիք չկա, —այնտեղ ծովը չի կարող նավագործություն ստեղծել։ Բայց յերբ արտադրության տակ արդեն սկըսվում է անհրաժեշտություն զգացվել հարմար և հեշտ փոխադրությունների, այնտեղ ծովը նպաստավոր ազգեցություն է ունենում նավագործության զարգացման վրա։ Մյուս կողմից՝ համապատասխան բնական պայմանների բացակայությունը կարող է արգելք հանդիսանալ հասարակության արտադրող ուժերի զարգացմանը։ Որինակ, ժամանակակից մեքենական տեխնիկան չի կարող զարգանալ այնտեղ, ուր չկան մետաղներ կամ եներգիայի (նավթի, ածուխի և այլն) աղբյուրներ։

Ճիշտ է, այդ ազգեցությունը հետզհետե ավելի նվազում է շնորհիվ այն հանգամանքի, վոր ամբողջ

աշխարհը դառնում է մի միասնական տնտեսություն։ Այստեղ, ուր հարկավոր բանը չկա, այնտեղ դա բերում են ուրիշ տեղերից։ Որինակ՝ իտալիայում քարածում չկա, և նա այդ ստանում է Անգլիայից ու ԽՍՀՄ։ Այսպես վոր՝ բնական սլայմանների դերը հետզհետե ավելի նվազում է։ Հասարակության վիճակը կախված է գլխավորապես արտադրող ուժերի, այսինքն տեխնիկայի և մարդկանց (այդ տեխնիկայով գործողների) զարգացման աստիճանից։

ՀԱՍՏԱԿՈՒԹՅՈՒՆ. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

Հասարակություն։ — Այժմ մենք անցնաւմ ենք հարցի մի ուրիշ կողմի քննությանը։ Մենք խոսեցինք մարդկային հասարակության մասին։ Բայց դա ի՞նչ է իրենից ներկայացնում։ Մենք արդեն գիտենք, վոր հասարակությունը գոյություն ունի շնորհիվ այն նյութական բարիքների, վոր նա ձեռք է բերում իր արտադրող ուժերի ոգնությամբ։ Բայց նույնպես անհրաժեշտ է իմանալ, թե ի՞նչպես է կառուցված մարդկային այդ հասարակությունը։

Հասարակությունը բաղկացած է մարդկանցից, վորոնք կապված են միմյանց հետ բազմաթիվ և բազմապիսի կապերով։ Քննենք այդ կապերը։ Մարդիկ պարապում են զանազան գործերով։ Արտադրություն, առևտուր, քաղաքական գործներություն, գեղարվեստ, ուսումնական գործ և այլն և այլն կազմում գեղարվեստ, ուսումնական գործ և այլն և այլն կազմում են մարդկանց զանազան խմբերի պարապմունքը։ Այդ աշխատանքներում մարդիկ բաղխվում, միմյանց հետ

ընդհարվում են, միմյանց նկատմամբ վորոշ հարաբերությունների մեջ լինում։ Հետևապես, այդ հարաբերությունները կամ կապերը նույնքան բազմազան են, վորքան բազմազան են մարդկանց պարապմունքները։ Գոյություն ունեն մարդկանց աշխատանքային, քաղաքական, բարոյական, կրոնական, գիտական և այլն և այլն կապեր կամ հարաբերություններ։

Աշխատանքային կապ. — Բայց այդ բոլորի մեջ առանձնապես տարբերվում է մեկ կապը (կամ հարաբերությունը) — աշխատանքային կապը, այսինքն այնպիսի կապ, վորը մարդկանց միջև սահմանվում է աշխատանքի, արտադրության ժամանակ։ Դրա համար ել նա այլ կերպ կոչվում է արտադրական կապ կամ արտադրական հարաբերություններ։

Այդ ի՞նչ հարաբերություններ են,

Վերցնենք, որինակ, գործարանի բանվորին։ Նա մենակ չի աշխատում։ Նրա աշխատանքը կապված է հագարավոր ուրիշ մարդկանց աշխատանքի հետ։ Այն գործը, վորի վրա նա աշխատում է, այդ գործի վրա առաջ աշխատել են նրա ընկերները և նույն այդ գործի վրա հետո ել պիտի աշխատեն ուրիշները։ Յենթագրենք թե այդ X բանվորը աշխատում է այնպիսի գործարանում, վորտեղ պատրաստում են մեխեր։ Այն յերկաթաթելը, վորից նա պետք է մեխեր պատրաստի, այդ յերկաթաթելը չե վոր բնությունից նույն դրությամբ չի ստացվել. դա յեղել է հանք, ձուլել են, ձև տվել և այլն, ուրեմն այդ X բանվորը ընդհանուր գործում աշխատանքային կապի մեջ է գլունվում մի շարք ուրիշ բանվորների հետ։ Բայց դրա

աշխատանքի արդյունքի վրա ևս հետո ուրիշ բանվորներ պիտի աշխատեն—այդ մեխերով պիտի արկղներ փակցնեն, փոխադրեն և այլն—նույնպես աշխատանքային կապ ե։ Այդպիսի կապ գոյություն ունի նաև զանագան գործարանների, արդյունաբերության գանազան բնագավառների բանվորների միջև։

Բայց աշխատանքային կապ գոյություն ունի վոչ միայն տվյալ X բանվորի և այլ բանվորների միջև, այլ և բանվորի ու կապիտալիստի։ Զե՞ վոր բանվորը աշխատում ե կապիտալիստի համար և վերջինիս ցուցմունքով։ Դա ևս աշխատանքային կապ ե, քանի վոր կապիտալիստական հասարակության մեջ բանվորներին գործի կարգելը, ապրանքի տեսակը, դրա վորակն ու քանակությունը վորոշում ե կապիտալիստը, վորը և յուրացնում ե բանվորի աշխատանքի արդյունքը, այսինքն բանվորը աշխատում ե բուրժուազիայի համար։

Առաջրական հարաբերությունների յերկու սիպ։— Այդպիսով մենք տեսնում ենք, վոր գոյություն ունեն աշխատանքային հարաբերությունների յերկու տեսակ, յերկու տիպ։ Առաջինը—այնպիսիները, վորոնք սահմանվում են թե առանձին գործարանում և թե ամբողջ արդյունաբերության մեջ աշխատող բանվորների միջև։ Բանվորները կազմում են մեկ հակա կոլեկտիվ, ըստ վորում վոմանց աշխատանքը ընկնում ե ուրիշ բանվորների ձեռքը և ընդհակառակը։ Այդ հարաբերությունները կարելի յե կոչել աշխատակցության (գործակցության) հարաբերություններ։ Յերկրորդ—այն հարաբերությունները, վորոնք սահմանվում են բանվորների և

կապիտալիստների միջև, յերբ բանվորները աշխատում են կապիտալիստի համար և նրա կարգադրությամբ։ Դա արդեն կապիտալիստների տիրապետության և բանվորների հպատակության վրա հիմնված հարաբերություններ են, շահագործման վրա հիմնված հարաբերություններ։

Թե առաջինը և թե յերկրորդը դասակարգային հարաբերություններ (զբանց մասին մանրամասն կլոսսնք ստորև) են։ Այդ հարաբերությունները, մի կողմից՝ հասարակությունը բաժանում են խոշոր մասերի (մեր որինակում—բուրժուազիա և պրոլետարիատ), իսկ մյուս կողմից միացնում են բոլոր բանվորներին՝ նույնպես և կապիտալիստներին՝ առանձին խմբերի մեջ—բանվորները կազմում են առանձին դասակարգ, իմպերիալիստները—նույնպես առանձին դասակարգ, և այլն։ Կապիտալիստների տիրապետությունը և բանվորների հպատակությունը նրանց բաժանում ե իրարից, իսկ բանվորի աշխատակցությունը բանվորի հետ, կամ կապիտալիստինը կապիտալիստի հետ—բանվորներին միացնում ե բանվորական դասակարգի մեջ, կապիտալիստներին—կապիտալիստական դասակարգի մեջ։ Մեկ խոսքով՝ մարդկանց համախմբում և դասակարգ ե կազմել տալիս այն, վոր մարդիկ գտնվում են աշխատանքային միատեսակ հարաբերությունների մեջ թե միմյանց նկատմամբ և թե ուրիշ մարդկանց կամ ուրիշ դասակարգերի նկատմամբ։

Դասակարգային հարաբերությունների ամբողջ եյտթյունը հասկանալու համար պետք է շեշտել նաև հետեւյալը։ Որինակ, տիրապետություն և հպատակություն

յեղել են նաև ուրիշ եպոխաներում (ժամանակաշըրջաններում), այն ժամանակ, յերբ չկային կապիտալիստներ և բանվորներ, բայց կային, որինակ, ճորտեր (սորուկներ) և նրանց տերեր (ճորտատերեր): Հասարակությունը ճանաչելու համար պետք է իմանալ, թե հետագայում ինչպիսի ձև է ստացել այդ տիրապետություն-հպատակությունը: Ճորտատիրական հասարակության մեջ այդ հարաբերություններն այնպես ելին, վոր տերը վարվում եր ճորտի հետ ինչպես հասարակ իրի հետ—կարող եր նրան նվիրել մեկ ուրիշին, կարող եր նրան ստիպել աշխատելու նույնիսկ քսան ժամ, կարող եր նրան սպանել: Ֆեոդալական հասարակության մեջ հարաբերությունները այլ եյին: Գյուղացին նույնպես աշխատում եր ֆեոդալի համար, կոռ ու բեզար եր տալիս և այն: Բայց ֆեոդալը չեր կարող գյուղացու հետ վարվել այնպես, ինչպես ճորտատերը վարվում եր ճորտի հետ. գյուղացու դրությունը ավելի ազատ եր: Նա արդեն ուներ իր տընտեսությունը, մի բան, վոր ճորտը չուներ: Նա ֆեոդալին տալիս եր միայն մի մասը այն ամենի, ինչ արտադրում եր: Այսպիսով, գյուղացու դրությունը թեև շատ ծանր եր ֆեոդալիզմի եպոխայում, բայց և այնպես գյուղացին այդ շրջանում համեմատաբար ավելի ազատ եր քան ճորտը:

Տիրապետության - հպատակության այդ հարաբերությունները կապիտալիստական եպոխայում ել ավելի տարբեր են. բանվորը չե պատկանում իր տիրոջը (ինչպես ճորտը), և պարտավոր չե նրա համար ձրի աշխատելու (ինչպես գյուղացին եր աշխատում

ֆեոդալի համար): Բանվորը կապիտալիստի հպատակության մեջ ե մտնում վարձակալության պայմանագիր կնքելուց հետո: Ըստ վորում նա վաճառում է վոչ թե իրեն, այլ միայն իր բանվորական ուժը՝ 8—10—12 ժամ աշխատանքը, վորի համար ստանում է վորոշ աշխատավարձ:

Պարզ ե, վոր դա նման չե վոչ ֆեոդալական, վոչ ել ճորտական հարաբերություններին:

Այսպես ունեմն, պետք ե դասակարգային հասարակությունների համար ընդհանուր գծերը՝ տիրապետության - հպատակության և շահագործման հարաբերությունները՝ քննել կոնկրետ կերպով, ինչպես նրանք հայտնավել են զանազան եպոխաներում:

Աշխատանքային կապերը կամ հարաբերությունները կազմում են մարդկային հասարակության հիմքը: Այստեղ, ուր այդ չկա, այնուղի չկա նաև մարդկային հասարակություն: Մարդկանց հարաբերությունները — նախ և առաջ աշխատանքային հարաբերություններ են: Դա տեղի յե ունենում այն պատճառով, վոր դրանք ծագում են մարդկային կյանքի ամենահիմնական պրոցեսից — արտադրությունից:

Աշխատանքային հարաբերությունները վորոշվում են տեխնիկայով (արտադր. ուժերով): Բայց նախ քացարելը, թե ինչ գեր են կատարում արտադր. հարաբերությունները, տեսնենք թե դրանք իրենք ինչով են վորոշվում: Մենք արդեն գիտենք, վոր այդ հարաբերությունները սահմանվում են աշխատանքի միջոցին (աշխատանքի պրոցեսում), ապա ուրեմն հասկանալի յե, վոր դրանք լիովին վորոշվում են այն տեխ-

Նիկայով, վոր մարդիկ կիրառում են: Հասկանալի պետք ե լինի նաև այն, վոր արտադրական (աշխատանքային) հարաբերությունները փոխվում են՝ տեխնիկայի գարգացման հետ միասին: Յեզ իրոք, մարդկային հասարակության ամբողջ պատմությունը այդ յեզրակացությունը հաստատում է:

Վերցնենք արհեստի տեխնիկան, վորը 5—6 հարյուր տարի առաջ տիրում եր Արևմտյան Յեզրոպայի քաղաքներում, իսկ Ռուսաստանում—սրանից 150—200 տարի առաջ: Ի՞նչ եր այդ տեխնական: Փոքրիկ դադահներ, վհշ բարդ գործիքներ: Գործելու համար պահանջվում եր 1—2 մարդ: Բայց այդ յերկու մարդպահանջվում կանց աշխատանքի պրոդուկտը շատ անդամ անցնում էր այդ մարդկանց համար անհրաժեշտ պրոդուկտի չափից: Այստեղից և առաջացավ այդ ավելորդ պրոդուկտը ուրիշ պրոդուկտների հետ փոխանակելու անհրաժեշտությունը և հենց դրանով ել մարդկանց միջև սահմանվեցին այնպիսի կապեր, վորոնք կրում են փոխանակության (առևտրական) կապեր անունը: Դա պահանջում եր տեխնիկան, վոր մարդուն հնարավորություն եր տալիս իր համար հարկավոր չափից ավելի ապրանք արտադրելու:

Մյուս կողմից, այդ նույն տեխնիկան հնարավորություն եր տալիս մի շարք մարդկանց աշխատելու մեծ շահույթով. դրա հետևանքը յեղավ արհեստի ծաղկումը: Արհեստավորները (առանձին աշխատող մեկ արհեստավորը, կամ 1—2 աշկերտի հետ միասին աշխատող) արդյունագործական աշխատանքի միակ ներկայացուցիչներն եյին:

Կապիտալիստական արտադրական հարաբերությունները սահմանվեցին ավելի ուշ, յերբ տեխնիկան շատ զարգացավ: Նոր մեքենաները, վորոնք աշխատանքը դարձնում եյին ավելի արտադրողական, պահանջում եյին բանվորների ավելի մեծ թիվ: Նրանք շահավետ դարձրին խոշոր արտադրությունը: Արհեստը չկարողացավ նրա հետ մրցել ե քայլայվեց: Սահմանվեցին նոր արտադրական հարաբերությունները: Առաջ ամեն մի արտադրող ինքնուրույն եր,և նրա աշխատանքային հարաբերությունները սահմանվում եյին շուկայում՝ ապրանքափոխանակության ճանապարհով: Նոր տեխնիկան, խոշոր արտադրությունը դարձնելով աժան, վոչնչացրեց մանր արհեստավորների այդ ինքնուրույնությունը: Նա նրանց նախ քայլայեց և ապա հավաքեց կապիտալիստական գործարան: Այստեղ հարաբերությունները բոլորովին այլ եյին թե իրենց՝ բանվորների միջև, թե կապիտալիստների միջև և թե բանվորների ու կապիտալիստների միջև: Դրանք նման չեյին ինքնուրույն արհեստավորների հարաբերություններին: Արհեստավորները մանր-ինքնուրույնապրանքարտադրողներ եյին: Նրանք իրենք եյին աշխատում. արտադրության (վորի մեջ գրել եյին իրենց աշխատանքը) պրոդուկտները ծախում եյին շուկայում:—Իսկ հիմա սրան հակադրենք ուրիշ տեսակի հարաբերություններ: Կապիտալիզմի որոք բանվորը ինքնուրույն չե, նա լիովին յենթակա յե կապիտալիստին, նա աշխատում ե վոչ թե միայնակ, այլ իր հազարավոր ընկերների հետ միասին: Կապիտալիստին նա ծախում ե վոչ թե իր աշխատանքի պրո-

դուկտը (ինչպես արհեստավորը), այլ իր բանվորական ուժը:

Արտադրական հարաբերությունները վորոշում են հասարակության կյանքի բոլոր կողմերը:—Աժմ փորձենք պարզել հարցի մյուս կողմը: Մենք իմացանք, թե ինչով են վորոշվում մարդկանց արտադրական (աշխատանքային) հարաբերությունները: Այժմ մենք պետք են պարզենք, թե ինչպես են նրանք ազդում կյանքի ուրիշ կողմերի վրա—քաղաքական պայքարի վրա, պետական կառուցվածքի վրա, կուսակցության վրա, գիտությունների զարգացման վրա, մարդկանց կրօնական հայացքների վրա և այլն: Այդ հարցին պատճական մատերիալիզմը պատասխանում է, վորմարդկանց կյանքի առանց բացառության բոլոր կողմերը վորոշվում են արտադրական հարաբերություններով:

Յեզ իսկապես, հարց տանք մեզ—ի՞նչ են մարդկանց արտադրությունը: Դա—մարդկային հասարակության բաղիսն են, հիմքն են: Առանց դրան մարդիկ ապրել չեն կարող: Իսկ այնպիսի յերևութներ, ինչ-պես են՝ բարոյականությունը, գիտությունը, կրոնը և այն—դրանք կազմում են մարդկային հասարակության գիտակցությունը: Այստեղ, ինչպես մենք վերև մատնանշեցինք, նույնպես մատերիական (նյութական) բաղիսն են, վորով վորոշվում են «վոգին», մարդկային գիտակցությունը: Նայած թե մարդիկ ի՞նչպես են արտադրում, ի՞նչպիսի հարաբերությունների մեջ են գտնվում արտադրության ընթացքում,—դրանով ել վորոշվում են, թե մարդիկ ի՞նչպես են մտածում:

Յեթե մեզ հարցնեն—ի՞նչու այժմ ամեն տեղ կան կոմունիստական կուսակցություններ, կոմունիստական իդեյաներ, իսկ շատ առաջ նրանց մասին գաղափար անգամ չունեյին: Դա բացատրվում է նրանով—կպատասխանները մենք—վոր այն ժամանակներում չկային բանվորներ, վորոնց դրության հետեանքով կապիտալիզմի որոք անհրաժեշտ է դառնում պայքարել հոգուտ կոմունիզմի, ուրիշ խոսքով՝ այն ժամանակներում գոյություն ունեյին մարդկանց ուրիշ աշխատանքային հարաբերություններ:

Յեզ կամ ինչու մեզ մոտ անբարոյական բան են համարվում ճորտությունը, իսկ մի ժամանակ, ընդհակառակը, շատ ճորտեր ունենալը լավ գործ եր համարվում: Դա վորոշվում էր արտադրական այլ հարաբերություններով: Պարզ են, վոր այստեղ, ուր այդ հարաբերությունները հիմնված ենին ճորտության վրա, այստեղ նա համարվել է լավ գործ, քանի վոր, հակառակ դեպքում, ճորտությունը կվոչնչացվեր:

Մի յանի ամփոփումներ:—Դրանից մենք կարող ենք հանել այսպիսի յեղբակացություններ.—մարդկային հասարակությունը—մարդկանց մի հսկայական բազմամիլիոն կոլեկտիվ է: Նրանք բոլորը իրար հետ կապված են անհամար, միմյանց հետ հյուսված թերով, այսինքն՝ կապերով կամ հարաբերություններով: Այդ բոլոր հարաբերությունների հիմքը կազմում են աշխատանքային հարաբերությունները: Այդ վերջին աշխատանքային գորոշվում են և փոփոխվում ները իրենց հերթին վորոշվում են և փոփոխվում նայած հասարակության արտադրող ուժերի վիճակին ու զարդացմանը: Նյութական (մատերիական) արտա-

դրությունը իրենով վորոշում ե հոգեկան արտադրությունը։ Մարդկանց իդեյաները վորոշվում են նրանով, նայած թե այդ մարդիկ իրար հետ ինչպես են կապված՝ իրենց աշխատանքի պրոցեսում։ Մարդկային հասարակության այդ կառուցվածքը կարելի յե ներկայացնել այս կերպ—

Մարդկանց մյուս բոլոր հարաբերությունները

↑
Արտադրական կամ աշխատանքային
հարաբերությունները

↑
Արտադրող ուժեր
(տեխնիկա + բանվորական ուժ)

Սլաքը ցույց է տալիս, թե ինչ ուղղությամբ ե կատարվում ազգեացությունը—արտադրող ուժերից գեղի աշխատանքային հարաբերությունները, և նրանցից—դեպի քաղաքական և իդեոլոգիական հարաբերությունները։ (Տես յեր. 143)։

ԱՐՏԱԴՐՈՂ ՈՒԺԵՐ, ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ, ԿՈՄՈՒՆԻԶՄ.

Կապիտալիզմը — դասակարգային հասարակության վերջին ձեվն ե։—Այդպես ե մարդկային հասարակության կառուցվածքը։ Բայց մենք գիտենք, վոր նա անշարժության չի մատնված, այլ զարգանում ե։ Իսկ այդ զարգացումը կատարվում ե յերեմնաստիճանաբար (եւոլյուցիա), յերեմն թոիչքներով, այսինքն՝ հեղափոխական ճանապարհով, ըստ վորում

եվոլյուցիան պապրաստում ե հեղափոխություն։ Մենք պես ե քննենք, թե ինչու և ինչպես են տեղի ունենում հեղափոխությունները հասարակության մեջ։

Դա քննենք կապիտալիստական հասարակության որինակի վրա, վորովինետե այդ իրավակարգը դասակարգային շահագործական հասարակության վերջին ձևն ե, վորի վերջնական կործանումով ե, վոր մարդկությունը ազատագրվելու յե ներքին կոփմերից։

Կապիտալիզմի հիմնական հակասությունը։—Կապիտալիստական հասարակության արտադրող ուժերը միշտ ել զարգացել են։ Գոյություն ունեցող (այսինքն՝ կապիտալիստական) հարաբերությունները չափազանց նպաստավոր ելին դրա համար և նույն իսկ նրանց զարգացումը շարունակ մղում ելին առաջ (կոնկուրենցիայի, մրցան միջոցով)։ Բայց վերջին տարիները, իմպերիալիստական մեծ սպանդանոցի շեմքին, արդեն զգացվեցին հսկայական դժվարություններ։ Կապիտալիստական հասարակության արտադրությունը այնչափ եր զարգացել, վոր այլևս տեղ չկար ապրանքները սպառելու։ Ինարկե, յեթե դա լիներ վոչ թե կապիտալիստական, այլ կոմունիստական հասարակություն, — ավելցուկներ չելին լինի։ Այդ առարկաների կարիքը հսկայական եր։ Բայց բանը նրանումն ե, վոր կապիտալիստական հարաբերությունների որոք անհրաժեշտ ե ապրանքի համար վող վճարել։ Իսկ կապիտալիստական իրավակարգը բնակչության հոծ մեծամասնությանը մատնում ե աղքատության գիրկը։ Այդպիսով, կապիտալիզմի զարգանալով, զարգացավ նրա հիմնական հակա-

ոռւթյունը — արտադրող ուժերի ու ապրանքի պատրաստման հսկայական ավելացումը մի կողմից, իսկ մյուս կողմից այն, վոր բնակչության մասսաները հնարավորությունից զրկված են այդ նվաճումները ոգտագործելու:

Վերջերս այդ հակասությունները հասել են ծայրահեղ աստիճանի: Արտադրության համար նեղ են կապիտալիստական հարաբերությունների շրջանակները: Տեղի ունեցավ — ինչպես Լենինն ե ասում — կապիտալիզմի նեխումն: Բուրժուական հարաբերությունները, փոխանակ արտադրող ուժերի զարգացմանը նպաստելու, դարձան այդ զարգացմանը խանգարող կապանքներ:

Իսկ ինչպես վարվեցին կապիտալիստները: Նրանք ինչպես փորձեցին այդ դժբախտությունը վերացնել: Նրանք այդ ապրանքները հանձնեցին տկլոր ու քաղցած մասսաներին:

Ինարկե վոչ: Նրանք փորձեցին այդ դրությունից դուրս գալ իմպերիալիստական պատերազմի միջոցով:

Տեսնենք թե ինչպես եյին նրանք դատում:

Խմակերիաշխատական պատերազմը մի փորձ եր՝ յուծելու կապիտաշխատական հակասությունները, յայշայելով կապիտալիզմը: — Բոլոր կապիտալիստներն ել իրենց ապրանքները սպառելու համար կարիք են զում նոր շուկաների: Յեղած շուկաները բավական չեն: Արտադրությունը ել չի կարող զարգանալ: Ուրեմն, վորեւ մուկը պետք ե վոչնացվի, փորպեսզի մյուսները հնարավորություն ունենան առաջ անցնելու: Ո՞վ պետք ե լինի այդ մեկը, — ֆրան-

ախացիները և անգլիացիները, — մտածեցին գերմանական իմպերիալիստները: — Գերմանացիները, — պատասխանեցին ֆրանակական, անգլիական և ամերիկական իմպերիալիստները:

Պատերազմը — դա նույն մրցումն ե (կոնկուրենցիան), սակայն այն տարբերությամբ, վոր դա տեղի յե ունենում կապիտալիստների հսկայական միությունների միջև: Մի տեղում (ասենք՝ Գերմանիայում) արտադրող ուժերը քայլայելու միջոցով իմպերիալիստները փորձեցին մի ուրիշ տեղում (ասենք՝ Ֆրանսիայում, Անգլիայում) այդ ուժերին ազատ զարգանալու հնարավորություն տալ, և ընդհակառակը: Կապիտալիզմն այդպիսով թույլ չտվեց վոր ամբողջ մարդկային հասարակությունը առաջ գնա:

Կոմունիզմի անհրաժեշտությունը: — Միակ յերը կարող եր մինել պլուտոարական հեղափոխությունը: Միայն նա կարող եր ստեղծել այնպիսի պայմաններ, փորոնց շնորհիվ արտադրությունը կարող ե առաջ գնալ: Իսկ կապիտալիզմը դրան անընդունակ ե: Մարդկային հասարակության արտադրող ուժերը նրան արդեն գերազանցել են: Ահա թե ինչու Լենինը իմպերիալիստական պատերազմի ժամանակ ասում եր: — Ծիծաղելի յե պայքարել հաշտության համար: Հաշտությունը իմպերիալիստների մեջն — վոչինչ չի կարող լուծել. նա կինի միայն մի փոքրիկ դադար՝ նոր, ել ավելի սարսափելի պատերազմի համար: Պետք ե պահանջել վոչ թե հաշտություն, այլ պատերազմ, սակայն քաղաքացիական պատերազմ: Իմպերիալիստական պատերազմը պետք ե վերածել քա-

ղաքացիական պատերազմի։ Միայն պրոլետարական հեղափոխության և կոմունիստական իրավակարգի մեջ ե, վոր կարող են լուծում ստանալ կապիտալիզմի հակասությունները։ Դասակարգային կատաղի պայքարի միջոցով, իր դիկտատուրայի ոգնությամբ բանվոր դասակարգը, հաղթահարելով կապիտալիստների հուսահատական դիմադրությունը, մարդկությունը կառաջնորդի գեղի կոմունիզմ։

Կ. Մարքսի կարծիք՝ կապիտալիզմից դեպի կոմունիզմ անցնելու անխուսափելիության մասին։—Այս ամենի հիման վրա, մեզ համար պարզ են դառնում Մարքսի խոսքերը։ տվյալ արտադր. հարաբերությունները զարգացման մինչ վորոշ աստիճանը հանդիսանում են արտադրող ուժերի զարգացման ձևեր։ Բայց հասնում ե այնպիսի ժամանակ, յերբ նրանք այլև հնարավորություն չեն տալիս այդ ուժերի հետագա զարգացմանը։ Զարգացման ձևերից նրանք վեր են ածվում (դառնում են) կապանքների։ Այդ ժամանակ նրանք կտրատվում են։ Յեզ դա—հեղափոխություններ, վորը ստեղծում ե նոր հարաբերություններ։

Կոմունիստական հասարակությունը յեզ արտադրող ուժերը։—Կոմունիստական հարաբերությունների հրացը, ինչպես այդ հետեւում ե մեր թեորիայից, կախված ե արտադրող ուժերի զարգացումից։ Կոմունիստական հասարակությունը—դա մարդկանց այնպիսի կազմակերպություն է, վորի գրոշակի վրա գրված ե՝ «Յուրաքանչյուրից—ըստ իր ընդունակությունների, յուրաքանչյուրին—ըստ իր կարիքների»։ Արտադրության բոլոր միջոցները կպատ-

կանեն ամբողջ մարդկային կոլեկտիվին, ամբողջ յերկրագնդի համար կտարվի միասնական պլանաշափ տնտեսություն։ բոլորն ել կաշմատեն, պարապ պորտաբույժներ չեն լինելու, ամեն մի մարդ հասարակությանը կտա այնչափ, վորչափ կկարողանա՝ չստանալով գրա համար վարձատրություն, բայց յուրաքանչյուրի կարիքները կոմունիզմի որոք կբավարարվեն վովին՝ անկախ այն հանգամանքից, թե նա այդշափ ստեղծում ե թե վոչ։ Մարդկանց ջանքերը ուղղված կլինեն վաչ թե իրար դեմ պայքարելու վրա, այլ բնության դեմ պայքարելու վրա՝ բնությունը ել ավելի իրենց յենթարկելու համար։

Իսկ ինչպես կարող են ստեղծվել այդպիսի հարաբերություններ։ Պարզ ե, վոր այդ հնարավոր ե միայն արտադրող ուժերի հսկայական զարգացմամբ և դրանց միացմամբ։ Հետեւապես, ըստ արտադրող ուժերի զարգացման չափի, հետզհետեւ մուտք կգործեն կոմունիստական հարաբերություններ։

Հեղափոխությունը յեզ արտադրող ուժերի ժամանակավոր ժայխայտը։—Բայց ամեն մի սոցիալական հեղափոխություն ուղեկցվում ե արտադրող ուժերի վորոշ քայլայումով։ Ընդհատվում ե արատդրությունը, խորակվում են ֆարմիկաները և գործարանները, փշանում են հաղորդակցության ձանապարհները, սպանվում բանվորական ուժեր։ Բայց դա—ժամանակավոր խորակումն ե, քանի վոր հեղափոխության հետեւանքով ստեղծվում են նոր հարաբերություններ՝ արտադրության զարգացմանը խստ նպաստող հարաբերություններ, ապա ուրեմն հասցված վերքերը հա-

մեմատաբար կարճ ժամանակամիջոցում արագ բռնժկում են:

«Կոմունիզմի դաշտում իշխանությունն եւ պղյուս ելեքտրիֆիկացիան»:—Յեվ զարգացած արտադրությունը առաջ եւ գնալու հսկայական քայլերով՝ նոր հիմունքների վրա վերակառուցվելով: Ահա հենց դրանից յենելով, ընկ. Լենինը ասում է—«Կոմունիզմը — դա Խորհրդային իշխանությունն եւ պլյուս ելեկտրիֆիկացիան»:

Իսկապես, ի՞նչ եւ նշանակում ելեկտրիֆիկացիան քաղաքային արդյունաբերության համար:—Հնարավորություն՝ արտադրական ուժերը աժան եներգիայի միջոցով արագ զարգացնելու, այսինքն՝ կոմունիզմի համար հիմքեր ստեղծելու:

Բայց ի՞նչ եւ նշանակում ելեքտրիֆիկացիան գյուղի համար: Ելեքտրիֆիկացիան նշանակում է—հողը ձիով կամ անասուններով հերկելուց անցնել ելեքտրական գութանով հերկելուն, դա նշանակում է—ձեռքով կալսելուց անցնել ելեքտրականության ոգնությամբ կալսելուն, ջրաղացից, հողմաղացից անցնել ելեկտրաղացին և այլն: Ելեկտրիֆիկացիան նշանակում է—գյուղացիների կոռպերացումը (այսինքն՝ միացումը) մեկ արտադրական կազմակերպության մեջ: Զարգացած ելեքտրական տեխնիկան պահանջում է համապատասխան աշխատանքային հարաբերություններ: Ելեքտրական գութանը կիրառելի չեւ առանձին տնտեսության մեջ,—դա մի մարդու ուժերից վեր եւ գնել,—ծախսը չի հանի, իսկ ամբողջ գյուղի համար դա չածախսը շահապետ եւ: Ելեքտրիֆիկացիայի համար

ուրեմն պահանջվում է, վոր կոռպերացման յենթարկվեն (միացվեն) ամբողջ գյուղեր, և այդպիսով ելեկտրիֆիկացիան գյուղում հիմք եւ դնելու խոշոր կուլեկտիվ տնտեսության:

Ահա թե ինչու ընկ. Լենինը ասում էր, թե ելեքտրիֆիկացիան նշանակում է կոմունիզմ՝ յեթե իշխանությունը պատկանում է աշխատավորության: Մենք հետեւյալ գլխում կտեսնենք, վոր կոմունիզմի որոք իշխանությունը ընդհանրապես չի լինի, բայց անցումն դեպի կոմունիզմ կարող է լինել միայն բանվորների և գյուղացիների իշխանությունից, և վոչ թե բուրժուական հասարակություննից:

Ելեքտրիֆիկացիան, այսինքն արտադրող ուժերի հսկայական զարգացումը, ստեղծում է կոմունիզմի համար բոլոր տեխնիկական պայմանները: Մարդկանց աշխատանքային հարաբերությունները, կոմունիզմի որոք, արտադրող ուժերին չեն խանգարի, այլ կնպաստեն դրանց շարունակական և հսկայական զարգացմանը: Դա բացատրվում է նրանով, վոր արտադրության գիտակցական նպատակը կլինի—բավարարել Աշխատավոր մասսաների կարիքները: Իսկ կապիտալիզմի որոք կապիտալիստների նպատակն եւ բանվորներից քամած հավելյալ արժեքը կուտակել: Աշխատավոր մասսաների կարիքների բավարարումը կատարվել եւ այն չափով, ինչ չափով դա նշանակել է կապիտալիստական շահույթների աճումն: Կապիտալիզմի որոք այդ հանգամանքը ի վերջո արգելք եւ հանդիսացել արտադրության զարգացմանը և պետք եւ վոր ի վերջո հասցներ պլրութարական հեղափոխության,

Աշխատանքի արտադրողականությունը:—Վերոհիշյալից պարզ է, վոր բանվորների և գյուղացիների իշխանության ժամանակ կոմունիզմի համար մղվող պայքարը վոչ այլ ինչ է, յեթե վոչ պայքար հոգուտ արտադրության զարգացման, արտադրող ուժերի զարգացման: Մեր տնտեսությունը չզարգացնելով, մենք չենք կարող հասնել կոմունիզմին: Այդ մասին Լենինը դեռ 1919 թվին այսպես եր ասում—

«Աշխատանքի արտադրողականությունը—դա, ի վերջո, ամենակարևորն է, ամենագլխավորն ե՝ նոր հասարակակարգի հաղթանակի համար: Կապիտալիզմը ստեղծել է աշխատանքի այնպիսի արտադրողականություն, վոր ճորտատիրության որոք տեսնված չեր: Կապիտալիզմը կարող է վերջնականապես հաղթվել և վերջնականապես կհաղթվի նրանով, վոր սոցիալիզմը ստեղծում է նոր, աշխատանքի շատ ավելի բարձր արտադրողականություն»:

Գրողեարական հեղափոխությունը—միջազգային հեղափոխություն է:—Անհրաժեշտ ե շեշտել, վոր կոմունիզմը չի կարող մեկ յերկրի գործ լինել, որինակ՝ ԽՍՀՄ: Մեր հանրապետությունը միայն առաջին քայլն արեց՝ կապիտալիզմից գետի կոմունիզմ: Վերջնական անցումն գետի կոմունիզմ կարող է միայն ամբողջ մարդկության գործ լինել: Բայց այն յերկիրը, վորի պրոլետարիատը առաջինը կատարեց հեղափոխությունը, իհարկե իր ուժերի կարողության չափով պետք է շարունակի դիմել գետի կոմունիզմ՝ անկախ այն հանգամանքից, վոր ինքը առայժմ մենակ է: Խորհուրդների հանրապետությունը այդ ճանա-

պարհով վորքան ավելի հեռու գնա, այնքան ավելի հեշտ կլինի այդ ճանապարհը մյուս յերկրների համար: Իսկ վոր ամբողջ աշխարհը այդ ճանապարհը կը նառի—դա անկասկած է: Մեռնող կապիտալիզմը, նեխվող կապիտալիզմը,—այդ կապիտալիզմը այլիս գոյություն ունենալ չի կարող: Նա իր դարն ապրել է, նա պետք է տեղի տա և տեղի կտա կոմունիզմին: Որուսաստանը համաշխարհային տնտեսության մի մասն եր: Նա միայն առաջինը (վորպես թույլ մաս) դուրս յեկավ իմարերիալիստական շղթայից: Նրան շուտով կհետևն և ուրիշները, քանի վոր ուրիշ յելք չկա մարդկության համար:

III

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

«Մարդկային հասարակության ամբողջ պատմությունը յեղել է դասակարգային պայքարի պատմություն»—գրում են Մարքսը և Ենգելը իրենց նշանավոր «Կոմունիստական Մանիֆեստ» բրոշյուրում։ Յեվ իսկապես։ Զհաշված նախապատմական, ամենավաղ շրջանը, հասարակության կյանքում մարդիկ բաժանված են յեղել դասակարգերի, վորոնք և անդադար պայքարել են իրար դեմ։ Այժմ ևս մարդկային հասարակության կյանքը գրտնվում է պրոլետարիատի և բուրժուազիայի միջև մղվող դասակարգային ահարկու պայքարի դրոշակի տակ։ Ուրեմն և անհրաժեշտ է ամենից առաջ քննել դասակարգերին վերաբերող հարցը, վորպեսզի պարզած լինինք հասարակության կառուցվածքն ու շարժումը։

Հարցին մոտենանք միքիչ հեռվից։ Տեսնենք թե ի՞նչպես եյին ապրում մարդիկ նախնական ժամանակներում, նախնական կոմունիզմի ժամանակաշրջանում։ Նախնական կոմունիզմը՝ Անդարդացած, թույլ տեխնիկան այն ժամանակ մարդկանց թելաղրում եր՝ գործի վրա աշխատել միասին։ Մարդը միայնակ խառնակարգացած է առաջին առաջարկությունը՝ Տեխնիկայի զարգացումը ունեցավ յերկու հետևանք։ Առաջին — համայնքի անդամների թիվը զգալի կերպով բարձրացավ. դրա պատճառն այն եր, վոր ավելի լավ տեխնիկան հնարավորություն տվեց մարդկանց՝ նույն յերկրամասի վրա մնալով՝ մեծ քանակությամբ մթերքներ ձեռք բերելու, ուրեմն և բազմաթիվ մարդկանց միմյանց հետ ապրելու։ Համայնքի գործնեյության շրջանը մեծացավ։ Պահանջ

խատել անկարող եր—նա չեր կարողանա վոչ իրեն համար կերակուր ձեռք բերել և վոչ ել իրեն պաշտպանել։ Դրա համար ել մարդիկ ապրում ու աշխատում եյին միասին։ Մարդկանց համայնքի ներսում չկար վոչ մի բաժանում, բացի սեռային (կանայք և տղամարդիկ) և տարիքի (ջանելներ և ահելներ) բաժանումից։ Համայնքները բաղկացած եյին լինում սովորաբար մի քանի տասնյակ մարդուց։ Յածը, թույլ տեխնիկան եր ստիպում այդպես վարվելու, այլապես պետք եր, որինակ, գնալ շատ հեռու անտառներ վորս անելու։ Իսկ դա շատ դժվար եր։ Դրա համար ել մարդկանց համայնքները 3—4—5 տասնյակ մարդուց ավելի չեյին լինում։ Աշխատանքային գործքերի պարզության և համայնքների փոքրաթիվ լինելու հետևանքով պահանջ չեր զգացվում հատուկ առաջնորդներ ունենալու։ Բոլոր աշխատունակ անդամները միասին կատարում եյին միենույն աշխատանքը՝ ընկերական հիմունքներով։ Մարդկանց այսպիսի կազմակերպությունը կրում է նախնական (նախադարյան) կոմունիզմ անունը։

Նահապետական իրավակարգի յեվ դասակարգերի ծագությունը։—Տեխնիկայի զարգացումը ունեցավ յերկու հետևանք։ Առաջին — համայնքի անդամների թիվը զգալի կերպով բարձրացավ. դրա պատճառն այն եր, վոր ավելի լավ տեխնիկան հնարավորություն տվեց մարդկանց՝ նույն յերկրամասի վրա մնալով՝ մեծ քանակությամբ մթերքներ ձեռք բերելու, ուրեմն և բազմաթիվ մարդկանց միմյանց հետ ապրելու։ Համայնքի գործնեյության շրջանը մեծացավ։ Պահանջ

զգացվեց ունենալու առաջնորդ, այսինքն մի այնպիսի փորձառու մարդ, վորը կարողանար ավելի նպատակահարմար բաշխել համայնքի անդամների ուժերն ու աշխատանքը:

Համայնքը քանի մեծանում եր այնքան ավելի մեծ իշխանություն եյին ստանում այդ առաջնորդները, աշխատանքը կազմակերպողները։ Նրանց թիմն ևս ավելանում եր։

Յերկրորդ—տեխնիկայի զարգացման հետևանքը յեղավ այն, վոր մի շարք աշխատանքներ արդեն կարելի յեր կատարել վոչ թե ամբողջ համայնքի ուժերով, այլ այդ հանայնքի ներսում գտնված միայն մի քանի առանձին խմբերի ուժերով։ Յեվ այն ամենը, ինչ ձեռք եյին բերում այդ խմբերից ամեն մեկն ինքնուրույն կերպով, այդ ամենը հետզհետե սկսվեց համարվել հենց այդ խմբին պատկանող։ Այսպես, սկզբում ծագեց խմբային (ի տարբերություն համայնականի) ոեփականություն, իսկ հետո արդեն նաև ընտանեկան, անձնական։

Առաջնորդ-կազմակերպիչների (կամ ինչպես ասում եյին՝ նահապետների) առկայությունը, մասնավոր սեփականության հետ կապված, համայնքը հետզհետե շերտափորեց և դրանի վերջո բաժանեց յերկու խմբի—
1) շարքային աշխատավորների—ապագա գյուղացիների և 2) նահապետ-առաջնորդների—այդ գյուղացիների ապագա տերերի։ Այսպես առաջացան դասակարգերը։

Այժմ մանրամասն քննենք դասակարգերի եյությունը։ Դա ամենից լավ կարելի յե անել՝ քննելով

կապիտալիստական հասարակության յերկու հիմնական դասակարգերը—բանվորներին և կապիտալիստներին։

Կապիտալիստական հասարակության հիմնական դասակարգերը—բոլոր բանվորները դասակարգ են կազմում նրա համար, վոր դրանք միակերպ դրության մեջ են գտնվում կապիտալիստական արտադրության մեջ։ Նրանք իրենց ֆիզիքական աշխատանքը կատարում են կապիտալիստների և նրանց ոգնականների (ինժեներների, վարպետների) առաջնորդությամբ։ Նրանք չեն տիրում արտադրության այն միջոցներին, վորոնցով աշխատում են։ Նրանց յեկամտի աղբյուրն ե—աշխատավարձը։ Նրանց շահերը—ուղղակի հակագիր են կապիտալիստների դասակարգի շահերին,—բանվորները ձգտում են նախ պակասեցնել և ապա բոլորովին վոչնչացնել շահագործումը։ Ընդհակառակը, կապիտալիստները արտադրության մեջ յեկամտար դեր են կատարում։ Հակառակ բանվորների դրության, հենց այդ կապիտալիստներն են վոր տիրում են այն ֆաբրիկաներին ու գործարաններին, վոր նրանք յեկամտարում են և վորտեղ աշխատում են պլոյետարները։ Կապիտալիստների յեկամտի աղբյուրը վոչ թե աշխատավարձն ե, այլ հավելյալ արժեքը, վոր քամում են բանվոր դասակարգից։ Յեվ իհարկե, կապիտալը շահագործում է բանվորներին միշտ ել շահագործելու։ ուրեմն կապիտալիստների շահերը միանգամայն հակագիր են բանվոր դասակարգի շահերին։

Դասակարգի հինգ հասկանիշները—Այսպիսով մենք տեսնում ենք, վոր դասակարգը բնորոշել կա-

բելի յե հինգ ամենագլխավոր հատկանիշներով. 1) արտադրության մեջ ունեցած դերով, 2) արտադրության միջոցների նկատմամբ ունեցած հարաբերությունով, 3) յեկամտի աղբյուրով և չափով, 4) շահերով, 5) շահագործության նկատմամբ ունեցած հարաբերությունով (շահագործող եթե շահագործվող):

Բացի այդ պետք եւ շեշտել, վոր յեկամտի աղբյուրը, ամեն մի դասակարգի շահերը և շահագործության նկատմամբ ունեցած հարաբերությունը վորոշվում են արտադրության մեջ ունեցած դիրքով և արտադրության միջոցների նկատմամբ ունեցած հարաբերությունով:

Դասակարգերի յենինյան բնորոշումը:—Լենինը այսպես եւ բնորոշում դասակարգը.—«Դասակարգեր են կոչվում մարդկանց այն մեծ խմբերը, վորոնք տարբերվում են հասարակական արտադրության պատմականորեն վորոշ սիստեմում իրենց գրաված տեղովը, արտադրության միջոցների նկատմամբ իրենց ունեցած հարաբերությամբ (մեծ մասամբ ամրացված և որենքներում ձևակերպված), աշխատանքի հասարակական կազմակերպության մեջ ունեցած իրենց դերովը, ապա ուրեմն—հասարակական հարստության՝ իրենց տրամադրված մասի ստացման ձևերով ու չափերովը: Դասակարգերը—դրանք մարդկանց այնպիսի խմբեր են, վորոնցից մեկը կարող է յուրացնել մյուսի աշխատանքը՝ շնորհիվ հասարակական տնտեսության վորոշ ձևերի մեջ իրենց գրաված տեղերի տարբերության»:

Ժամանակակից կապիտալիստական հասարակության մեջ կան շատ դասակարգեր: Այսպես, բացի

բուրժուազիայից և պլոյետարիատից, կարելի յե մատնանշել տեխնիկական ինստելիգենցիային (ինժեներներին, տեխնիկներին և այլն), քաղաքի մանր բուրժուազիային (որինակ՝ խանութպահներին), կալվածատերերին, գյուղացիներին: Վերջիններիս մասին միայն պետք եւ ավելացնել հետեւյալը.—Գեղագլական հասարակության այդ դասակարգի քայլայման պրոցեսը այնքան առաջ եւ գնացել, վոր ավելի ճիշտ կլիներ խոսել վոչ թե մեկ դասակարգի, այլ մի քանի դասակարգերի (շերտավորումների) մասին (մոտավորապես՝ կուլակներ, միջակներ, չքավորներ): Գյուղում ապրում են նաև բատրակներ (մշակներ): Նրանց հաճախ շփոթում են գյուղացիների հետ: Դա սխալ եւ: Բատրակները նույնպես բանվորներ են, միայն թե աշխատում են գյուղական տնտեսության մեջ:

Հիմնական դասակարգերը:—Այսպես ուրեմն—դասակարգերը շատ են: Բայց բոլորը չե, վոր միատեսակ կարենը դեր են կատարում: Ժամանակակից կապիտալիստական հասարակության մեջ, ինչպես նաև ուրիշ ամեն տեսակի հասարակության մեջ, հեշտ եւ տեսնել միայն յերկու հիմնական դասակարգ, վորոնք և վորոշում են այդ հասարակության ամբողջ կյանքը: Այդպիսիներն են—պլոյետարիատը և բուրժուազիան: Մնացած բոլոր դասակարգերը իրենց պայքարի մեջ գնում են կամ առաջինի, կամ յերկրորդի յետելից: Դա բացարձում են նրանով, վոր կապիտալիստական արտադրությունը, վորտեղ բանվոր դասակարգը աշխատում եւ բուրժուազիայի ոգտին, այժմ տնտեսապես տիրում եւ աշխարհում: Պրոդուկտաների գլխավոր մասսան ար-

տաղբվում ե կապիտալիստական յեղանակով, իսկ այստեղ, ուր այդ դեռևս չկա, ուր ապրանքների մեծ մասը արտադրում ե գյուղացիությունը, այստեղ կապիտալիստները բայց և այնպես ղեկավարում են արնատեսական կյանքը՝ իրենց ձեռքն առնելով ապրանքների վաճառումն ու գնումն գյուղացիներից:

Այսպես ուրեմն, կապիտալիստական հարաբերությունները ներկայումս ամբողջ աշխարհում (բացի ԽՍՀՄ) հանդիսանում են իշխող. հետևապես այդ հարաբերությունները առաջ բերող դասակարգերը—պրոլետարիատը և բուրժուազիան—հանդիսանում են հիմնական դասակարգերը:

Իհարկե, ուրիշ եպօխաներում (ժամանակաշրջաններում) ուրիշ դասակարգեր եյին կազմում հիմնական դասակարգերը: Ճիշտ այդպես և մեր Խորհրդային պետության մեջ հիմնական դասակարգերը, վորոնք փորոշում են մեր զարգացման հետագա ընթացքը, հանդիսանում են արդեն վոչ թե պրոլետարիատն ու բուրժուազիան, այլ պրոլետարիատն ու գյուղացիությունը, քանի վոր բուրժուազիայի իշխանությունը և տնտեսական ուժը արդեն վոչնչացված են: Իհարկե, մեզ մոտ բուրժուազիա գոյություն ունի, բայց նա յերկրորդական դեր ե կատարում:

ԴԱՍԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՅՔԱՐ

Վորվհետև ամեն մի դասակարգ հատուկ դրության մեջ ե գտնվում, ապա և նա ունի իր հատուկ շահերը: Դասակարգը այդ շահերը պաշտպանում է:

Կյանք ե անցկացնում, դրանց համար պայքարնեմ ե մյուս դասակարգերի գեմ: Ուստի և, ինչպես մենք արդեն շեշտել ենք, հասարակության ամբողջ պատմությունը դասակարգային պայքարի պատմություն ե:

Շատ հեռավոր ժամանակներից մարդկային հասարակությունը կառուցված ե յեղել այնպես, վոր մարդկանց մի քանի խմբերը աշխատում եյին, իսկ մյուսները ոգտվում եյին նրանց աշխատանքի արդյունքով: Միանգամայն բնական ե, վոր առաջինների շահերը, այսինքն շահագործվողների շահերը կայանում եյին նրանում, վոր իրենց աշխատանքի պրոդուկտների մեծ մասը չտան շահագործվողներին: Դրա համար ել ձնշված ու շահագործված մասսաները բազմիցս գործ են դրել պայքարի այս կամ այն յեղանակը, այն ե՝ աշխատանքից հրաժարվել են, ցույցեր, զինված ապստամբություններ են սարքել—նայած այս կամ այն պայմաններին:

Մյուս կողմից—իշխող, շահագործող դասակարգերի շահերը նրանց դրդում եյին ամրապնդել գոյություն ունեցող կարգերը, վորոնք նրանց հնարավորություն եյին աալիս հեշտ և ուրախ ապրելու: Դա նրանց ստիպեց կազմակերպվել ձնշվածների զայրույթը զըսպելու համար, և մեծ մասամբ գործ եյին դնում զինված բոնություն:

Իհարկե, իշխող դասակարգերը իրենց դրությունը պահպանում եյին նաև զինումներ անելով, ստորին դասակարգերի հետ համաձայնության գալով: Նրանք համաձայնվում եյին իրենց հասույթների մի մասից հրաժարվել, վորպեսզի պահպանած լինեն շա-

հագործման ամբողջ սիստեմը: Այդպիսի ռեֆորմներով, այսինքն մասնավոր զիճումներով նրանց հաջողվեց ժամանակավորապես հանգստացնել շահագործված մասսաները:

Պայքարն, իհարկե, նորեն բորբոքվում եր, վորովնետե իշխող դասակարգերի այդ փոքրիկ զիճումները լուրջ բարվորումներ չելին մտցնում ձնշվածների կյանքում: Բացի այդ, կեղեքողները միշտ ել ձգտում ելին հարմար բոպելին յետ վերցնել այն, ինչ իրենք ստիպված ելին յեղել դժվար բոպելին տալու: Դասակարգային շահերը յերկու կողմերին ևս նորեն դրդում ելին ընդհարվելու:

Դասակարգերը միշտ չե, վոր դասակարգային պայքարը ինտենսիվ (լարված) կերպով են մղում: Դա բացատրվում ե վոչ միայն զանազան պայմանների դրությամբ, այլ և նրանով, վոր այդ պայքարի անհրաժեշտությունը միշտ չե, վոր պարզ ե դասակարգի համար: Իշխող դասակարգը իհարկե այդ պայքարը շարունակ տանում ե, վորովհետե նրան լիովին հասկանալի յե իր դրությունը և ամեն տեսակի հարձակումներից իր դիրքը պաշտպանելու անհրաժեշտությունը: Բայց այլ ե ձնշված դասակարգի վիճակը:

Յեթե վերցնենք բանվոր դասակարգը, կտեսնենք, վոր նա միանգամից չե, վոր գիտակցում ե բուրժուազիայի դեմ պայքարելու անհրաժեշտությունը:

Բանվոր դասակարգի կրած ձնշումները:—Բանվոր դասակարգը կապիտալիստական հասարակության մեջ ձնշված ե առնվազն յերեք կերպ—1) տնտեսական, 2) քաղաքական և 3) կուլտուրական կողմերով:

Տնտեսական ձնշումնը արտահայտվում ե նրանում, վոր բանվորը վողորմելի աշխատավարձ ե ստանում: Նրա ստացածը հազիվ հազ ե բավականացնում երեն և իր ընտանիքին: Մյուս՝ ավելի մեծ մասն այն ամենի, ինչ բանվոր դասակարգը ստեղծում ե—անցնում ե շահագործողներին:

Քաղաքական ձնշումնը կայանում ե նրանում, վոր կտրում են բանվոր դասակարգի հասարակական իրավունքները: Թե՛ յերկը կառավարման գործում, թե՛ իրենց պրոֆեսիոնալ և քաղաքական կազմակերպությունների ստեղծման ու գործնեյության խնդրում և թե՛ մյուս՝ հասարակական-քաղաքական կյանքի հազարավոր արտահայտություններում (լրագրային պլոպագանդ, ցույցեր և այլն) բանվոր դասակարգը սահմանափակված ե, նրա իրավունքները մեծ չեն և այդ իրավունքներն ամեն կերպ կրծատում են:

Վերջապես, կուլտուրական կողմով բանվոր դասակարգը ձնշված ե այնպես, վոր նրան ընդհանուր առմամբ հնարավորություն չեն տալիս սովորելու, գիտելիքներ ձեռք բերելու: Իսկ գիտելիքները իշխող դասակարգի ձեռքում կազմում են ամուր շղթա, վոր զցած են բանվոր դասակարգի վիզը:

Այդ յերեք տեսակի ձնշումները սերտ կապված են միմյանց հետ՝ իրարմով պայմանավորվելով և իրարմացնելով: Դրանք պլոպետարիատին հնարավորություն չեն տալիս իսկույն ըմբռնելու իր դրությունը և այն խնդիրները, վոր դրված են իր առաջ: Դրա համար ել դասակարգային պայքարը իսկույն չե, վոր զարգանում ե: Պրոլետարիատը միայն հետզհետե սկսում

Ե հասկանալ, թե իր շահերը վորքան անհաշտելի յեն-
իշխող դասակարգերի շահերի հետ և թե վորքան ան-
հրաժեշտ ե վերջինների դեմ վճռական պայքար
մղելը։ Նույն բանն ե կատարվում նաև մյուս ձնշված
դասակարգերի մոտ։

Այսպիսով, դասակարգային պայքարը միշտ չե,
վոր ծավալված կերպով ե առաջ գնում, այլ մեծ մա-
սամբ անզարգացած և նույն իսկ սաղմային բնույթ-
ե կրում։ Այդ տեղի յե ունենում այնտեղ, ուր ճշնշ-
ված դասակարգը դեռևս քիչ ե գիտակից, լավ չ-
ըլքընում իր շահերը և պայքարի անհրաժեշտու-
թյունը։

Դասակարգային պայքարի բազմված ձեվը։ —
Կարելի յե ցույց տալ դասակարգային չծավալված
պայքարի նաև մի ուրիշ տիպ. այդպիսի պայքարի մեջ
դասակարգը բավական պարզ գիտակցում ե իր շա-
հերը, բայց կյանքի պայմանները նրան հնարավորու-
թյուն չեն տալիս լայն և բացարձակ պայքար մղելու։
Այդ տիպի դասակարգային պայքարի թագնված ձեի
հրաշալի որինակ կարելի յե այժմ դիտել մեր յեր-
կրում։

Նոր տնտեսական քաղաքականությանը անցնելու
հետևանքով, կուլակությունը գյուղում աճելու վորոշ
հնարավորություններ ստացավ։ Միանգամայն հաս-
կանալի յե, վոր կուլակությունը, իր վոտքերի տակ հող
զգալով, սկսում ե խորհել հետագայի մասին։ Խորհր-
իշխանությունը կուլակներին հնարավորություն չի
տալիս իրենց շահագործական աշխատանքը ծավա-
լելու։ Դրա համար ել կուլակությունը բացասաբար

Ե վերաբերվում գյուղխորհուրդների գործնեյությանը,
ձգտում ե աղղեցություն ունենալ նրանցում՝ վոր-
պեսզի իր գիծը առաջ տանի։ Բայց՝ համաձայն մեր
որենքների՝ նրանց թույլ չեն տալիս խորհուրդների
մեջ մտնելու, և նրանց ամեն մի հանցավոր քայլը
Խորհրդային մամուլը (լրագրները) գյուղկորների մի-
ջոցով մերկացնում ե։ Դրա համար ել կուլակները
տանել չեն կարողանում գյուղկորներին։ Յեկ կուլակը
հարձակման ե անցնում։ Վերջին տարիներս հազվա-
գյուտ չեյին այնպիսի փաստեր, յերբ կուլակները
գյուղկորներին ծեծում, սպանում եյին։ Ի՞նչ ե նշա-
նակում այս յերկույթը։

Ծեծը, սպանությունը և այլ սպառնալիքները—
դրանք կուլակային դասակարգային պայքարի թագնված
ձեն ե։ Կուլակությունը տեսողի միջոցով աշխատում ե
գյուղում ստեղծել այնպիսի պայմաններ, վոր գյուղկոր-
ները այլևս չկարողանան իրենց գործը շարունակել,
իսկ իրենք հնարավորություն ունենան գյուղում իրենց
մագիլները սրելու։ Վորովհետեւ պրոլետարիատի զիկ-
տատուրայի որոք նրանք չեն կարող իրենց դասակար-
գային պայքարը բացարձակ մղել, ուստի և դա կա-
տարում են թագնված ձևով։ Գյուղկորներին սպա-
նելը—կուլակության դասակարգային պայքարի ժա-
մանակակից ձևերից մեկն ե։

Կուլակների դասակարգային այդ ձեի պայքարը
բացատրվում ե տիրող պայմաններով (Խորհրդային իշ-
խանություն), և վոչ թե իրենց շահերի գիտակցության
բացակայությամբ։ Իսկ բանվոր դասակարգը իր պայ-
քարը սկզբում տանում ե սաղմային, անզարգացած

ձեռվ՝ շնորհիվ նրա, վոր դեռևս լիովին չի ըմբռնում
իր դրությունը:

Դասակարգային զործակցության ձեվեր, Առաջին
ձեվը — հիմնական շահերը զոհաբերվում են ժա-
մանակավոր շահերին: — Դասակարգային պայքարը
ծավալելու համար բոլոր դասակարգերը, ինչպես մենք
գիտենք, միատեսակ չեն շահագրգուված: Յեթե ճնշված-
ները ըստ իրենց դասակարգային գիտակցության
լայնացնում ու խորացնում են իրենց պայքարը, ապա
իշխող դասակարգերը, ընհակառակը, ձգտում են դա-
սակարգային պայքարը մեղմացնել կամ նույնիսկ
վոչնչացնել: Դա նրանց համար շահավետ ե: Զե վոր
դասակարգերի պայքարի վոչնչացումը կհավերժացներ
այն հարաբերությունները, վորոնք շահավետ են իշ-
խող դասակարգի համար: Ուստի և բուրժուազիան
ձգտում ե, որինակ, բանվոր դասակարգի յեռանդը
ուրիշ կողմ ուղղել, այդ պայքարից հեռու պահել:
Յեվ այդ նրան հաջողվում ե այնտեղ և այն ժամա-
նակ, վորտեղ և յերբ պլուտոսարիատը անբավարար
չափով ե հեղափոխականորեն դաստիարակված:

Այսպես, որինակ, իմպերիալիստական յերկրներից
մեծ մասի բանվորները իմպերիալիստական պատե-
րազմի ժամանակ պաշտպանեցին իրենց բուժուազիա-
յին, Բանվորները շահագրգուված եին նրանով, վոր
«իրենց» բուժուազիան հաղթի: Նրանք հույս ունե-
յին, վոր հաղթության հետևանքը կլինի իրենց դրու-
թյան բարվոքումը, իսկ պարտությունը իր հետ կը բրի
սով և աղքատություն: Բայց մենք գիտենք, վոր
բուժուազիային այդ կերպ պաշտպանություն ցույց

տալը հասցնում ե բանվոր դասակարգի հեղափոխա-
կան պայքարի վոչնչացման, բուրժուազիան իրավա-
կարգի ամրացման: Պրոլետարիատի հիմնական շահն ե—
կապիտալիզմը վոչնչացնել և անցնել դեպի կոմու-
նիզմ: Ուրեմն իմպերիալիստական յերկրների բանվոր
դասակարգը տարվելով ժամանակավոր, յերկրորդա-
կան շահերով, գոհաբերեց իր մշտական, հիմնական
շահները:

Դասակարգային զործակցության յերկրորդ ձեվը.
դասակարգային մշտական շահերի միացյալ պաշտ-
պանություն: — Լինում ե դասակարգերի նաև ուրիշ
տեսակի գործակցություն: Դա, որինակ, մեր ԽՍՀՄ
մեջ բանվորների և գյուղացիների (չքավորների ու
միջակների) դաշինքն ե: Այդ դաշինքի հիմունքները
բոլորովին այլ են: Գյուղացին գնում ե բանվորի յե-
տերից: Իսկ բանվորը դիմում ե դեպի կոմունիզմ: Դա
ոգտական է գյուղացու համար: Իհարկե, այս:

Ի՞նչպես ե ապրում գյուղացին կապիտալիզմի
որոք: Նրա կյանքի մակարդակը բարձր չե: Գյուղա-
ցու տնտեսությունը հետզհետե ավելի ու ավելի յե-
քայքայվում, իսկ գյուղացիների ամբողջ մասսաներ
դառնում են վարձու բանվորներ: Միայն կուլակների
մի չնչին մասն ե, վոր ընկնում ե բուրժուազիայի
շարքը: Այսպես վոր՝ գյուղացիների բազմամիլիոն
մասսաների խոշոր մեծամասնության համար կապի-
տալիզմը նշանակում է գյուղացիական տնտեսության
դանդաղ, տանջալից մահացում:

Հեղափոխական շինարարությունը ևս նշանակում
է գյուղացիական առանձին տնտեսության աստիճանա-

կան վոչնչացում, սակայն արդեն վոչ թե քայքայման ճանապարհով, այլ, ընդհակառակը, ավելի բարձր աստիճանի վրա բարձրացման ճանապարհով։ Մենք արդեն ցույց տվինք, վոր կոմունիզմը գյուղ կմտնի բարձր տեխնիկայի, ելեկտրիֆիկացիայի միջոցով։ Այդպիսով, գյուղացիների մեծամասնության շահերը պահանջում են բանվոր դասակարգի կոմունիստական շինարարության գործի պաշտպանություն։

Դասակարգերի այդպիսի գործակցությունը այլ ընույթ ե կրում։ այստեղ յերկու դասակարգերի հիմնական շահերը զուգադիպվում են։ — Ներկա սլայմաններում թե պրոլետարիատը և թե գյուղացիությունը շահագործումից, աղքատությունից և այլասերումից ազատվել կարողեն միմիայն կոմունիստական կարգերին անցնելով։

Հիմնական դասակարգերի պայմարը՝ դաշնակից ձեռք բերելու համար։ — Հիմնական դասակարգերը պայքարում են վոչ միայն անմիջականապես իրար դեմ, այլ և ձգտում են այդ պայքարի մեջ իրենց համար ձեռք բերել այնպիսի դաշնակիցներ, վորոնք ընդունակ լինին ուժեղացնել նրանց զորությունը։ Դրա համար ել մեծ կամպանիա յե տարվում՝ իրենց կողմը գրավելու այնպիսի միջանկյալ դասակարգեր, վորոնք մոտ են հիմնական դասակարգերից մեկնումեկին։ Այդպիսի պայքար համաշխարհային մասշտաբով տեղի յե ունենում, որինակ, պրոլետարիատի և բուրժուազիայի միջև՝ գյուղացիության համար։

Մենք արդեն ցույց տվինք, վոր գյուղացիության մեծամասնության և պրոլետարիատի շահերը վորոշ չափով զուգադիպվում են։ Բայց ինարկե գյու-

ղացին—սեփականատեր ե։ Դրանով ե բացատրվում այն, վոր գյուղացին դժվարանում է իսկույն ըմբռնել, վոր իր շահերը զուգադիպվում են բանվոր դասակարգի շահերին։ Յեվ հենց դրանով ե բացատըրվում, վոր բուրժուազիային դեռևս հաջողվում ե (կապիտալիստական յերկրներում) իր ազգեցության տակ առնել գյուղացիության մեծամասնությանը։ Բանվոր դասակարգի և բուրժուազիայի միջև մղվող պայքարի յելքը բավական չափով կախում ունի նրանից, թե արդյո՞ք բանվոր դասակարգը կկարողանամ իր յետևից տանել գյուղացիության մեծամասնությանը։

Ընկ. Լենինը Ռուսաստանի վերաբերմամբ այդ տոթիվ զրում ե։ — «Ռուսաստանի ամբողջ քաղաքական պատմության մեջ ձգվում ե այս հարցը—արդյոք բանվոր դասակարգը պետք ե գյուղացիությանը առաջնորդի գեպի առաջ, դեպի սոցիալիզմ, թե լիբերալ բուրժուազիան պետք ե գյուղացիությանը յետ մղի ու նրան կապիտալիզմի հետ հաշտեցնի»։

Բուրժուազիան հենվում ե գյուղացիության մեծամասնության այն նախապաշարմունքի վրա, վոր գյուղացիությունը իբր թե հնարավորություն ունի գոյություն ունենալու և զարգանալու կապիտալիզմի որոք։ Իսկ բանվոր դասակարգը, ընդհակառակը, գյուղացիներին ցույց ե տալիս, ապացուցում ե, վոր կապիտալիզմի որոք կապիտալիստները անխռուսափելիորեն պետք ե գյուղացիությանը շահագործեն և նրան հետզհետե քայքայեն։ Բանվոր դասակարգը ցույց ե տալիս նաև միակ յելքը գյուղացիության լայն մասսաների համար, այն ե՝ պաշտպանել բանվոր դասակարգին՝ պայքարելու

բոլոր և ամեն տեսակի շահագործողների դեմ: Իսկ բանվոր դասակարգը իշխանությունը իր ձեռքը վերցնելուց հետո դեկավարում ու գյուղացիությանը ողնում ե՝ կոռպերացիայի և մեքենայացման (մանավանդ ելեկտրիֆիկացիայի) միջոցով դիմելու դեպի կոմունիզմ:

Գյուղացիական մասսաների քայլայման պրոցեսն ամբողջ աշխարհում թեև դանդաղ, բայց և նախապատրաստում ե՝ գյուղացիության ավելի մեծ մասին պրոլետարիատի կողմն անցնելու, մանավանդ չքավորխակին և գաղութային յերկրների գյուղացիության, վորոնց անխնա շահագործում ու քայլայում են իմպերիալիստական յերկրները:

Պայմանի զարգացումը բոլոր դասակարգերին միացնում և միայն յերկու իրար թշնամի բանակենքի մեջ: — Դասակարգային պայքարի զարգացումը ճնշված դասակարգերին հետզհետե ավելի ու ավելի յետիպում սերտ միանալ իրենց շահագործողների դեմ միասին պայքար մղելու համար:

Միանգամայն հասկանալի յե, վոր, դասակարգային պայքարի ծավալման հետևանքով, շահագործող դասակարգերն ևս միանում են՝ հեղափոխության դեմ միասին պայքարելու համար: Նրանց տարածայնությունները հարթվում են՝ շահագործման հնարավորությունները բոլորովին կորցնելու անեղ վտանգի առաջ: Այսպես, որինակ, ոռւս բուրժուազիան (առևտրական, արդյունաբերական և ֆինանսական), վորի ներսում մինչև հեղափոխությունը պայքար եր տեղի ունենում, վորը պայքարում եր կալվածատերերի դեմ, — հեղափոխությունից հետո միասնական ֆրոնտ կազմեց:

բանվորների և գյուղացիների դեմ: Դասակարգային մանր շահերը, շահագործող խմբերի ու դասակարգերի ներսում մղվող պայքարը սկսեցին աննկատելի դառնալ՝ համեմատությամբ դասակարգային հիմնական շահի—շարունակել շահագործական կյանքը:

Մի խոսքով, բուրժուական հասարակության զարգացմամբ զարգանում ե նաև դասակարգային պայքարը: Այդ պայքարի ընթացքում հարթվում են բուրժուական կուսակցությունների միջև յնդած մանր, վաշեյական տարածայնությունները, ամբողջ հասարակությունը հետզհետե ավելի ու ավելի յետ բաժանվում յերկու թշնամի՝ բանակների — 1) շահագործողների բանակ, վորին զլուխ ե անցած խոշոր բուրժուազիան և 2) շահագործվողների բանակ, վորին զլուխ ե անցած արդյունաբերական պրոլետարիատը: Նրանց պայքարի աղմուկից հին աշխարհը ավելի ու ավելի յետ անհանգստանում: Առանց այդ ուժերի բաղխաման չեն կարող լուծվել մարդկության առաջ ծառացած խնդիրները: Միայն աշխատավորության և շահագործված բանակի հաղթանակն ե, վոր ամբողջ մարդկությանը հնարավորություն կտա առաջ ընթանալու:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ինյո՞ւ յե հարկավոր կուսակցությունը: — Այսպես ուրեմն, դասակարգերը տարբեր ժամանակներում գտնվում են դասակարգային գիտակցության տարբերաստիճանների վրա. բայց այդ բոլորը չե, ամեն ըստ

դասակարգը կարելի յե բաժանել տարբեր գիտակ-
ցություն ունեցող զանազան խավերի։ Որինակ—կա-
պիտալիստական իրավակարգը հնարավորություն չի
տալիս բանվոր դասակարգի բոլոր անդամներին միատե-
սակ զարգացնելու իրենց դասակարգային գիտակցու-
թյունը։ Նա բանվորներին դնում ե զանազան դրու-
թյան մեջ։

Կան ավելի բարդ և ավելի հասարակ գործ կա-
տարող բանվորներ, բարձր կվալիֆիկացիա, միջակ
կվալիֆիկացիա ունեցողներ և սեաշխատանք կատա-
րող բանվորներ։ Գոյություն ունի լավ և վատ աշխա-
տավարձ։ Բանվորները աշխատում են խոշոր, միջակ,
փոքր և շատ փոքր (1—2—3 բանվոր) ձեռնարկու-
թյուններում։ Մի շարք ձեռնարկություններում տեխ-
նիկան բարձր ե, մյուսներում—ցածր, և այն և այն։
Աշխատանքի այդպիսի տարբեր պայմանները առաջ
են բերում բանվորների տարբեր խավերի տարբեր
զարգացում։ Բացի դրանից, այլ ինդիվիւմ նշանակա-
լից դեր ե խաղում և այն հանգամանքը, վոր բանվոր-
ների մի քանի խավեր նար ե վոր դուրս յեն յեկած
գյուղից և կամ տարվա մեջ 6 ամիս աշխատում են
արդյունաբերության վրա վորպես բանվորներ, իսկ
մնացած ժամացակը պարապում են գյուղական տըն-
տեսությամբ (գյուղացիներ), մինչդեռ մյուս բանվո-
րական մասսան վաղուց և շարունակ արդյունաբե-
րական բանվորներ են։ Այդ բազմազան պայմանների
հետևանքն այն ե լինում, վոր դասակարգային կատար-
յալ գիտակցություն են ձեռք բերում վոչ բոլոր բան-
վորները միանգամից, այլ նախ—առաջավոր բանվոր-

ները՝ մի փոքրիկ խավ։ Յեվ հենց այդ բանվորները,
հեղափոխական ինտելիգենցիայի (պրոլետարիատի կողմն
անցած) հետ միասին կազմում են բանվոր դասակարգի
առաջապահ ջոկատը—նրա կուսակցությունը։ «Կապի-
տալիստական հասարակության մեջ—գրում ե ընկ.
Լենինը— նույնիսկ առաջավոր դասակարգը, պրոլե-
տարիատը, անգոր ե ստեղծելու այնպիսի կուսակ-
ցություն, վոր ընդգրկեր ամբողջ դասակարգը։ Մեր
կուսակցությունը—գիտակից, առաջավոր մարտիկների
միությունն ե, վոր պայքարում ե բանվոր դասակարգի
ազատագրության համար»։

Կուսակցությունը դասակարգի մի մասն ե։ Կու-
սակցությունը դասակարգի մեջ յի բոծվում։ Կու-
սակցությունը, կազմելով դասակարգի մասը, չի լուծ-
վում նրանում։ Նա նույնն ե—ինչպես կմախքը մարդ-
կային որդանիզմում։ Նա իր շաքարյան անդամներին
համախմբում, միացնում ե և պայքարի ուղղում։ Ամ-
բողջ դասակարգը, շնորհիվ իր միջավայրում ունեցած
վերնիշյալ տարբերության, չի կարող կազմակերպված
պայքար մղել՝ յեթե չկա այնպիսի կոլեկտիվ, վորը
կարողանար տվյալ դասակարգի բազմազան խավերը
միացնել, շրջապատող պայմանները ժամանակին գնա-
հատել և պայքարի համապատասխան լոգունգներ տալ։
Դա անում ե կուսակցությունը, վորը դասակարգի
ավելի գիտակից և նվիրված մասն ե կազմում։

Յեվ յեթե կուսակցությունը կազմում ե դասա-
կարգի կմախքը, ապա միանգամայն հասկանալի յե,
վոր նա չի կարող, առանց ի վնաս դասակարգի, նրա
մեջ լուծվել։ Դասակարգը առանց կուսակցության

դառնում ե անձեւ մասսա, գուցե և հեղափոխական, բայց անզոր վոչինչ անելու, քանի վոր նրանում չկաներքին հենարան։ Ուստի և կուսակցության համար իմաստ կարեոր ե—չջնջել իրեն և դասակարգի միջն յեղած սահմանները։ Ավելին ևս, կուսակցությունը դասակարգի հետ պետք ե կապված լինի հսկայական կարեռություն ունեցող սերտ ու բազմազան կապերով, վորոնց մասին խոսք կինի ներքեւ։

Կուսակցության յորս եղեմենսները։ — Քննելով կուսակցությունը, մենք կարող ենք նիշել չորս ելեմենտներ, վորոնք բնորոշում են նրան. դրանք են—ա) կուսակցության պատմությունը, բ) կուսակցության ծրագիրը, գ) կուսակցության տակտիկան և դ) կուսակցության կազմակերպությունը։

ա) Կուսակցության պատմությունը։ — Կուսակցության պատմությունը ցույց ե տալիս այն ետապները, վորով նա անցել ե։ Նա ցույց ե տալիս, թե ի՞նչպես ե կազմվել տվյալ քաղաքական կուսակցությունը, ի՞նչպես ե նա վճռել այն բոլոր հարցերը, վորոնք քաղաքական կյանքի հետևանքով ծառացած են յեղել նրա առաջ, ի՞նչպես ե նա աճել զարգացել։

Ուստի և կուսակցության պատմությունը դաստիարակության կարեռագույն ելեմենտ և հանդիսանում տվյալ կուսակցության բոլոր անդամների համար։ Ուստի և յուրաքանչյուր կոմունիստի համար անհրաժեշտ ե յուրացնել Համ. կ. կ. (բ) պատմությունը, վորով հետև միայն այդպիսի կարելի յե յուրացնել բոյլելիմի հիմնական սկզբունքները։ Կուսակցության պատմությունը բազմաթիվ զանազանակերպ փաստեր ե

առաջիս։ Այդ բոլոր փաստերն ուսումնասիրելով, տեսնում ենք, վոր, չնայած արտաքին տարբերություններին, կուսակցության ուղին միշտ ել վորոշվել ե մի քանի ընդհանուր սկզբունքներով։ Միշտ ել կուսակցական գիծը տարրվել ե այս հիմնական ուղղությամբ—հեղափոխականորեն պաշտպանել պրոլետարիատի պատմական մեծ դերը, անինա պայքարել շահագործող դասակարգերի դեմ, ձգտել վոչնչացնելու դասակարգային հասարակությունը։ Այդ հիմնական սկզբունքը բարձր լավ կը մը բոնվեն, յերբ քննենք, թե ի՞նչպես նրանք տարբեր դեպքերում տարբեր են կիրառվել. այդպես վարվելով, հնարավորություն կունենանք այդ փաստերը բազմակողմանի յուրացնելու և սովորելու, թե ամեն մի կոնկրետ եպոխայում ի՞նչպես պետք ե պայքարել հոգուտ գրանց։ Կուսակցական տրադիցիան, այսինքն այն, թե կուսակցությանը իր գոյությանը նմֆացքում ի՞նչպես ե լուծել բոլոր հարցերը,—մեզ տալիս ե կուսակցության պատմությունը։ Կրկնում ենք, վոր դա ամեն մի կուսակցության, մանավանդ Համ. կ. կ. (բ), չափազանց կարեռ ելեմենտ (կարեռ կողմ) ե հանդիսանում։ Մենք Համ. կ. կ. (բ) վորովես որինակ ընտրեցինք նրա համար, վոր նա ունի ավելի յերկար ու բարդ պատմություն, վորը դասակարգային հեղափոխական պայքարի հսկայական փորձ ե կազմում։ Նրա ունեցած փորձի վրա այժմ սովորում են ամբողջ աշխարհի բոլոր կոմկուսակցությունները։ բ) Կուսակցության ծրագիրը։ — Կուսակցության ծրագիրը—տվյալ գրության (վորի մեջ նա աշխատում ե) գնահատության ճիշտ ձևակերպումն (արտա-

հայտությունն) ե, և ցուցումն այն նպատակների, վորոնց նա ձգտում եւ: Քաղաքական կուսակցությունները ամենից առաջ դրանով են իրարից տարբերվում: Ճիշտ ե, միշտ չե՛, վոր կուսակցությունները կյանք են անցկացնում այն, ինչ պահանջում են իրենց ծրագրներում: Այդ ծրագրները հաճախ այնպես են կազմվում, վորպեսզի մասսաներին գրավեն—և միմիայն դրա համար. իսկ իրականության մեջ կուսակցությունը ուրիշ բանի յե՛ ձգտում: Այդ միջոցին են սովորաբար դիմում բուրժուական կուսակցությունները, ինչպես նաև մանր-բուրժուական կուսակցությունները, որինակ՝ սոցիալ-դեմոկրատները: Բայց վորովնետես կապիտալիստական իրավակարգի զարգացումը դրան տանում ե դեպի կործանում, իսկ այդ բոլոր կուսակցությունները (նաև սոցիալ-դեմոկրատները) աշխատում են այդ իրավակարգը փրկել, ապա և նրանք ստիպված են լինում գործել խաբեյությամբ: Յեթե նրանք իրենց նպատակները պարզ ցույց տային—աշխատավոր մասսաները նրանցից յերես կդարձնեյին: Ուստի և նրանք աչքակապությամբ են պարապում—լավ ծրագրներով ու անուններով աչք են շացնում: Որինակ—իր եյությամբ հականեղափոխական կադետական կուսակցությունը Ռուսաստանում կոչվում եր «Ազգային ազատության» կուսակցություն: Նույն ե կատարվում և ուրիշ բոլոր յերկրներում:

Միայն իսկական-բանվորական և մասամբ՝ հեղափոխական-գյուղացիական կուսակցությունների ծրագրներն են արտահայտում իսկապես այն, ինչին այդ կուսակցականները ձգտում են:

Իհարկե, յուրաքանչյուր կուսակցության ծրագիրը ժամանակի ընթացքում փոխվում եւ: Այսպես, որինակ, մինչեւ Համականք (կ. կ. ՎIII համագումարը (1919 թ.) կուսակցությունը դեկավարվում եր իր հին ծրագրով, վորը ընդունված եր գեռ 1903 թվին (կուսակցության II համագումարում): Թեև կուսակցությունը փաստորեն նոր ծրագրով ե աշխատում գեռ 1917 թվից:

Ինչով ե բացատրվում այդ ծրագրների տարբերությունը: Նրանով, վոր հին ծրագիրը կազմված ե յեղել մինչեւ միապետության կործանումը, իսկ վերջին ծրագիրը — միապետության և բուրժուազիայի կործանումից հետո: Նոր խնդիրները պահանջում եյին նոր ծրագիր: Իհարկե, այդ ծրագրների մեջ ընդհանուրն այն ե, վոր կուսակցությունը ձգտում ե գասակարգային հասարակությունը վոչնչացնելու և հասնելու կոմունիզմին: Բայց առաջին ծրագրում վորպես մոտակա պահանջ, կուսակցությունը դրել եր՝ միապետության կործանումը, դեմոկրատական բուրժուական կարգերի (Հիմնադիր Ժողովի գլխավորությամբ) սահմանումն: Կուսակցությունը ձըգտում եր ստեղծել այնպիսի պայմաններ, վորաեղ կարողանար համեմատաբար ազատ ընթացք տալ պրոլետարիատի պայքարին ընդդեմ բուրժուազիայի և հոգուտ պրոլետարիատի դիկտատուրայի ու կոմունիզմի: Ընդհակառակը, այժմյան ծրագիրն ասում ե այն միջոցների մասին, վոր կուսակցությունը պրոլետարիատի դիկտատուրայի որոք ձգտում ե կիրառել՝ այդ դիկտատուրան ամրապնդելու համար:

Կուսակցության ծրագիրը մեծ դեր է խաղում, քանի վոր նա տալիս ե պլատֆորմ, վորի վրա միանում են նրա բոլոր անդամները։ Կուսակցությունը դասակարգի (և սրան հարող ուրիշ ելեմենտների) մի այնպիսի մասն ե, վոր իրենից ներկայացնում է համախոների միություն։ Դրա համար ել կուսակցության մեջ մտնողներից նախ պահանջվում է ընդհանուր ծրագիրն ընդունել, այսինքն համաձայն-վել ծրագրի մեջ առաջադրված բոլոր պահանջներին։

գ) Կուսակցության տակտիկան։—Ամեն մի կուսակցություն ձգտում է իր ծրագիրը կյանքում իրականացնել։ Կուսակցության այդ ձգտումին հակադրովում են ուրիշ կուսակցությունների (վորոնք ներկայացնում են ուրիշ դասակարգեր) նման ձգտումները։ Կուսակցությունը ստիլված է պայքարել—յերբեմն՝ ճնշում գործ դնել, յերբեմն՝ զիջում անել յերբեմն ել՝ ուրիշ վորեւ կուսակցության հետ համաձայնության գալ։ Կուսակցությունը յերբեմն ստիլված է լինում անցնելու պարլամենտ, յերբեմն՝ զինված ազստամբություն բարձրացնել, յերբեմն ել՝ դրա դեմ դուրս գալ։ Ուղիները, վորոնցով ոգտվում է կուսակցությունը, կարող են լինել չափազանց բազմազան։ Այսպես, որինակ, կոմկուսակցությունը Անդիայում ստիլված է այլ կերպ վարվելու, Գերմանիայում—մի ուրիշ կերպ, ԽՍՀՄ—յերրորդ կերպ։ Այդ տարբերությունները բացատրվում են պայմանների զանազանությամբ։ Այն միջոցները, վորոնցով կուսակցությունը իր նպատակները կյանքում իրագործում ե— կոչվում են կուսակցության տակտիկա։

Յերբ առաջադրվում եյին այսպիսի հարցեր—արդյո՞ք պետք եր կոչ անել բանվորներին, վոր մասնակցեն այն Պետական Դումայի ընտրություններին, վորը ցարական կառավարությունը ստեղծեց 1905 թվի հեղափոխության ազգեցության տակ, —թե՛, ընդհակառակն, այդ Դուման պետք եր բոյկոտել։ Արդյո՞ք պետք եր մասնակցել բանվորական այնպիսի կազմակերպություններին, վորոնք չեյին հետապնդում հեղափոխական նպատակներ։ Ի՞նչպիսի վերաբերմունք պետք եր ցույց տալ դեպի իմպերիալիստական պատերազմը—պաշտպանել իր բուրժուական կառավարությունը, թե՛ նրա դեմ ավստամբություն պատրաստել։ Ի՞նչպես պետք եր վերաբերվել Բրեստի հաշտությանը, վոր Խորհրդային հանրապետության վզովը կապեցին գերմանական իմպերիալիստները—արդյո՞ք պետք եր շարունակել պատերազմել, թե՛ ընդունել ամենածանր պայմանները, և այն և այն,—այդ բոլոր հարցերը տակտիկական հարցեր եյին։ Նման հարցերի ուղիղ լուծումը մեր կուսակցությանը մոտեցնում եր իր ծրագրի իրականացման։

Տակտիկական հարցերի վերոհիշյալ որինակներից պարզ ե, վոր միանգամ ընդմիշտ սահմանաված ճշմարտություններ չկան։ Միևնույն կուսակցությունը զանազան պայմաններում տարբեր վերաբերմունք ե ցույց տալիս դեպի վորեւ գործողություն՝ նայած թե պայմաններն ի՞նչպես են։ Այդպես եր վարվում, որինակ, չամ. կ. կ. (բ)՝ իմպերիալիստերի գործարքների (Բրեստի հաշտությունը, տես եջ 33) հանդեպ՝ թե մինչեւ իշխանությունը գրավելը և թե գրանից հետո:

Նույնպիսի տարբերություն ենք մենք տեսնում։ Կաել Պետական Դումային մասնակցելու խնդրում։ 1905 թ. և 1906 թվի սկզբին բոյլշևիկները դեմ եյին Դումայի ընտրություններին, իսկ հետագա տարիներին, ընդհակառակը, ձգտում եյին այնտեղ անցկացնել իրենց ներկայացուցիչներին։ Տակափան զանազան եր։ Ինչու եր նա այդպես փոխվում։ Առաջին շրջանում բոյլշևիկյան կուսակցությունը յելնում եր այն հանգամանքից, վոր հեղափոխությունը առաջ ե գնում, հետեապես չպետք ե բավականանալ այն փշտանքներով, վոր գցում եր ցարը, այլ պետք եր բոլորվին կործանել ցարիզմը։ Դումային մասնակցելը կարող եր բանվորների աչքը կապել, հեղափոխական եներգիան պակասեցնել։ Յերկրորդ շրջանում արդեն պարզ դարձավ, վոր հեղափոխությունը պարտված ե։ Հետեապես պետք եր վորոնել զանազան ուղիներ՝ հին իրավակարգը մերկացնելու, բանվորական մասսաները կազմակերպելու համար։ Պրոլետարական պատգամավորների ներկայությունը դումայում—դրան ոգնեց։ Դումայի ամբիոնից կարելի յեր մերկացնել իշխող դասակարգերի և կառավարության ամբողջ ստորությունը, պատգամավորները ավելի հեշտությամբ կարող եյին լրագրներ հրատարակել, կուսակցական աշխատանքին ոգնել և այն։ Ուստի և կուսակցությունը տակառկական ուրիշ գիծ ընդունեց, —վորոշեց Դումային մասնակցել՝ Դուման ոգտագործելու նպատակով։

Կուսակցություն յեվ դասակարգ։ —Այժմ խոսենք կուսակցության՝ իր սեփական դասակարգի նկատմամբ ունեցած տակտիկայի մասին։ Կուսակցությունը դա-

սակարգին առաջնորդում ե։ Բայց կուսակցությունն այդ անել կարող ե միայն այն ժամանակ, յերբ նա սերտ կապված ե դասակարգի մասսայի հետ։ Նման կապն, որինակ, առաջին պայմանն ե կազմում ամեն մի կոմունիստական կուսակցության հաջող գործներության համար, վորի (կուսակցության) ամբողջ ուժը կազմակերպվածության և մասսաների հետ ունեցած կապի մեջ ե։ Այդ մասին Լենինն ասում է—«Լուրջ քաղաքականությունը սկսվում ե վոչ թե այնտեղ, ուր հաղարներն են», այլ այնտեղ, ուր միլիոններն են»։ «Պետք ե սովորել մասսաներին սոտենալ առանձին համբերատարությամբ և զգուշ, վորպեսզի կարելի լինի համականալ այդ մասսայի յուրաքանչյուր խավի, յուրաքանչյուր պրոֆեսիայի առանձնահատկությունը, հոգեբանության յուրատեսակ գծերը... Կոմունիստների ամբողջ լինդիրն ե—կարողանալ համոզել յետամացներին, կարողանալ աշխատել դրանց շրջանում, և վոչ թե դրանցից պատճեշվել»... Այսպես եր գրում Լենինը՝ գտնելով վոր կուսակցության համար չափազանց անհրաժեշտ ե հաշվի առնել իր դասակարգի միլիոնավոր մասսաների կամքը։

Կուսակցության և դասակարգի արամագրությունը կարող ե յերբեմն չգուզադիպվել։ Կուսակցությունը, կովի յելնելով, պետք ե հաշվի առնի դասակարգի արամագրությունը։ Այստեղից արդյոք հետեւմ ե, վոր կուսակցությունը պետք ե դասակարգի յետեկից քարշ գա, անի միմիայն այն, ինչ ըմբռնել կա-

* Այսինքն՝ կուսակցությունը։

** Այսինքն՝ դասակարգը։

բողացել ե ամբողջ դասակարգը։ Իհարկե վոչ։ Այդպիսի կուսակցությունը պետք չեր լինի դասակարգին։ Կուսակությունը հենց նրանով ե արժեքավոր, վոր նա դասակարգին ցույց ե տալիս ուղին այնտեղ և այն ժամանակ, ուր և յերբ ինքը դասակարգը դադեռև լիովին չե, վոր դիտակցում ե։

Ընկ. Լենինը գեռ շատ վաղուց պայքարում եր դրա համար, հսկում, վոր կուսակցության և դասակարգի ուղիղ հարաբերությունները չխեղաթյուրվեն։ Այն ժամանակ գոյություն ուներ այսպես կոչված «եկոնոմիզմի» հոսանքը։ Դա մենշևիզմի նախահայրն էր։ «Եկոնոմիստները» իրենց անունը ստացան նրանից, վոր բանվոր դասակարգի դրությունը լավացնելու համար առաջարկում եյին մղել բացառապես եկոնոմիստական (տնտեսական) պայքար, և վոր «քաղաքական պայքարը պետք ե դադարեցնել ու միառաժամանակ սպասել»։

Մինչև յԵրբ սպասել։

Մինչև վոր դրա համար մասսան կհասունանա։

Հեղափոխականները պետք ե մասսային պատրաստեն և նրան քաղաքական պայքարի դուրս բերեն։

Այդ հարցին եկոնոմիստները վճռականապես պատասխանում եյին—«վոչ»։ Կուսակցությունը, նրանց կարծիքով, մասսային չպետք ե առաջ քաշի, այլ միայն պետք ե ցուցաբերի այն, ինչի համար վոր ամբողջ մասսան տվյալ բոպեյին, ըստ իր հասունության, ընդունակ ե։

Ընկ. Լենինը նման հայացքների կոմմակիցներին իրավացի կերպով անվանում եր «խվասիստներ»

(«պոչխստներ»), վորովհետև նրանք ցանկանում եյին բանվորական շարժման պոչին կպչել, և վոչ թե շարժմանը ձանապարհ ցույց տալ դեպի առաջ։ Յեկ հենց դրանումն ե կայանում քաղաքական կուսակցության ամբողջ նշանակությունը։ Առանց այդպիսի կուսակցության՝ դասակարգը գործիք կդառնա ուրիշ դասակարգերի և կուսակցությունների նպատակների համար։ Ուստի և կուսակցության ինդիքն ե՝ սերտ կապվելով իր դասակարգի հետ, ավելի հեռուն տեսնել և նրան ճանապարհ ցույց տալ։

Կուսակցությունը մասսային իհարկե չե կարող առաջնորդել քմահաճորեն ընտրված ճանապարհով։ Կուսակցությունը մանրազնին ուսումնասիրելով իր դասակարգի դրությունը, ընտրում ե այնպիսի ճանապարհ, վոր ի վերջո ցանկանալի յելինում դասակարգի համար։ Բայց յերբ նա գտած ե լինում այն միակ գիծը, վորը պիտի հաղթություն բերի դասակարգին, կուսակցությունը ամեն կերպ պետք ե աշխատի այդ գիծն առաջ տանելու։ Յերբեմն լինում ե, վոր կուսակցությունը ուղիղ գիծ ե տանում, իսկ դասակարգի մասսան այդ գեռես չի հասկանում։ Այդ դեպքում կուսակցության ինդիքն ե՝ համբերատարությամբ բացատրել, պրոպագանդ անել, ագիտացիա անել իր իդեյաները՝ մինչև վոր դասակարգի մեծամասնությունը դրան կհամաձայնվի։ Այդպես վարվեց, որինակ, չամ. Կ. Կ. (թ), յերբ 1917 թվի ամառը և աշնանը Ռուսաստանի բանվոր մասսաները գեռես հետևում եյին մենշևիկներին և եսերներին։ Կուսակցությունը ինքը մենակ, առանց մասսաների,

կումի դուրս չեկասի: Նա լավ գիտեր, վոր «լուրջ քաշաքականությունը սկսվում է վոչ թե այնտեղ, ուր հաղարներն են, այլ այնտեղ, ուր միլիոններն են»: Կուսակցությունը բանվորական մասսաներին համբերատարությամբ բացատրեց իշխանության բոնազրավաման անհրաժեշտությունը պրոլետարիատի կողմից և հարձակման անցավ միայն այն ժամանակ, յերբ բանվոր դասակարգի մեծամասնությունը կողմնակից եր հեղաշրջման: Դա—հազարավոր որինակներից մեկն ե միայն:

Այդպիսով մենք տեսնում ենք—1) վոր քաղաքական լուրջ կուսակցությունը միշտ սերտորեն և անմիջականապես կապված է իր դասակարգի մասսաների հետ, 2) վոր կուսակցությունը միշտ դասակարգի առաջից ե գնում, և վոչ թե նրա յետեկոց քարշ գալիս, 3) վոր կուսակցությունը, յերբ դասակարգը նրա հետ ժամանակավորապես տարակարծիք ե, տանում է իր գիծը՝ ամեն կերպ այդ բացատրելով, և հասնում ե այն վիճակին, վոր դասակարգը միանգամայն համաձայնվում է իր կարծիքին: Այսպես ե կուսակցության տակտիկան իր դասակարգի նկատմամբ:

Դ) Կուսակցության կազմակերպությունը—կուսակցության կազմակերպությունը շատ կարևոր կողմ է: Կուսակցությունը հանդիսանում է դասակարգի կմախքը: Պարզ ե, վոր նա այդ գերը կարող է խաղալ միայն այն ժամանակ, յերբ նա իրենից ներկայացնում է միասնական ամբողջություն: Գա ամենից առաջ պահանջում ե, վոր կուսակցությունն ունենապարզ գծած սահմաններ, վորոնց մեջ ներկայական կազմակերպությունը մեկում է կուսակցության վորոշությունը և վճարում անդամագնար»: Մենցիկները, վորոնք առաջ բոյլշևիկների հետ միասին մեկ կուսակցության մեջ ելին աշխատում, առաջարկում ելին կուսակցության անդամ համարել նաև նրանց, ովքեր չեն մտնում կուսակցության կազմակերպու-

թյուն գործել, իր ուժերը վերադասավորել և այլն: Հետևապես առաջ է գալիս այն հարցը, թե ով կարող է կուսակցության անդամ լինել:

Այդ հարցին զանազան կուսակցություններ զանազան պատասխան են տալիս: Բուրժուական և մանր-բուրժուական կուսակցությունները այդ ուղղությամբ շատ լայն շրջանակներ ունեն: Նրանց համար կարևոր չեն կուսակցության ճիշտ սահմանները: Ուրիշ բան է կոմունիստական կուսակցությունը: Նա կատաղի պայքար է մղում: Նա հետապնդվում է ամբողջ աշխարհում, բացի ԽՍՀՄ: Պետք է զգուշ լինել, վոր նրա մեջ չմտնեն զանազան մանր-բուրժուական եկեմենաներ, վորոնք իրենց տատանումներով կարող են նրան մեծ վնաս հասցնել: Կուսակցության մեջ սպրաել են և սպրատում են շատ այդպիսի անձինք, վորոնք, ինչպես հետո պարզվել ե, դուրս յեն յեկել բուրժուազի մարտիկներ: Պարզ ե, վոր այդ հանդամանքը կուսակցությանը զրդել է սահմաններու ճիշտ շրջանակներ, վորոշելու՝ թե ով կարող է կուսակցության անդամ լինել: Համ. Կ. Կ. (բ) Կանոնադրությունը ասում է—«§ 1. կուսակցության անդամ է համարվում ամեն վոք, ով ընդունում է կուսակցության ծրագիրը, աշխատում է նրա կազմակերպություններից մեկում, յենթարկվում է կուսակցության վորոշությունը և վճարում անդամագնար»: Մենցիկները, վորոնք առաջ բոյլշևիկների հետ միասին մեկ կուսակցության մեջ ելին աշխատում, առաջարկում ելին կուսակցության անդամ համարել նաև նրանց, ովքեր չեն մտնում կուսակցության կազմակերպու-

թյան մեջ, բայց ծառայություն են մատուցում նրան, կուսակցության դեկավարությամբ վորևե աշխատանք են տանում: Ընկ. Լենինը խիստ առարկեց դրա դեմ: Ինչու: Վորովհետև մենշևկյան ձևակերպումը կուսակցությանը զրկում եր վորոշ սահմաններ ունենալոց, շատերը իրավունք եյին ստանում կուսակցության անդամներ համարվելու՝ կապված չփնելով կուսակցական կոլեկտիվի կամքի հետ: Այդ ձևակերպումը հնարավորություն եր տալիս մանր-բուրժուական ելեմենտներին (այսինքն՝ պղողետարական պայքարին թշնամի ելեմենտներին) կուսակցության մեջ խցկվելու: Ընկ. Լենինը այդ հարցին մեծ նշանակություն եր տալիս: Նա նույնիսկ ասում եր «Ավելի լավ ե վոր տասը աշխատողներ իրենց չանվանեն կուսակցության անդամներ, քան մեկ դատարկախոսը իրավունք և հնարավորություն ունենա կուսակցության անդամ լինելու»:

Ամեն մի կուսակցություն ունի իր կուսակցական ապարատը, նա կազմված ե՝ թշիջների բյուրոներից, սկսած ույոնական կոմիտեներից և վերջացրած կկ (կուսակցության կենտրոնական կոմիտե): Կուսակցության ապարատը, կուսակցական լավագույն ուժեւով դեկավարվելով, կուսակցության նկատմամբ այն դերն ե կատարում, ինչ դեր վոր կատարում ե կուսակցությունը դասակարգի նկատմամբ: Կոմունիստական կուսակցությունները թույլ, չձևակերպված ապարատով չեն կարող հաջողությամբ գործել, ճկուն մանյովրներ անել, իրենց անդամներին մորթիվացիայի յենթարկել, իրենց դասակարգի մասսայի հետ կապվել

ու նրան դեկավարել: Կուսակցությունը ուժեղ ե՝ յեթե ուժեղ ե նրա կմախքը, այսինքն ապարատը:

Սակայն այստեղ կարող ե ուրիշ կողմ ել լինել— կուսակցության ապարատը կարող ե ճնշել կուսակցության անդամների մասսաների կամքը: Դրա փայլուն որինակը հանդիսանում ե գերմանական սոցիալդեմոկրատիան: Նրա կուսակցական ապարատը կազմվել ե տասնյակ տարիների ընթացքում: Նա ամեն տեսակի փոփոխություններին դիմադրելու հսկայական ուժ ե ձեռք բերել: Զնայած այդ կուսակցության մեջ գտնված բանվորական մասսաների ձախանալուն, ապարատը հնարավորություն չի տալիս վոր դա յերեան գա: Այսպիսի դրության մեջ են ընկնում այն կուսակցությունները, վորոնք պատմության բեմից իջնում են: Իսկ այն կուսակցությունները, վորոնք դեպի վեր են յենում, վորոնք պղողետարիատի հեղափոխական ձգտումներն են արտահայտում, դրանց կուսակցական հարաբերությունները այլ են—կուսակցական ապարատը ճիշտ ե անդրադարձնում կուսակցական մասսաների կամքը:

Կուսակցությունը ինարկե չե կարող առանց դիմացինայի գոյություն ունենալ: Կուսակցությունը— դա նույնն ե, ինչ վոր՝ բանակը պատերազմի դաշտում: Պայքարի մեջ հարկավոր ե գործնեյության մեծագույն միասնականություն: Յեթե զանազան մասերը իրենց ուղածին պես վարկեն—ամբողջ գործը անհաջողություն կկրի: Դիսցիպլինան վորքան ամուր ե, այնքան ուժեղ են շարքերը, կուսակցությունն այնքան ավելի լավ կարող ե դիմադրել թշնամիներին:

«Ենպայման ցենտրալիզացիան* և պրոլետարիատի խըստագույն դիսցիպլինան հանդիսանում էն հիմնական պայմաններից մեկը՝ բուրժուազիայի վրա հաղթանակ տանելու համար», — ասում ե ընկ. Լենինը։ Կուսակցության ապարատն ե, վոր իրականացնում ե այդ ցենտրալիզացիան, գործողությունների այդ միասնականությունը։ Դրանում ե կայանում բոյլշեվիյան, կոմունիստական կուսակցությունների եյական տարբերությունը մանր-բուրժուական և բուրժուական կուսակցություններից։ Բայց կուսակցության ապարատը՝ կուսակցության վրա չի իշխում, այլ ամբողջովին յենթարկված ե կուսակցությանը։ Կուսակցական ամբողջ ապարատը՝ ներքեմից մինչև վերև՝ ընտրվում ե ամբողջ կուսակցության կողմից — բջիջների բյուրոները՝ բջիջների կողմից, ուայկոմները՝ տվյալ ույյոնի ընդհանուր ժողովի կողմից, կամ ամբողջ կուսակցության համագումարի կողմից։ Կուսակցության ապարատը ամբողջովին պատասխանառու յե նրա առաջ։ Ամեն մի կուսակցական որգան ընտրվում ե։ Դրանում ե կուսակցության դեմոկրատական կառուցվացքը։ Իսկ յեթե արդեն ստեղծված ե կուսակցական համապատասխան որգան, — կուսակցության ամեն մի անդամը նրան յենթարկվում ե։ Դրանում ե կայանում կուսակցության դիսցիպլինան, նրա ցենտրալիզմը (կենտրոնացումը)։

Այսպես ուրեմն, կուսակցության ապարատը ընտրվում ե կուսակցության կողմից և նրան հաշվետու, պատասխանառու յե։ այդ ապարատը պահպանում ե

* Կենտրոնացում։

ամուր դիսցիպլինա։ ամեն մի որգան յենթարկվում է իրենից բարձր որգանների վորոշումներին։ Այս յերկու պրինցիպների (սկզբունքների) — ընտրողականության և հաշվետության (պատասխանառության) — միացումը շատ կուսակցությունների կառուցվածքի հիմք ե կազմում։ Դա՝ այսպես կոչված՝ դեմոկրատական ցենտրալիզմ ե, այսինքն դեմոկրատիզմի և ցենտրալիզմի ի մի միացումն ե։

Սակայն այդ յերկու պրինցիպների միացումը զանգան պայմաններում զանազան չափերով ե տեղի ունենում։ Այսուեղ, ուր կոմկուսակցությունը շատ ե հետապնդվում (որինակ՝ Ռումինիայում, Հարավ-Սլավիայում), այնաեղ դեմոկրատական պրինցիպն ինարկեցնետին պլանի վրա յե դրվում։ Իսկ յերբ մի յերկրում պրոլետարիատը իշխանությունը գրաված ե (ինչպես ԽՍՀՄ), այդ հանգամանքը բավական լայնացնում ե նրա գործնեյության սահմանները։ Ուրեմն այդ կախված ե կուսակցության գործնեյության կոնկրետ պայմաններից։

• Կուսակցության առաջնորդները։ — Դասակարգին գլուխ ե կանգնած կուսակցությունը, կուսակցության գլուխ են կանգնած նրա առաջնորդները։ «Քաղաքական կուսակցությունները, — գրում ե Լենինը, — վորպես ընդհանուր կանոն, կառավարվում են ավելի հեղինակավոր, ազգեցիկ, վորդված, պատասխանառու պաշտոններում ընտրվող, կայուն, հաստատակամ անձանց խմբերով, վորոնք (անձինք) կոչվում են առաջնորդներ»։

Ինչպես վոր գասակարգը միատեսակ չե իր բոլոր մասերում, ճիշտ այնպես ել միատեսակ չե կուսակ-

ցությունը։ Յեթե կուսակցության բոլոր անդամներն ել փորձառության, ընդունակության, տաղանդավորության կողմով իրար հավասար լինելին, այդ դեպքում կարիք չեր լինի ունենալու առաջնորդների հաստատակամ խմբեր։ Կուսակցությունը կարող է լին հերթով կառավարել նրա բոլոր անդամները։ Սակայն իրականության մեջ այդպես չե։ Հետևապես պահանջ ե առաջ գալիս—մի շարք տարիների ընթացքում փորձելու և ընտրելու այնպիսի անդամների, վորոնք ամենից շատ են համապատասխանում այն պահանջներին, վոր արվում ե առաջնորդներից։

Առաջնորդները կուսակցությունը ղեկավարում են վոչ թե վորևէ առանձին իրավունքով, այլ նրա համար, վոր ինքը կուսակցությունն ե նրանց կարգել այդ պաշտոնին։ Կուսակցությունը համարում ե, վոր այս և այս անձնավորությունները կարող են ավելի լավ ղեկավարել, ավելի լավ վճռել այն բոլոր հարցերը, վորոնք դրվում են կուսակցության առաջ։ Առաջնորդների մասին կարելի յե նույնն ասել, ինչ վոր ընդհանուր առմամբ կուսակցության մասին։ Նրանք չեն կարող կուսակցությունը քնահաճորեն ընտրած ճանապարհով տանել։ Առաջնորդներն՝ այսպես ասած՝ ավելի խորն են թափանցում, ավելի հեռուն տեսնում, արագ և ավելի լավ են ըմբռնում դժվարությունները։ Կուսակցության դասակարգային շահերի համար մզվող պայքարի բոլոր հնարավոր ուղիներից, նրանք, շնորհիվ իրենց հատկությունների, ուրիշներից դյուրությամբ են գտնում կարծ ուղին, ամենաքիչ զոհեր պահանջող, դեպի հաղթանակ, դեպի դասակարգի շահերի հաղ-

թանակը տանող ուղին։ Դրա համար ել կուսակցությունը դեպի հին, փորձված առաջնորդներն հսկայական վատահություն ե տածում՝ նրա հետ միանալով մեկ հսկայական դոդված կոլեկտիվի մեջ։

Առաջնորդների ներկայությունը իհարկե ի չիք չե դարձնում կուսակցության շարքային անդամների գործնեյությունը։ Կուսակցության մեջ դիսցիպլինան վոչ թե «կազյոննի» յե՝ յերբ ամեն ինչ կատարվում է վերեկից ստացված ցուցմունքով,—այլ գիտակցական ե։ Ահա թե ինչու, յերբ նույն իսկ շատ հեղինակավոր ու հարգելի առաջնորդներ սխալներ են գործում, կուսակցությունը նրանց այլես չի հետևում, այլ նրանց սխալները ուղղում ե, նրանց ցույց ե տալիս իրենց սխալները, իսկ յերբեմն ել նրանց հեռացնում ե աշխատանքից։

Մեծ մարդիկ։ — Առաջնորդների միջից յերբեմն դուրս են գալիս փայլուն հատկություններով ոժտված, հանճարեղ, մեծ մարդիկ, ինչպես են՝ որինակ՝ Մարքսը և Լենինը։ Հանճարեղ ու մեծ մարդիկ իհարկե յեղել և լինում են հասարակական կյանքի նաև այլ բնագավառներում (գիտնականներ, նկարիչներ, գտիչներ և այլն)։

Ի՞նչ են իրենցից ներկայացնում մեծ մարդիկ։ Մարքսը և Լենինը իրենց ժամանակի մեծ մարդիկն եյին նրա համար, վոր նրանք մեծագույն աստիճանի ընդունակ եյին ըմբռնելու ստվար մասսաների մեջ կատարվող այնպիսի փոփոխությունները, վորոնք սովորական մարդկանց համար կարծես աննկատելի եյին։

Մենք գիտենք, վոր մարդկային հասարակության գարգացումն ընթանում ե տարերայնորեն։ Դա նշա-

նակում ե, վոր միլիոնավոր մարդկանցից ամեն մեկն
 առաջ ե տանում իր առանձին գիծը, վորից ծնվում
 ե վորևէ ընդհանուր հետևանք: Մարդկանց ձգտումն
 ընդհանուր առմամբ վորոշվում ե նրանց կյանքի պայ-
 մաններով (ընթերցողին հիշեցնում ենք այն մասին,
 վոր մարդկային կամքը ազատ չե): Այդ պայման-
 ները ամենաբազմազան են: Այդ ամենը գնահատել,
 բազմազան ազգեցությունները, ձգտումները, դրու-
 թյունները մեկ հայտարարի բերել, վորոշել՝ թե հենց
 տվյալ մոմենտում ինչ արդյունք կունենա ուժերի
 պայքարը և նա ինչպես կփոփոխվի, —դա մեծապես
 դժվար ինդիք է: Մեծ մարդը, վոր ոժոված ե առան-
 ձին հանճարով, ինչպես եր, որինակ, ընկ. Լենինը,
 կարող եր հրաշալի կերպով ըմբռնել այդ ամբողջ բարդ
 պայմանները: Նորեն կրկնում ենք, վոր Լենինը կու-
 սակցությունը չեր տանում իր յետերից այնտեղ, ուր
 ինքն եր կամենում, այլ այնտեղ, ուր կուսակցու-
 թյունը պետք ե վոր գնար՝ ըստ իր պայքարի պայ-
 մանների: Բայց այդ ուղին հաճախ պարզ չեր լինում
 շատ հայտնի առաջնորդներին: Լենինի մեծությունը
 կայանում եր հենց նրանում, վոր միշտ ել, ամեն պայ-
 մաններում ել նա գիտեր թե ինչ ճանապարհով պետք
 ե գնար, յերբ պետք ե գնար և դա ինչի կհասցներ:
 Այնպիսի հսկաներ, ինչպիսին են Մարքսը կամ
 Լենինը, հայտնվում են դարերի ընթացքում: Դա
 բացարկվում ե վոչ թե նրանով, վոր բնությունը
 այդպիսի մարդիկ չի ստեղծում, այլ, առանձնապես,
 հասարակական պայմաններով: Իհարկե, հասար-
 կության կյանքի վորևէ ընազավառում մեծ մարդ

լինելու համար պետք ե բնությունից ոժոված լինել
 ուղեղի համապատասխան կառուցվածքով: Սակայն
 այդ հատկության մասին մենք խմանում ենք այն
 ժամանակ, յերբ հասարակական պայմանները նրան
 հնարավորություն են տալիս զարգանալու: Բայց վո-
 րովհետև կապիտալիստական հասարակության պայ-
 մանները մարդկանց բազմությանը գնում են ծայրա-
 նեղ ծանր տնտեսական պայմանների մեջ, ապա հաս-
 տատ կարելի յե ասել, վոր շատ տաղանդավոր և
 նույն իսկ հանճարեղ մարդիկ մեռնում են՝ հնարավո-
 րություն չունենալով իրենց հատկությունները ցու-
 ցաբերելու: Փոխանակ հնարավորություն տալու սո-
 վորելու, նրանց ընդունակությունները զարգացնելու,
 դասակարգային հին հասարակությունը այդ անձանց
 մատնում ե բոլորովին այլ աշխատանքի գիրկը: Մեր
 հեղափոխության պատմությունը, այն հեղափոխու-
 թյան, վորը այնքան տաղանդավոր աշխատավորներ
 առաջ քաշեց կյանքի բոլոր ասպարեզներում, ցույց
 ե տալիս, թե կապիտալիզմը ինչպես մեղքնում ե
 մարդկանց մեջ լավագույն հատկությունները: Նա,
 ով մեզ մոտ Խորհրդային իշխանության որոք գլուխ ե
 կանգնած մարդկանց հսկայական կազմակերպության,
 նա կապիտալիզմի որոք հաճախ ստիպված եր լինում
 գաղտահի քով հասարակ աշխատանք կատարելու:
 Ապագա կոմունիստական հասարակությունը շատ ավելի
 հարուստ կլինի մեծ ու տաղանդավոր մարդկանցով,
 վորովհետև նա ամեն մեկին հնարավորություն կտա
 լիովին զարգացնելու իր բնական ընդունակություն-
 ները:

ԹԵՏՈՒԹՅՈՒՆ

Մենք արդևն գիտենք, վոր հարաբերությունները դասակարգերի միջև—պայքարի հարաբերություններ են: Դասակարգերը պայքարում են իրար դեմ՝ կազմակերպվելով քաղաքական կուսակցությունների մեջ: Դասակարգերի պայքարը—քաղաքական պայքար ե, վոր ծագում ե նույն այդ դասակարգերի արտադրական հարաբերությունների հիման վրա: Սակայն այդ քաղաքական հարաբերությունները, քաղաքական պայքարը ունին մեկ շատ կարևոր կողմ, վորը մենք մինչև այժմ չենք նիշել:

Դա—պետությունն է:

Ի՞նչ ե պետությունը: Յեթե վերցնենք մարդկային հասարակությունը մինչև մեր հեղափոխությունը, ապա կարելի յե ասել, վոր յուրաքանչյուր իշխող դասակարգ հասարակությունը կառուցել ե այնպես, վորպեսզի հնարավորություն ունենա աշխատավոր մասսաներին հանգիստ շահագործելու: Նա ստեղծել ե հասարակական այնպիսի մեքենա, հասարակական քաղաքական այնպիսի իրավակարգ, վորը միանգամայն ապահովում ու պահպանում ե իր տընտեսական տիրապետությունը: Բայց մենք գիտենք, վոր դասակարգերը միմյանց դեմ շարունակ պայքարում են: Նշանակում ե հարկավոր եր մի կազմակերպություն, վորը կարողանար իշխող դասակարգն ապահովել այն հարձակումներից, վոր կարող են կատարվել նրա շահագործական շահավետ դրության վրա,

այնպիսի կազմակերպություն, վորը ճնշեր այն բոլոր փորձերը, վորոնք ուղղված կլինեն իշխող դասակարգի դեմ՝ սրան կործանելու նպատակով: Զե՞ վոր դասակարգերի շահերը չեն կարող տևականորեն հաշտեցվել: Նրանց միջև շարունակ պայքար ե տեղի ունենում: Յեվ ահա այդ պայքարի արդյունք ե հանդիսանում պետությունը:

Պետությունը դասակարգային հակասությունների անհաջելիության արդյունք է:—Պետությունը ստեղծվում ե այդ հակասությունների անհաշտելիության հետևանքով: Նա ճնշված դասակարգերին ստիպում ե մնալու նույն շահագործվող դրության մեջ: Մի խոնքով, «յուրաքանչյուր պետություն,—ինչպես գրում ե Լենինը Յեվրոպայի և Ամերիկայի բանվորներին ուղղած իր նամակում,—դրա թվում նաև ամենաղեմոկրատական* հանրապետությունը **, վոչ այլ ինչ ե, յեթե վոչ մի այնպիսի մեքենա, վորով մեկ դասակարգը ճնշում ե մյուսին»:

* Դեմոկրատիա—«ժողովրդապետություն»—այսպես են կոչվում բուրժուական այն պետությունները, վորտեղ, համաձայն որևէքի, կառավարությունը ընտրվում ե բոլոր դասակարգերի կողմից: Շնորհիվ լրագրությունների միջոցով վործ դրվող խարեյությունների, կաշագրի, ժողովրդական մասսաների տգիտության, չնչին բացառությամբ միշտ ել ընտրվում են բուրժուազիային հաճելի մարդիկ:

** Հանրապետություն—մի այնպիսի պետություն, վորտեղ կառավարության գլուխ անցած անձը ընտրվում ե մի քանի տարով—հակառակ միավետությունների, վորտեղ ցարի կամ թագավորի իշխանությունը ժառանգաբար անցնում ե նրանց ընտանիքի ավագին:

Պետությանը դասակարգային բռնության գործիք է: — Պետությունը, պետական կազմակերպությունը, այդպիսակ, հանդիսանում է դասակարգային բռնության գործիք: Այն եպոխաներում (ժամանակաշրջաններում), յերբ դասակարգեր չկային, չկար և չեր ել կարող լինել պետություն: Նույնպես և պարզ է, վոր ապադասակարգային պետություն լինել չկարող: Սակայն բուրժուական գիտնական լակեյները աշխատում են պետությունը ներկայացնել վորպես մի ապադասակարգային կազմակերպություն, վորպես դասակարգերից բարձր կանգնած հասարակական մի կազմակերպություն:

Այդպիսի պնդումն ինչու յե սուտ, ինչու յե կեղծ: Պետությունը, ճիշտ ե, պահպանում է «կարգերը»: Միայն թե գոյություն կունեցող «կարգերի» մեջ, այսինքն գոյություն ունեցող հարաբերությունների մեջ զանազան դասակարգերը միատեսակ չեն շահագրգոված: Բուրժուազիայի համար այդ «կարգերի» պահպանությունը, այսինքն՝ բանվորներին շահագործելու համար սահմանված կարգերի պահպանությունը շատ ձեռնտու յե, իսկ բանվորներին, ընդհակառակն, այդպիսի «կարգերը» հարկավոր չեն: Նշանակում է բուրժուական պետությունը այդ «կարգերը» պաշտպանելով, փաստորեն պահպանում է բռնությունը: Ասել՝ վոր պետությունը ստեղծված է կարգը պահպանելու համար—այդ նշանակում է վոչինչ չասել, չարկավոր ե պարզել, թե ով է այդ կարգերը սահմանում, ումն են այդ կարգերը շահավետ: Յեվ յերբ մենք կարգերնը այդ հարցերը, կտեսնենք վոր պե-

տական կազմակերպությունը մի այնպիսի կազմակերպություն է, վորի միջոցով մեկ դասակարգ բը ունանում է մյուսի վրա: Դա միանգամայն պարզ կլինի, յեթե մենք քննենք, թե ինչ տարրերից (ելեմենտներից) ե կազմվում պետությունը, նա իրենից ինչ ե ներկայացնում:

Ահա այդ մասերը—կառավարություն, որենսդիր մեքենա (պարլամենտ, պետական գումա), բանակ, չինովնիկություն՝ ամեն աստիճանի (ազմինիստրացիա), դատարան, վոստիկանություն (պոլիցիա), բանտ:

Այս թվարկությունից արդեն յերկում է, թե ինչ նպատակի յե ծառայում պետությունը: Ո՞վքեր են նստած կապիտալիստական բանտերում: Ո՞ւմից ե պետությունը ամենից շատ հարկեր քամում: Ինչի վրա յեն ծախավում հարկերի միջոցով հավաքած փողերը: Ո՞ւմ դեմ է կովում վոստիկանությունը և բանակը:

Բավական է միայն այս հարցերը տալ, և պարզ պատասխանը հետևյալն է:—պետությունը—դա իշխող դասակարգի կազմակերպություն է, վոր ծառայում է՝ մյուս դասակարգերին ճնշելու համար:

Բուրժուական պետություններ: Դեմոկրատիա:—Հասկանալի յե, վոր մարդկության պատմության ընթացքում յեղել են զանազան պետություններ՝ նայած թե վոր դասակարգն է իշխել: Բայց յեթե վերցնենք միայն բուրժուական պետությունները, նրանց միջև ևս առընդունելի կաեննենք: Մի շարք պետություններում բուրժուազիան բոլորովին թույլ չի

տվել վոր բանվորական մասսաները մասնակցեն իշխանության գործերին, իսկ մի շարք ուրիշ պետություններում, ընդհակառակը, նրանց միջիչ իրավունքներ ե տվել: Վերջին տեսակի պետությունները սովորաբար կոչվում են դեմոկրատական: «Դեմոկրատիա»—հունարեն խոսք ե, նշանակում ե ժողովրդի կառավարություն: Իսկ փաստորեն ինչ բնույթ ե կում այդ «ժողովրդի կառավարությունը» բուժուական յերկրներում:

Ներկայումս բոլոր յերկրերում պետությունը կառավարում են պարլամենտները: Պարլամենտն իրենից ներկայացնում ե մի քանի հարյուր մարդ, վորոնք բնակչության ձայների մեծամասնությամբ ընտրված են լինում 3—5 տարով: Պարլամենտը հրատարակում ե բոլոր որենքները, ընտրում ե կառավարություն, մինիստրների խորհուրդ, վորը պարլամենտի առաջ պատասխանատու յե (նրան հաշիվ ե տալիս): Արտաքուստ այսպես ե բուժուական դեմոկրատական պետական իրավակարգը:

Արդյոք նա իսկապես ժողովրդի կառավարություն ե: Իհարկե վոչ: Դեմոկրատիզմը — դա միայն ցուցանակ է: Փաստորեն պահպանվում ե զուտ բուժուական սիրապետությունը: Դա շատ հեշտությամբ են սարքում: Մի կողմից՝ կաշառում են. վաչայնակես, վոր փող են տալիս սրան-նրան. թեև դա ևս, իհարկե, տեղի յե ունենում: Կառավարության բոլոր անդամները և բուժուական հայտնի քաղաքական գործիչները սովորաբար կախում ունեն կապիտալիստներից, կամ ինչնց իրենք կապիտալիստներ են:

Իսկ կապիտալիզմը իր գաղութների* դաժան շահագործումից այնքան մեծ ոգուտներ ե ստանում, վորկարող ե դրանց մի մասը հատկացնել բանվոր դասակարգի բարձր վորակյալ խավերին, այսպես կոչված՝ բանվորական արիստակրատիային: Այդպիսով այդ վերջինները շահագորդոված են լինում վոր պետության գլուխ մնա բուժուազինան: Բավական չե վոր նրանք իրենք ձայն են տալիս բուժուական կուսակցություններին, այլև, լինելով զարգացած ու կազմակերպված, նրանք իրենց յետելից են տանում դասակարգի մնացած մասսան:

Այս գործում նրանց առանձնապես ոգնում ե այն հանգամանքը, վոր կապիտալիստական պայմանները հսարավորություն չեն տալիս բանվոր դասակարգի ամբողջ մասսաներին սովորելու, զարգանալու: Նույն իսկ այն, ինչ վոր այդ մասսաները սովորում են,— սովորում են բուժուական դրբերից և լրագրներից, վորոնք լինելով բուժուազիայի որդաններ՝ պարզ ե թե ինչ պիտի տային այդ մասսաներին:

Հսկայական ոգնություն ե հասցնում նաև բուժուական դպրոցն ու յեկեղեցին: Թե մեկը և թե մյուսը մանկական վաղ հասակից ձգտում են պրոլետարական գլուխները լցնել բուժուական թույնով: Այնպես վոր՝ դպրոցը ու յեկեղեցին ևս մենք կարող ենք համարել բուժուական շահագործության մեքենայի մասեր:

* Գաղութներ—մեծ մասամբ յետամնաց ժողովուրդներ, վորոնց նվաճել ու շահագործում են զարգացած կապիտալիստական յերկրները:

Այսպիսով պարզ է, վոր բուրժուական դեմոկրատական պետությունները ուրիշ բուրժուական պետություններից տարբերվում են միայն արտաքուստ: Թե առաջին և թե յերկրորդ տեսակի պետությունների մեջ փաստորեն ամենքին և ամեն ինչ կառավարում են խոշոր կապիտալիստները, վորոնք փողի ուժով պահում են իրենց սեփական քաղաքական կուսակցությունները, փող են վճարում հենց կառավարության անդամներին՝ փոխարեն այն որենքների ու վորոշումների, վորոնք կապիտալիստներին ձեռնառու յեն:

Խորհրդային պետությունը յեվ բուրժուազիայի պետությունը:—Բայց չե՞ վոր մենք ևս ապրում ենք պետության մեջ: Իհարկե: Մեր քաղաքական իրավակարգը բուրժուականից տարբերվում է նրանով, վոր մեր պետությունը պրոլետարական և և բուրժուազիային ճնշում է. իսկ բուրժուական պետությունները ճնշում են պրոլետարիատին: Տարբերությունը հսկայական է: Բուրժուական պետությունը, նույն իսկ ամենագեմոկրատականը, ծառայում է նրա համար, վոր պահպանի կապիտալիստական շահագործումը: Իսկ մեր պետությունը ծառայում է շահագործումը վոչչացնելու համար, կապիտալիստական իրավակարգը վոչչացնելու համար:

Մեր պետությունը կոչվում է նաև Խորհրդային: Այդ անունը նա ստացել է նրանից, վոր մեզ մոտ պետական իշխանության ամենաստորին բջիջը՝ բանվորների, գյուղացիների և կարմիր-բանակայինների պատգամագորների Խորհուրդներն են: Հենց այդ Խորհուրդներն ել՝ զանազան համագումարների միջոցով՝

կազմում են մեր պետության բոլոր դեկավար որդանները (Գործկոմներ—գավառակային, գավառային, նահանգային, կենտրոնական...):

Բանվոր դասակարգի դիկտատուրամ:—Մեր խորհրդային պետությունը հանդիսանում է բանվոր դասակարգի տերապետության արտահայտություն: Բանվոր դասակարգը իրականացնում է իր դիկտատուրան: Պրոլետարիատը բոլոր շահագործողներին ճնշել կարող է միայն իր դիկտատուրան համառորեն կիրառելով: Կարմիր բանակը, Պետական Քաղաքական վարչությունը (Գեպեռ) և այն—այդ բոլորը պրոլետարիատի դիկտատուրայի որդաններն են, վորոնք ծառայում են բուրժուազիային ճնշելու համար:

Իսկ յեթե Խորհրդային պետությունը հանդիսանում է պրոլետարիատի դիկտատուրայի կազմակերպություն, ապա ի՞նչ դերում է գյուղացիությունը: Խորհրդային պետությունը արդյո՞ք նրան ճնշում է: Ի՞նչ յերբեք:

Գյուղացիությունը Խորհրդային պետության մեջ:—Գյուղացիությունը իր մեծամասնությամբ մեր հեղափոխության մեջ յեղել է պրոլետարիատի դաշնակիցը, ոգնականը: Պրոլետարիատը պայքարելով գյուղական կուլակների դեմ, գյուղացիությանը չի ճնշում, այլ աշխատում է նրան բարձրացնել զարգացման ավելի բարձր աստիճանի: Մենք այդ մասին արդեն խոսել ենք (տես Եջ 85—88): Ուրեմն պետությունը, իրականացնելով պրոլետարիատի դիկտատուրան, պաշտպանում է վոչ միայն բանվորների շահերը, այլ և միջակ ու չքավոր գյուղացիության շահերը: Դրա հա-

մար ել մեր՝ կառավարությունը կոչվում է բանվորագյուղացիական։ Պետական աշխատանքում մասնակցում են թե բանվորները և թե գյուղացիները (կուլտակները ճնշվում են), թեև ամբողջ աշխատանքը իրենց կոմունիստական կուսակցության միջոցով դեկավարում են բանվորները, վորովհետև միայն բանվոր դասակարգը կարող է յերկիրը տանել կոմունիզմի ճանապարհով և կոմունիստական իրավակարգ սահմանել։ Գյուղացիությունը իր աշխատանքի պայմաններով ցրված է, մասնավոր սեփականության հետ կապված, ինքը առաջ գնալ չի կարող և կարիք ունի այնպիսի դեկավարի, ինչպիսին է պրոլետարիատը։

Պրոլետարիատի վերաբերմունքը դեպի պետությունը՝—Վերսիշյալից մենք տեսնում ենք, վոր կոմունիստական կուսակցության կողմից դեկավարվող բանվոր դասակարգը դեպի կուսակցությունը վերաբերվում է վոչ այնպես, ինչպես նրան խորհուրդ են տալիս անարխիստները։ Անարխիա խոսքը նշանակում է անիշխանություն։ Անարխիան իրենց իդեալ են համարում այնպիսի հասարակություն, վորտեղ պետություն չի լինի։ Նրանք ասում են—պետությունը չարիք է։ Դրա համար ել պրոլետարական հեղափոխության առաջին քայլից նրանք հայտարարում են պետության վոչնչացում։ Պրոլետարական հեղաշրջման հետեւյալ որը—մտածում են անարխիստները—մարդիկ կապրեն ազատ համախմբումներով, առանց վորմե պետական իշխանության, ուրեմն և առանց բանակի, բոնության և այլն։

Նրանք դատում են վոչ-դիալեկտիկորեն։ Դիալեկտիկան (ինչպես արդեն գիտենք) ասում է, վոր ամեն մի յերկույթ դիտվում է վոչ թե ընդհանուր առմամբ, այլ կոնկրետ, վորոշ պայմաններում։ Տվյալ դեպում անա այսպես։

Ի՞նչ է բուրժուական պետությունը, վոր ճնշում և պրոլետարիատին։

Զարիք—պատասխանում է բանվոր-կոմունիստը։ Ի՞նչ է պրոլետարական, Խորհրդային պետությունը, վոր ճնշում է բուրժուազիային։

Ցանկալի բան է, վոր պետք է ոգտագործել, պատասխանում է նույն բանվոր-կոմունիստը։

Լենինը պետության մասին։ — «Պետությունը—դասակարգային հասարակություն է։ Պետությունը—մի այնպիսի որգան կամ մեքենա յէ, վորի միջոցով մեկ դասակարգ բռնանում է մյուսի վրա։ Քանի դեռ այդ պետությունը կա, քանի դեռ բուրժուազիայի պրոլետարիատի վրա բռնացող այդ մեքենան կա, մինչ այդ՝ պրոլետարիատի լոգունզը պետք է լինի—կործանել այդ պետությունը։ Իսկ յերբ պետությունը կլինի պրոլետարական, այն ժամանակ նա կլինի պրոլետարիատի՝ բուրժուազիայի վրա բռնացող մեքենա, այդ դեպքում մենք լիովին և անպայման կողմնակից ենք ամուր իշխանության և ցենտրալիզմի», այսինքն՝ պրոլետարական ամուր պետության։

Իշխանությունը պրոլետարիատի ձեռքն անցնելով, պետական այդ իշխանությունը այլևս դադարում է լինել ճնշման գործիք և դառնում է աշխատավոր մասսաների ազատագրության միջոց։ Անմիտ բան կլիներ

դրանից հրաժարվել։ Այժմ մեզ համար միանգամայն պարզ եւ, թե ինչ կարող եր լինել, յեթե վոր մենք հոկտեմբերյան հեղափոխությունից հետո չստեղծելինք մեր Կարմիր Բանակը, մեր միլիցիան, դատարանը, յերկիրը կառավարելու համար ավարատներ և այլն. հակա-հեղափոխությունը յերկու որվա ընթացքում կկործաներ մեր հեղափոխությունը։ Ուրեմն, պրոլետարական պետություն կազմելը անխուսափելի և անհրաժեշտ է դառնում։ (Տես Իրավունք, եջ 143):

ՆԵՐԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Բայց ի՞նչպես ե կատարվում անցումն բուրժուական պետությունից դեպի պրոլետարական պետություն։

Այդ հարցին պատասխան ե տալիս Մարքս-Լենինի ուսմունքը։ Մենք նրա վրա կանդ առանք գրքիս յերկրորդ գլուխ վերջում։ Ահա այդ ուսմունքի եյությունը։

Կապիտալիզմի զարգացման վերջին ստադիամ—իմպերիալիզմ։ — Զարգացման վորոշ աստիճանում կապիտալիստական ամբողջ արտադրությունը կենտրոնանում է միլիարդատերերի մի փոքրիկ խմբակի ձեռքը։ Այդ զրությունը արդեն տեղի ունի Յեվրոպայում և Ամերիկայում։ Նրանք ապրանք են մատակարարությում ամբողջ աշխարհին։ Զիա այնպիսի անկյուն, ուր նրանց ազենտները մուտք գործած չլինեն։ Ամբողջ աշխարհը բաժանված է նրանց միջև։ Բայց արտադրությունը այսուհետեւ ավելի զարգացնել—նրանք

այլևս չեն կարող։ Շուկաները նրանց չեն բավականացնում—նորերը չկան, իսկ հները արդեն լցված են։ Այսպես ուրեմն, չափից դուրս ապրանք է արտադրվում, միենույն ժամանակ մենք տեսնում ենք, վոր, ընդհակառակը, կապիտալիզմին ուղեկցում է աղքատությունը, և ավելի ու ավելի մեծ չափերով։ — մարդկանց բազմամիջոնն մասսաները, կարիք ունենալով զանազան ապրանքների, գրանք գնելու համար բավականաշափ փող չունեն։ Կապիտալիստական հարաբերություններն այդ փողերը հանձնում են կապիտալիստներին, վորոնք իրենց անձնական կարիքներն իհարկե չեն կարող անվերջ ավելացնել։

Կապիտալիստների միջև ծավալվում է հսկայական պայքար շուկաների համար։ Ամբողջ աշխարհն արդեն բաժանված է։ Գաղութների շահագործումն արդեն հսկայական չափերի յե հասել։ Կապիտալիզմը սարդի նման ծծում է նրանց նյութերը՝ իր գոյությունը պահպանելու համար։ Բայց վորովհետեւ այդ նրան չի բավականացնում՝ արտադրությունը ծավալելու հաշմար, ուստի և սկսվում է պայքար—կապիտալիստների մի խմբակը ձգտում է վոչչացնել կապիտալիստական մյուս խմբակին։ Այդպիսի պայքարի ըրջան ե—գերջին 20—30 տարիները, և կոչվում է իմպերիալիզմի եպոսա։

Միակ յելիք պրոլետարական հեղափոխության մեջ ե։ — Ուրիշ յելք չկա։ 1814—1918 թ. թ. իմպերիալիստական պատերազմը ինչի հետևանք եր։ — մի խումբ կապիտալիստներ ձգտում եյին մեջտեղից վերացնել մի ուրիշ խումբ հակառակորդ կապիտալիստ-

ների։ Պատերազմում պարտվեցին կապիտալիստական Գերմանիան և Ավստրիան, բայց այդ պատերազմը կապիտալիզմի հակասությունները չվերացրեց։ Շուշկաները առաջվա պես չեն բավականացնում։ Պատրաստվում ե նոր կոխի ավերումի, սովոր ու մասսայական սպանությունների ամբողջ սարսափներով։ Կապիտալիզմի որոք ուրիշ յելք չկա։ Միակ յելքն ե—պրոլետարիատի զիկտատուրայի միջոցով անցնել կումունիզմին։ Այն ժամանակ—արտադրության զարգացմանը խանգարող արգելքները կվերացվեն։

Այդպիսի դրությունը, իհարկե, հեղափոխականացնում ե բանվոր դասակարգին։ Նա հետզհետե համոզվում ե, վոր բուրժուական իրավակարգը չի կարող յերկար տևել. այդ իրավակարգը այլևս ընդունակ չե իր գոյությունը շարունակելու։ Այնպիսի յերեսութներ, ինչպես են՝ իմպերիալիստական պատերազմները—մասսայական սպանությունները, ավերումը, աղքատությունը, սովոր և այն—բանվոր դասակարգին խիստ առաջ են դրդում։ Նա իր կոմունիստական կուսակցության զեկավարությամբ վերջապես սկսում ե հեղափոխություն բարձրացնել։

Հեղափոխության հիմնական հարցը՝ պետական իշխանությունը բռնագրավելն է։—Պրոլետարական հեղափոխության գլխավոր և մոտակա խնդիրն ե հանդիսանում—բռնագրավել պետական իշխանությունը։ Պրոլետարիատը չի կարող դիմել հասարակության պլանաշափ վերակառուցման՝ չունենալով իր պետական կազմակերպությունը։ Լենինը գրում ե—«Ամեն հեղափոխության հիմնական հարցը հանդիսանում ե»

իշխանության վերաբերյալ հարցը։ Իշխանությունը ում ձեռքին ե, նա ել վճռում ե ամեն ինչ։

Իշխանությունը ձեռք ե թերվում զինված ապատամ բուրժուացուի։—Բանվոր դասակարգը զինվում ե, բռնագրավում ե կարևորագոյն պունկտերը, կովով զիրքերից դուրս ե քշում հին իշխանության պաշտպաններին։ Վոչ մի դասակարգ իշխանությունը իր կամքով ձեռքից բաց չի թողնի. չե վոր դա նրա համար կյանքի և մահվան հարց ե։ Ուստի և իշխանությունը խլել կարելի յե միմիայն զինված ձեռքով։

Իհարկե, կուսակցությունը կարող ե պետական իշխանությունը խլել և իր ձեռքում պահել միայն այն գեղքում, յեթե նա իր յետեսում ունի են մեծ մասսաներ։ Այլապես—ապստամբությունը կլինի ավանդյուրիզմ (արկածախնդրություն)։

Բացի դրանից, զինված ապստամբության համար հարկավոր ե ընտրել այնպիսի մոմենտ, յերբ հեղափոխության ուժերը ավելի շատ են, իսկ հին իրավակարգի պաշտպանները ավելի յեն թուլացած ու շփոթված։

Լենինի կարծիքը հաջող ապստամբուրժուան պայմանների մասին։—Ընկ. Լենինը Հոկտեմբերյան հեղափոխության նախորյակին այդ մասին գրել ե։—Ապստամբությունը վորպեսզի հաջող անցնի, պետք ե հենվել վոչ թե դավագրության, վոչ թե կուսակցության, այլ առաջինը։ Ապստամբությունը պետք ե հենվի ժողովրդի յեղափոխական տրամադրության վրա։ Այդ յերկը պարզ է առաջական պատերազմությունը պետք ե անող հեղա-

ների։ Պատերազմում պարտվեցին կապիտալիստական Գերմանիան և Ավստրիան, բայց այդ պատերազմը կապիտալիզմի հակասությունները չվերացրեց։ Շուշկաները առաջվա պես չեն բավականացնում։ Պատրաստվում ե նոր կոփի՛ ավերումի, սովոր ու մասսայական սպանությունների ամբողջ սարսափներով։ Կապիտալիզմի որոք ուրիշ յելք չկա։ Միակ յելքն ե—պրոլետարիատի գիլտատուրայի միջոցով անցնել կոմունիզմին։ Այն ժամանակ—արտադրության զարգացմանը խանգարող արգելքները կվերացվեն։

Այդպիսի դրությունը, ինարկե, հեղափոխականացնում ե բանվոր դասակարգին։ Նա հետզհետե համոզվում ե, վոր բուրժուական իրավակարգը չի կարող յերկար տևել։ այդ իրավակարգը այլևս ընդունակ չե իր գոյությունը շարունակելու։ Այնպիսի յերեւութներ, ինչպես են՝ իմպերիալիստական պատերազմները—մասսայական սպանությունները, ավերումը, աղքատությունը, սովը և այլն—բանվոր դասակարգին խիստ առաջ են դրդում։ Նա իր կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ վերջապես սկսում ե հեղափոխություն բարձրացնել։

Հեղափոխության հիմնական հարցը՝ պետական իշխանությունը բռնագրավելն է։—Պրոլետարական հեղափոխության գլխավոր և մոտակա խնդիրն ե հանգիստանում—բռնագրավել պետական իշխանությունը։ Պրոլետարիատը չի կարող դիմել հասարակության պլանաչափ վերակառուցման՝ չունենալով իր պետական կազմակերպությունը։ Լենինը զրում ե—«Ամեն հեղափոխության հիմնական հարցը հանդիսանում ե»

իշխանության վերաբերյալ հարցը։ Իշխանությունը ում ձեռքին ե, նա ել վճռում ե ամեն ինչ։

Իշխանությունը ձեռվ ե թերվում զինված ապահովությամ միջոցով։—Բանվոր դասակարգը զինվում ե, բռնագրավում ե կարևորագոյն պունկտերը, կովով դիրքերից դուրս ե քշում հին իշխանության սպազմականներին։ Վահ մի դասակարգ իշխանությունը իր կամքով ձեռքից բաց չի թողնի. չե վոր դա նրա համար կյանքի և մահվան հարց ե։ Ուստի և իշխանությունը լուել կարելի յե միմիայն զինված ձեռքով։

Ինարկե, կուսակցությունը կարող ե պետական իշխանությունը խել և իր ձեռքում պահել միայն այն զեպքում, յեթե նա իր յետեւում ունի են մեծ մասսան եր։ Այլապես—ապստամբությունը կլինի ավանդությունիմ (արկածախնդրություն)։

Բացի զրանից, զինված ապստամբության համար հարկավոր ե ընտրել այնպիսի մոմենտ, յերբ հեղափոխության ուժերը ավելի շատ են, իսկ հին իրավակարգի պաշտպանները ավելի յեն թուլացած ու շփոթված։

Լենինի կարծիքը հաջող ապահովության պայմանների մասին։—Ընկ. Լենինը Հոկտեմբերյան հեղափոխության նախորյակին այդ մասին գրել ե։—Ապստամբությունը վորպեսզի հաջող անցնի, պետք ե հենվել վոչ թե Պավադրության, վոչ թե կուսակցության, այլ առաջավոր դասակարգի վրա։ Այդ—առաջինը։ Ապստամբությունը պետք ե հենվի ժողովրդի յեղափոխական տրամադրության վրա։ Այդ—յերկրորդը։ Ապստամբությունը պետք ե աճող հեղա-

փոխության պատմության մեջ հենվի այսպիսի պունկտի վրա—յերբ ժողովրդի առաջավոր խավերի ակտիվությունը ավելի յե, յերբ տատանումները ավելի յեն ուժեղացած թշնամիների շարքերում և հեղափոխության թույլ, անվճռական բարեկամների շարքերում։ Այդ—յերրորդը։ Ապստամբության հարցի ձևակերպման այս յերեք պայմաններով ե, վոր մարքսիզմը տարբերվում ե բլանկիզմից։*

Պրոլետարիատը շարդում ե բուրժուական պետական մեթենան,—Պրոլետարիատը բուրժուական մեքենան իր ձեռքը գցելով՝ նա ջարդում ե այդ մեքենան։ Յեվ դա միանգամայն հասկանալի յե։ Ի՞նչ ե պետական ապարատը։ Զե՞ վոր դա սեղաններն ու շենքերը չեն։ Դա—մարդկանց վորոշ սիստեմ ե։ Պետական ապարատի մեջ մտած մարդիկ տարիների ընթացքում միասին միևնույն աշխատանքն են կատարել—աշխատավոր մասսաներին ձնշել։ Կարո՞ղ են դրանք, վերևից տրված հրամանով, իսկույն հակառակ գիծ բռնել։ Իհարկե վոչ։ Դրա համար ել պրոլետարիատը հին պետական ապարատը ամբողջովին ջարդում ե և ստեղծում նորը, իր սեփականը։

Բանվոր դասակարգն սպիտակած ե, իհարկե, մասսամբ ոգտագործել նաև հին՝ ոտար ապարատի աշխա-

* Բլանկիզմ—Փրանսիացի հեղափոխական և սոցիալիստ Բլանկի (ապրում եր XIX դարում) ուսմունքը։ Հեղափոխական-դավադրական տակտիկա, ձգտումն՝ կատարելու հասարակական հեղաշրջում հոգուտ աշխատավոր մասսաների, սակայն վոչ թե վերջինների ջանքերով, այլ բացառաբար մի սահմանափակ դավադրական կազմակերպության ուժերով։

տավորներին։ Դա բացատրվում ե նրանով, վոր պրոլետարիատը միանգամից չե, վոր կարող ե բավականաչափ մարդկանց առաջ քաշել պետական և տընտեսական աշխատանքի համար։ Մենք զիտենք, վոր կապիտալիզմը նրան հնարավորություն չի տվել բավականաչափ պատրաստվելու դրա համար։ Բայց այդ հին աշխատավորներին դնում են միանգամայն այլ պայմաններում, նրանց շրջապատում են բազմաթիվ նոր, պրոլետարական գործիչներով։ Իհարկե, հաղթող բանվոր դասակարգը ձգտում ե վորքան կարելի յե շուտ և շատ աշխատավորներ պատրաստել և առաջ քաշել։

Բուրժուական յեվ պրոլետարական հեղափոխություններ։—Նույն ե տեղի ունեցել նաև վոչ-պրոլետարական հեղափոխությունների մեջ։ Յերբ բուրժուագիան դեն շպրտեց ֆեոդալների-կալվածատերերի պետությունը, նաև ևս ստիպված յեղավ ստեղծելու իր նոր պետական ապարատը, թեև նրա դրությունը ավելի լավ եր։ Նա պետք ե շահագործման մեկ տեսակը (ֆեոդալականը) փոխարիներ մի ուրիշ տեսակով (բուրժուականը)։ Զանազանությունը այնքան ել մեծ չե, ինչպես պրոլետարական հեղափոխության մեջ, յերբ շահագործական պետությունը փոխարինվում ե այնպիսի պետությունով, վորը պայքարում ե ամեն տեսակի շահագործման դեմ։ Ուստի և բուրժուական հեղափոխությունների մեջ ավելի քիչ չափով եր պահանջվում հին պետական ապարատը կոտրել։ Իսկ պրոլետարիատը ստիպված ե այդ ապարատը հիմնովին փշել և դրան փոխարինել իր նոր ապարատով, վորովնետե բանվոր դասակարգի և առաջ իշխող

դասակարգերի (ու դրանց պետությունների) միջև
անհաշտելի հակասությունները հսկայական են:

Ոպորտունիաների թեորիան՝ կապիտալիզմից դեպի
կոմունիզմ անցներու մասին: — Ոպորտունիաները*—
սոցիալ-դեմոկրատները կապիտալիզմից դեպի կոմու-
միզմ անցնելու մասին այլ թեորիա ունեն: Նրանց
կարծիքով այդ անցումն կարելի յէ կատարել առանց
հեղափոխության: Նրանք այդ բացատրում են այսպես.

Բոլոր յերկրներում ել կան պարլամենտներ, դրանք
են կառավարում պետությունը: Պարլամենտի պատ-
գամավորները ընտրվում են ամբողջ բնակչության
կողմից: Բանվորների գիտակցությունը հետզհետե
բարձրանում եւ, Զարգացած կապիտալիստական յեր-
կրներում բանվորները կազմում են բնակչության
մեծամասնությունը. հետևապես, բանվորները իրենց
կուսակցություններից կարող են ավելի մեծ թիվ
ներկայացուցչներ ուղարկել պարլամենտ: Կհամնի,
վերջապես, մի ժամանակ, յերբ պարլամենտներում
մեծամասնությունը կկազմեն բանվորական կուսակ-
ցությունների ներկայացուցիչները: Այդ ժամանակ
կսկսի կոմունիզմին անցնելու շրջանը: Իշխանությունը
կանցնի բանվորներին, բայց վեչ բոնի հեռափո-
խության ճանապարհով, այլ համաձայն այն որենքի,
վոր կսահմանի հենց ինքը բուրժուազիան:

* Ոպորտունիան — այդպես ե կոչվում այն մարդը,
որը սեփական սկզբունքից զուրկ եւ հարմարվում ե իշխող
պայմաններին. այդպես են սոցիալ-դեմոկրատները, վորոնք
հարմարվում են բուրժուազիան իրավակարգին, համաձայնու-
թյան են գալիս նրա հետ:

Այդ թեորիայի սխալլի: — Այդպես են մտածում
ու քարոզում ոպորտունիստները: Սակայն բանվորա-
կան շարժման վորձը (մասավանդ վերջին տարիները)
պարզ ցույց տվեց, վոր միայն հիմարները կամ
գավաճանները կարող են այդպիսի քարոզ կարդալ:
Միամիտ պետք ե լինել կարծելու համար, վոր բուր-
ժուազիան հանգիստ սրտով կհրաժարվի իր կուտակած
հսկայական հարստություններից և պարազիտային
կյանքից միմիայն նրա համար, վոր դա ցանկանում ե
պըոլետարիատը: Հենց վոր պըոլետարիատը սկսում ե
բուրժուազիայի տիրապետությանը սպառնալ, նա
(բուրժուազիան) խկույն հրաժարվում ե յերկերը կա-
ռավարելու իր հին յեղանակներից և անցնում ե բա-
ցարձակ բոնության, ֆաշիզմին:

Ֆաշիզմը — բուրժուազիայի կազմակերպությունն ե՝
կապիտալիզմի քայլայման և պըոլետարական հեղա-
փոխության եպօխայում: Յեվ յերբ խաբեյություն-
ները լրադրերի միջոցով, տերտերների, պըովեսորների
միջոցով այլևս չեն ողնում, այդ գեպքում բուրժու-
ազիան սկսում ե կառավարել կոպիտ բոնության
ոգնությամբ:

«Բոնությունը ամեն մի նոր հասարակության
մանկաբարձուի ին ե»: — Խսկ յեթե բուրժուազիան
տապալված ել ե, նա միշտ կազմակերպում ե զինված
հակա-հեղափոխություն, ինչպես այդ տեղի ունեցավ
Ռուսաստանում, Վենգրիայում, Լիտվայում և ուրիշ
յերկրներում:

Այնպես վոր մենք կարող ենք ասել, վոր հասա-
րակական մեկ իրավակարգից մյուսին անցնելը (որի-

Նակ՝ ֆեռդալիզմից դեպի կապիտալիզմ, կամ կապիտալիզմից դեպի կոմունիզմ) տեղի յեւ ունենում վեհթե խաղաղ, այլ բոնի ճանապարհով, պետական իշխանությունը ապատամբած դասակարգի զինված ձեռքով խլելու և իշխող դասակարգերին այնուհետև բոնի կերպով ճնշելու միջոցով։ Կարլ Մարքսը գրում ե— «Բոնությունը մանկաբարձուհին ե ամեն մի նոր հասարակության, վորով հղի յեւ հինը»։ Ուրեմն, ըստ Մարքսի, հին հասարակությունից չի ծնվի նոր հասարակություն՝ մինչև վոր գործ չդրվի բոնություն։

Ի՞նչ վերաբերմունք ունի դեպի պետությունը պրոլետարիատը, յեվ ի՞նչ—բուրժուազիան։ Դասակարգերի պայքարը արտաքուստ փոխվում ե՝ յերբ պրոլետարիատը իշխանությունը արդեն խլած ե լինում։ Բուրժուազիան առաջ ձգտում եր պետական մեքենան պահպանել, այժմ նա այդ մեքենան, ընդհակառակը, ցանկանում ե կոտրել։ Իսկ պրոլետարիատը դրա հակառակն ե վարդում։ Մինչև հեղափոխությունը նա ձգտում եր պետական ապարատը կոտրել՝ քանի վոր այդ ապարատը իրեն ճնշում եր։ Այժմ նա կողմանից ե ամուր, ուժեղ պետության։ Առաջ նա շահագրգուված չեր ձեռնարկությունների կառավարման գործում։ Հեղափոխությունից հետո բանվոր դասակարգի գլխավոր գործնեյությունը կայանում ե տնտեսության զարգացման ու ամրացման մեջ։ Ուրիշ խոսքով, մինչև հեղափոխությունը պրոլետարիատի գործնեյությունը նպատակ ուներ կործանելու, իսկ հեղափոխությունից հետո նրա նպատակն ե—կառուցել։

Չնայած արտաքին այդպիսի տարբերության, դասակարգերի հիմնական խնդիրները թե մինչև հեղափոխությունը և թե հեղափոխությունից հետո մնում են նույնը. բուրժուազիան ցանկանում ե շարունակել բանվոր դասակարգին շահագործել, իսկ պրոլետարիատը—այդ շահագործումը վոչնչացնել և կոմունիստական հասարակություն կառուցել։

Այսպես ուրեմն պարզ ե, վոր պրոլետարիատի վերաբերմունքը դեպի պետությունը այլ ե, բուրժուազիայինը—այլ։ Բուրժուազիան ցանկանում ե վոր իր պետությունը ամրացվի և միշտ ել գոյություն ունենա։ Բանվոր դասակարգի իդյալը ուրիշ ե։ Նա ձգտում ե վոչ թե մշտական տիրապետության, այլ կոմունիստական հասարակության կառուցման։ Պրոլետարիատի դիկտատուրան—դա անցողական պետություն ե, վոր գոյություն ունի ժամանակավորակես՝ կապիտալիստական հասարակությունը կոմունիստականի փոխելու համար։ Հետևապես—կանհետանականի պրոլետարական պետությունը։ Բայց նա այնպես չի անհետանա, ինչպես բուրժուազիանը։ Բուրժուազիայի պետությունը վոչնչանում ե հեղափոխության կրակի մեջ, պրոլետարիատի գրոհի տակ։ Իսկ պրոլետարական պետությունը կ մահացվի հետզհետե, այն չափով, ինչ չափով սակած ված կինն կոմունիստական հարաբերություններ։

Կոմունիզմ։—Մենք կոմունիզմի մասին յերկրորդ գլուխում ես խոսել ենք։ Այժմ կանգ առնենք ահա թե ինչի վրա։ Կոմունիզմը—մարդկային հասարակության այնպիսի կազմակերպություն ե, վորը անխուսա-

Փելիորեն բղխում եւ կապիտալի զմից կոմունիզմի որոք արտադրության բոլոր միջոցները կպատկանեն յերկրագնդի վրա ապօղ մարդկային ամբողջ կոլեկտիվին, վորը կվարի համաշխարհային միասնական պլանաչափ տնտեսություն։ Դասակարգերը կանհետանան, վորովհետև կվոչնչանա նրանց հիմքը—մասնավոր սեփականության իրավունքով արտադրության միջոցներին տիրելը։ Մարդիկ հասարական արտադրության մեջ թեև զանազան տեղեր կգրավեն, բայց դա կապված չի լինի վոր և առավելությունների հետ։ Դեռ ավելին, մարդկանց գրության մեջ յեղած տարբերությունները արտադրության մեջ սաստիկ կհարթվեն։ Մենք Խորհրդային հանրապետության մեջ արդեն տեսնում ենք, թե ինչպես բանվորներն հաճախ դառնում են գործարանների գիրեկտորներ։ Կոմունիստական հասարակությունը, բոլոր մարդկանց ել սովորելու միատեսակ հնարավորություն տալով, ի վերջո կվոչնչացնի մարդկանց միջև յեղած այն տարբերությունները, վորոնք արդյունք են կապիտալիզմի։ Տիրապետության և հպատակության հարաբերությունները կվերանան։ Կմնա ընկերական աշխատանքը, վորի վրա առանձնապես կազդեն ավելի փորձվածները, ավելի գիտունները, տաղանդավորները։

Դասակարգի յեվ պետության մահացումը։ Կոմունիզմի առաջին ասիհնամը։—Բայց յերբ դասակարգերը վոչնչանան, այլևս պետության կարիք չի գգացվի, Քանի վոր պետությունը դասակարգային բռնության գործիք ե, նշանակում ե նա կանհետանա՝

գասակարգի անհետանալու հետ միասին, իհարկե, դա կկատարվի վոչ թե միանգամից, այլ աստիճանաբար՝ այն չափով, ինչ չափով կզարգանան մարդկային հասարակության արտադրող ուժերը։ Դրանց գարգացումն առաջին աստիճանի վրա այնքան հարստություններ կստեղծի, վոր կարելի կինի բավարարել բոլոր մարդկանց կարիքները։ Սակայն սկզբներում յուր մարդկանց կարիքները—1) յուրաքանչղեռևս յուր մարդ հարկադրված պիտի լինի աշխատելու, 2) յուրաքանչյուր մարդուն իր աշխատանքային որվահամար պիտի արվի վորոշ քանակությունը, Պարզ ե վոր պետության մնացորդները, վորպես հարկադրանքի ելեմենտներ, դեռևս կմնան։ Թեև դասակարգեր այլևս չեն լինի, բայց դեռ թարմ կլինեն հինգերը առաջին վրա մովորույթները, գուցե և պարագիտագասակարգային սովորույթները (նախկին տիրապետող դասակարգի կողմից), Դա—սոցիալիզմ ե, կամ կոմունիզմի առաջին աստիճանը։

Կոմունիզմի հետազա աստիճանը։ «Յուրաժամյաշյուրից—ըստ իր ընդունակությունների, յուրաժամյաշյուրին—ըստ իր կարիքների։—Արտադրության զարգացման ուղղությամբ արված նորանոր քայլերը մարդկային հասարակությունը ի վերջո կհասցնեն այնպիսի հարստությունների, վոր նրա համար սարսափելի չեն լինի իր ամենաշուայլ անդամները։ Բացի այդ, ընակչության մեծամասնությունը մեծացած կլինի արդեն վոչ թե հին կապիտալիստական, այլ նոր պայմաններում։ Նրանք ստեղծած կլինեն ընկերական կյանքի նոր իդեոլոգիա։ Պարագիտիզմը չի կարող գոյու-

թյուն ունենալ այդպիսի մթնոլորտում։ Այն ժամանակ հասարակությունը իր գրոշակի վրա կզրի—«Յուրաքանչյուրից—ըստ իր ընդունակությունների, յուրաքանչյուրին—ըստ իր կարիքների»։

Դասակարգային հասարակության վերջին մնացորդները կանհետանան։ Մարդկությունը մուտք կգործի լրիվ զարգացած կոմունիստական իրավակարգի եպոխան։ Մարդկային ազատ հսկայական կոլեկտիվը կմոռանա իր ներսում պայքարելու մասին և պայքարի լայն ճամբով առաջ կընթանա ել ավելի նվաճելու բնությունը։ Այսուեղ նրա առաջ կըացվեն նորանոր խնդիրներ։ Մարդկությունը ավելի և ավելի առաջ կընթանա այդ ճանապարհով՝ միլիարդների կոլեկտիվ մտքի ու աշխատանքի ուժով ոգտագործելով բնության խորքերը։

IV

Ի Դ Ե Ս Լ Ո Գ Ի Ա

ԲԱԶԻՍ ՅԵՎ ՎԵՐՆԱՇԵՆՔ

Նյուրական յեվ «հոգեկան» արտադրություն։ Մարդկային հասարակության արտադրությունը—նյութական արտադրություն եւ Հասարակության մեջ մշակվում են նաև զանազան իդեյաներ, մտքեր, մի խոսքով՝ տեղի յեւ ունենում, այսպես ասած, «հոգեկան» արտադրություն։ Թե մեկը և թե մյուսը զարդարում են, փոփոխվում։ Հիմա հարց տանք—ի՞նչ հագանում են, փոփոխվում։ Հիմա հարց տանք—ի՞նչ հագաբերության մեջ եւ գտնվում նյութական արտադրության փոփոխվությունը «հոգեկան արտադրության» փոփոխվության նկատմամբ։

Մենք յերկրորդ գլխում (տես յեր. 60 և շար.) արդեն ցույց ավինք, վոր իվերջո նյութական արտադրությամբ եւ ամբողջովին վորոշվում «հոգեկան արտադրությունը» կամ իդեոլոգիան։

Ինչից եւ այդ հետևում։ Նրանից, վոր մարդկանց իդեյաները, մտքերը, մտապատկերները ստեղծվում են աշխատանքի ընթացքում, հանդիսանում են արտացոլում այն ամենի, ինչի վոր մարդ հանդիպում եւ Փայտի մասին մարդ ի՞նչ գիտե, նա ինչքան գաղափար ունի փայտի մասին։ Այնքան, ինչքան վոր մարդու

կարողացել ե ստանալ փայտի վրա իր ունեցած ներգործության պրոցեսում։ Նա իմանում է, վոր փայտը ամուր առարկա յե, բայց յերկաթից ամուր չե։ Նա իմանում է, վոր փայտը չի սուղվում, վառվում է և այն և այն։ Ի՞նչպես ե նա այդ իմանում։ Իր փորձից, փայտի վրա աշխատելով, փայտի հետ գործ ունենալով։ Յեվ կամ փորձենք բացատրել, թե ինչու ներկայումս կոմունիստական իդեյաներն այնպես լայն տարածված են աշխարհում։ Իհարկե, մենք այդ չելինք կարող բացատրել նրանով, վոր այս կամ այն մեքենաները ստիպել են մարդկանց այդպես մոտածելու։ Բայց մենք կարող ենք հետևել, թե ինչպես մարդկային աշխատանքը հասցըել ե մարդկային տեխնիկայի վորոշ զարգացման, վորը (տեխնիկան) ստեղծել ե համապատասխան կապիտալիստական հարաբերություններ։ Այդ հարաբերությունները հասարակությունը բաժանել են յերկու բանակի—բանվորների և կապիտալիստների։ Այդ նույն կապիտալիստական հարաբերությունները հասցըին իմպերիալիստական պատերազմների, քայլքայման։ Ժողովրդական տնտեսության քայլքայմը բանվորներին ցույց ե տալիս, վոր բուրժուազիան դա այլևս վարել չի կարող։ Բանվորները աղքատանում են, նրանց դրությունը հետզհետե վատթարանում ե, նրանք տեսնում են, վոր քանի կապիտալիզմը գոյություն ունի, իրենց ծանր դրությունը չի փոխվի։ Նրանք սկսում են հասկանալ, վոր իրենց այդ ներ վիճակից կազատվեն միմիայն՝ պրոլետարական դիկտատորայի միջոցով դեպի կոմունիզմ անցնելով։ Այդպիսով—մարդկանց աշխատանքային հա-

րաբերություններով են վորոշվում նրանց իդեյաները։ Իրենց հերթին՝ այդ աշխատանքային հարաբերությունները վորոշվում են գոյություն ունեցող հասարակական տեխնիկայով։

Մարդկանց գիտակցուրյունը վորոշվում և իրենց կեցուրյամբ։—Այս բոլորից հետևում է, վոր «հոգեկան արտագության» զարգացումը, մարդկանց գիտակցության զարգացումը տեղի յե ունենում նյութական արտադրության վորոշ զարգացման ներքո։ Դա—պատմական մատերիալիզմի հիմնական միտքն ե։ Դա ասում ե—մարդկանց գիտակցությունը վորոշվում է իրենց կեցությամբ, այսինքն՝ աշխատանքային այն հարաբերություններով, վորոնց մեջ մարդիկ աշխատում են։

Ճիշտ ե, իդեալիստները ընդունում են, վոր իդեաներն են վորոշում հասարակության ամբողջ կյանքը, դրա հետ նաև նյութական արտադրությունը։ Բայց նրանք չեն կարող պատասխան տալ այս հարցին—ինչու զանազան ժամանակներում գոյություն են ունեցել զանազան իդեյաներ, ինչու յեն փոխվում իդեյաները։

Նրանք ստիպված են կամ ասել, վոր զարգանալը իդեյաներին հատուկ ե, կամ՝ հենվել անհայտի վրա—աստծու և դրա նմանների վրա։

Ասել, վոր զարգանալը եղեյաներին հատուկ ե—այդ նշանակում ե վոչինչ չասել։ ԶԵ վոր այդպես շատ հեշտ ե ամեն ինչ բացատրել։ Ի՞նչու յե, որինակ, պարագողը շարժվում։ Վորովհետև շարժվելը նրան հատուկ ե։ Ինչու մեր յերկրի բանվոր դասակարգը ավելի հեղափոխական ե։ Վորովհետև այդ

նրան հատուկ եւ Յեվ այլն Ստացվում եւ անմիտ բան, և վոչ թե բացատրություն:

Իսկ աստծու վրա հենվելն, իհարկե, արդեն վոչ մի քննադատության չի դիմանում: Այնպես վոր պետք եւ ընդունել, վոր իդեալիզմը չեւ կարող բացատրել հասարակության գարգացումը: Յեվ նրա այն ցուցմունքը, վոր իբր թե իդեաներն են վորոշում մարդկանց կյանքը,—ճիշտ չեւ: Մարդիկ դառնում են բանվորներ վոչ թե այն պատճառով, վոր սկսում են բանվորի պես մտածել, այլ ընդհակառակը, մարդս բանվոր դառնալով ձեռք եւ բերում պրոլետարական իդեոլոգիա:

Մարդկանց աշխատանքային հարաբերությունները սովորաբար անվանում են հասարակության բաղիս (հիմք), իսկ քաղաքական իրավակարգը և իդեոլոգիան՝ վերնաշենք:

Քաղաքական յեվ իեռողդիական վերնաշենքեր:—Քաղաքական իրավակարգը, այսինքն՝ պետությունը, կուսակցությունները, նրանց պայքարը—հասարակական-քաղաքական վերնաշենքեր են, մասցածը անվանվում են իդեոլոգիական վերնաշենքեր: Թե մեկը և թե մյուսը վորոշվում են բազիսով՝ ինչպես մենք արդեն բացատրեցինք: Բայց պետք եւ նիշել վոչ միայն այն, վոր բազիսով են վորոշում վերնաշենքերը, այլ և ընդհակառակը, վերնաշենքերն ել իրենց հերթին ազդում են բազիսի վրա:

Վերնաշենքերի ազդեցությունը բաղիսի վրա:—Յեվ իրոք: Վերցնենք այնպիսի քաղաքական վերնաշենք, ինչպիսին եւ պետությունը: Արդյո՞ք նա ազդում է

մարդկանց տնտեսական հարաբերությունների վրա, այսինքն բազիսի վրա: Մենք գետենք, վոր այդպիսի ազդեցություն անպայման գոյություն ունի: Դրանում համոզվելու համար բավական եւ դիտել վորեւ պետության գործնեյությունը: Հիշենք թեկուղ այն, թե մեր յերկրում ինչպես վոչնչացվեց մասնավոր սեփականությունը ֆարբիկաների և գործարանների վերաբերմամբ. դա պարզ ցույց է տալիս, թե քաղաքական վերնաշենքը ինչպիսի ազդեցություն ունի տընտեսական բազիսի վրա: Հարաբերությունները բոլորովին փոխվեցին: Ի՞նչ կատարվեց այդ ժըմանում: Քաղաքական հեղափոխություն:—կապիտալիստական հարաբերությունները պաշտպանությունը հին պետությունը վոչնչացվեց, իսկ նոր կազմված Խորհրդային պետությունը վերակառուցեց, ստեղծեց նոր հարաբերությունները, վոր ներկայումս գոյություն ունին մեր յերկրում: Ուրեմն տնտեսությունը վերակառուցվեց պետության, քաղաքական վերնաշենքի ազդեցության տակ:

Վերցնենք մի ուրիշ որինակ. այնպիսի իդեոլոգիական վերնաշենք, ինչպիսին եւ գիտությունը: Բանվորատասակարգը իր քաղաքական պայքարըն ընդդեմ բուժուազիայի մղում եւ այնպիսի ուսմունքների ոգնությամբ, ինչպիսին են՝ մարքսիզմ և լենինիզմ: Այդ պայքարը վերջանում է հեղափոխությամբ, վորը և տընտեսական բազիսը բոլորովին վերակառուցում եւ—հին կապիտալիստական հարաբերությունները վոչնչացվում են, ծնվում են սոցիալիստական հարաբերություններ: Այստեղ մեզ պարզ յերևում եւ, թե ինչպես իդեոլո-

գիական վերնաշենքը—Մարքսի և Լենինի ուսմունքը, վոր առաջացել է կապիտալիստական հարաբերությունների գոյության հետևանքով, դեկավարում է բանվոր դասակարգին և նրան հասցնում այն դրության, վոր նա մեկ տնտեսական հարաբերությունները փոխարինում ե ուրիշ հարաբերություններով։ Նշանակում ե՝ իդեոլոգիական վերնաշենքը տնտեսական բազիսի վրա ազդում են։

Սակայն պետք է շեշտել հետեւյալը. բաղիսի և վերնաշենքի այդ փոխհարաբերությունների մեջ հիմնականը, վորոշողը հանդիսանում է տնտեսական բարգիսը։ Շնորհիվ դրա զարգագման, զարգանում են և վերնաշենքերը, և վոչ ընդհակառակը։ Տնտեսական հարաբերություններն իրենցով վորոշում են վոչ միայն հասարակության ամբողջ զարգացումը, դրա մեջ հաշված նաև վերնաշենքերի զարգացումը, այլև այն, թե ինչպես այդ վերնաշենքերը նրա վրա հակառակ ազդեցություն են գործում։ Վերնաշենքերի ազդեցությունը տվյալ հասարակության տնտեսական հարաբերություններով սահմանած շրջանակներից չի անցնում։ Վերնաշենքերը կարող են տնտեսության զարգացմանը կամ նպաստել և կամ այդ զարգացմանը արգելք լինել, բայց նրանց ազդեցությունը միշտ ել վորոշում և տնտեսական այն հարաբերություններով, վորոնց վրա նրանք կառուցված են։

Վերցնենք կապիտալիստական աշխարհի ժամանակակից իդեոլոգիական վերնաշենքը։ Այստեղ տընտեսական հարաբերություններն այնպես են, վոր մի ծայրում կանգնած են կապիտալիստ-իմպերիալիստները։

մյուս ծայրում՝ շահագործվող բանվորները։ Իսկ ի՞նչ պիսի իդեոլոգիական վերնաշենք ե։ Նա հանդիսանում է տնտեսության (եկոնոմիկայի) արտացոլում։ Մեկ կողմով (կապիտալիստները) նա հականեղափոխական է, կապիտալիստական, մյուս կողմով՝ կոմունիստական, պրոլետարական։ Թե մեկը և թե մյուսը մունիստական, պրոլետարական։ Թե մեկը և թե մյուսը կապիտալիզմի տնտեսական հարաբերությունների վրա ազդում են, բայց տարբեր կերպով։ Առաջինին առաջիմ հաջողվում է միացնել, ի մի հավաքել իր դասակարգը, մասամբ նաև անգիտակից բանվորներին՝ նրա համար, վորպեսզի կապիտալիստական հարաբերությունները պահպանի։ Մյուս, կոմունիստական իդեոլոգիական, ընդհակառակը, աշխատում է վոչնչաչնել կապիտալիստական հարաբերությունները, կազմակերպում է բանվորական մասսաներին նրա համար, վորպեսզի նրանք նաև կատարեն քաղաքական հեղաշրջում և ապա վոչնչացնեն կապիտալիստական հարաբերությունները, ինչպես վարվեցին բանվորները ԽՍՀ Միության մեջ։

Բուրժուազիայի իդեոլոգիան չի կարող արդյոք կանգնեցնել ամբողջ աշխարհի տնտեսական զարգացման ընթացքը, նրան վերադարձնել կրկին այն դրության, ինչ վոր եր՝ 15—25 տարի առաջ, յերբ կապիտալիզմը քիչ թե շատ կայուն եր։

Յեվ կամ պրոլետարիատի հեղափոխական իդեոլոգիան արդյոք կարող է իսկույն և յեթ սոցիալիստական կամ կարգեր մտցնել, հաշվի չառնելով գոյություն ունեցող տնտեսական հարաբերությունները։ Որինակ՝ նա կարող է հաշվի չառնել և ցատկել այն փաստի

վրայով, վոր դեռևս գոյություն ունին միլիոնավոր գյուղացիներ։


Իհարկե վոչ, վորվհետեւ իդեոլոգիան տնտեսության (եկոնոմիկայի) վրա ազդել կարող է միայն այնչափ, վորչափ թույլ է տալիս ինքը տնտեսությունը (բազիաը)։

Այս ամենից պարզ է, վոր իդեոլոգիական վերնաշենքերը, թեև առաջանում են տնտեսական հարաբերությունների հիմքի վրա, հակառակ ազդեցություն են գործում վերջիններիս վրա։ Այդ ազդեցությունը վորոշվում է նույն այդ եկոնոմիկայով։ Բայ վորում, դասակարգային եկոնոմիկան (տնտեսությունը) նույնպես ստեղծում է դասակարգային իդեոլոգիական վերնաշենքեր։ Ամեն մի զարգացող դասակարգ ստեղծում է իր սեփական իդեոլոգիան, վորի ոգնությամբ և մղում է իր դասակարգային պայքարը։* Իդեոլոգիաները վոչ թե պաճուճանք են, այլ դասակարգային պայքարի միջոցներ, վոր դասակարգին ոգնում են հասնելու իր նպատակին։

Մարդկային հասարակության կառուցման սխեման։—Այժմ մենք կարող ենք հասարակության կա-

* «Վողջ աշխարհում, Ամերիկայից մինչև Յապոնիա և Շվեյցարիայից մինչև Հարավյան Ամերիկա բազմանում են պրոլետարիատի ինքնուրույն կազմակերպությունները։ Պրոլետարիատը լուսավորվում է ու դաստիարակվում, վարելով իր դասակարգային պայքարը՝ ազատագրվում և բուրժուական հասարակության նախապաշարումներից, ավելի ու ավելի սերտ միաձուլված՝ սովորում և իր հաջողությունները չափել վորոշել։ Նա կոփում է իր ուժերն ու անդիմագրավ մեծանում։ (Լենին)։

ոռոցման սխեման տալ ավելի մանրամասն, քան այդ արել ենք 62 յերեսում։



Իդեոլոգիական վերնաշենքերի զյուավոր տեսակները։—Մեզ մնում է ուսումնասիրել իդեոլոգիական վերնաշենքերը կամ իդեոլոգիան։ Դրանք իրենց հերթին ստորաբաժանվում են 5 զլիսավոր տեսակների։ 1) իրավունք, 2) բարոյականություն, 3) կրոն, 4) գիտություն, 5) գեղարվեստ։ Դրանք քննենք առանձին-առանձին։

ԻՐԱՎՈՒՆՔ

Ներկայումս բոլոր մարդիկ ապրում են պետությունների մեջ։ Պետությունը սահմանում է վորոշականներ՝ մարդկանց փոխարարերությունների մասին, ինչպես նաև այն մասին, թե մարդիկ ի՞նչ հարաբերությունների մեջ պիտի գտնվեն պետության

նկատմամբ։ Մարդիկ պարտավոր են այդ կանոններին յենթարկվել։ Բայց պետությունը, ինչպես մենք գիտենք, դասակարգային կազմակերպություն ե։ Ուստի և նա սահմանում է այնպիսի կանոններ, վոր իշխող դասակարգին շահավետ լինի։ Անա և այդ բոլոր կանոնների ու հարաբերությունների ամբողջությունը միասին վերցրած՝ կոչվում է իրավունք։

Որենի յեվ իրավական հարաբերություններ։— Իրար հետ չպետք է շփոթել այն կանոնները, վոր սահմանում է պետությունը, և այն հարաբերությունները, վոր այդ կանոնների հիման վրա սահմանվում են մարդկանց միջև։ Թե մեկը և թե մյուսը—իրավունք ե։ Բայց առաջինը կոչվում է որ ենք, իսկ յերկրորդը՝ իրավական հարաբերություններ։

Դա բացատրենք որինակներով. պետությունը սահմանում է—ամեն վոք, ով փող է պարտք տալիս, իրավունք ունի դա յետ ստանալու։ Դա—որենք ե, այսինքն՝ ընդհանուր իրավական մի դրություն ե, վոր սահմանել ե պետությունը։ Բայց այն դեպքերում, յերբ Ա. Բ. վաճառականները փող են պարտք տվել Գ. Դ. վաճառականներին, — առաջինների (Ա. Բ.) և վերջինների (Գ. Դ.) միջև սահմանվում են իրավական հարաբերություններ։ Ա. Բ. վաճառականները իրավունք ունեն փողը յետ ստանալու, իսկ Գ. Դ. վաճառականները պարտավոր են փողը վճարելու։ Այսպես ե տարբերում որենքի ձևով դրված իրավունքն այն իրավունքից, վորը հարաբերության ձևով սահմանվում է յերկու և ավելի մարդկանց միջև։ Պարզ ե, վոր ժամանակակից դասակարգային հասարակության մեջ

իրավական հարաբերությունները բղիսում են իրավունք-որենքից։

Ամեն մի իրավունք—դասակարգային իրավունք է։— Մենք արդեն ասացինք, վոր որենքները սահմանում ե պետությունը, պաշտպանելով վորոշ դասակարգի շահերը։ Նշանակում է ամեն մի իրավունք դասակարգային իրավունք ե, այսինքն՝ իշխող դասակարգի իրավունք ե։

Բուրժուական իրավունք։— Ինչում է կայանում բուրժուական իրավունքի եյությունը։ Նրանում, վոր նա պահպանում է մասնավոր կապիտալիստական սեփականությունը։ Բոլոր որենքներն սահմանված են այնպես, վոր այդ սեփականությունը ամեն կերպ պահպանվի։ Բուրժուական որենքներն, որինակ, խիստ պատժում են գողության (նույն իսկ փոքր գողության) համար։ Ինչու յե այդպես։ Այդպես ե նրա համար, վոր գողությունը մասնավոր սեփականության, այսինքն բուրժուականի համար ամենասրբազն բանի խախտումն է։

Իրավունքի դասակարգային բնույթը ել ավելի պարզ է այն որենքներում, վորոնք վերաբերում են այսպես կոչված քաղաքական գործերին։ Պոլետարական մասսաների կազմակերպված պայքարին նպաստող աշխատանքն բուրժուազիան համարում է առանձնապես վտանգավոր, ուստի և սահմանում է բաղմազն որենքներ՝ այդ գործնեյությունը ամեն կերպ արգելելու համար։

Քննելով իրավունքի դասակարգային եյությունը, չի կարելի չնկատել այն, թե ի՞նչ կերպ ե այդ իրավունքը կիրառվում։ Որենքների խախտման դեպքում

պատիժներ կիրառելու համար գոյություն ունի մի ամբողջ դատական ապարատ։ Այսուեղան ամեն ինչ լիովին համաձայնեցված է իրավունքի դասակարգային եյության հետ։ Դատավորների կազմն ընտրվում է այնպես, վոր իշխող դասակարգի շահերը լիովին պաշտպանվեն։ Այդպիսով դատավորները ամենածանր պատիժներ կարող են տալ աշխատավոր մասսաներին, միաժամանակ ազատ արձակելով իրենց դասակարգային յեղայրներին։ Փաստերը բազմաթիվ են. հիշենք թեկուղ մի քանի թարմ որինակներ. — 1924 թ. գարնանը Եստոնիայի դատարանը 149 կոմունիստներին դատապարտեց 1492 տար. տաժանակիր աշխատանքի, միջին հաշվով յուրաքանչյուրին 10 տարով (կոմունիստները կազմակերպել ենին բանվորական մասսաներին). բոլղարական դատարանը 1925 թ. մայիսին բոլղար կոմունիստներին դատապարտեց կախաղանի. գերմանական դատարանը Լիբրնիստին և Լուքսեմբուրգին սպանողին դատապարտեց 2 տար. բանտարկության, այն ել ժամանակից առաջ արձակեց մարդասպանին. Շվեյցարական դատարանը ԽՍՀՄ ներկայացուցիչ Վորովսկուն սպանողին արդարացրեց. Լեհական դատարանը (անցյալ տարի) ԽՍՀՄ ներկայացուցչին սպանողին «դատապարտեց» 2—3 տարի «բանտարկության». Ամերիկայի Միացյալ Նահանգների դատարանը Սակու և Վանցետափին սպանեց (չնայած ամբողջ աշխարհի պրոլետարիատի միահամուռ բողոքին ու խոշոր ցույցերին) ելեքտրական աթոռի վրա. Յեվ այլն և այլն. Անվերջ կարելի յեր ցայտուն որինակներ բերել:

Բավական ե միքիչ քննել, և կտեսնենք, վոր թե իրավունքը և թե դատական ապարատը գուտ դասակարգային վերնաշենք է, վոր ամրացնում է իշխող դասակարգի դիրքը: (Բուրժուազիան ճգնում է հավատացնել, վոր իր դատարանը իրը թե դասակարգային բնույթ չունի): Մի խուզով—բուրժուական որենքը կազմված է այնպես, վոր դատարանը դրա ծանրությունը վոր կողմը ցանկանա կարող է թեքել՝ նայած թե ով է կանգնած իր առաջ, նայած թե ինչ են պահանջում իշխող դասակարգի (ամբողջովին վերցրած) և կամ առանձին խմբի շահերը: Յեվ ամեն դեպքում արդյունքը լինում է դրան համապատասխան:

Խորհրդային իրավունք: — Խորհրդային իրավունքը և Խորհրդային դատարանը ևս դասակարգային են: Սակայն դրանց սայրն ուղղված է շահագործողների դեմ: Մեր իրավունքը դյուրացնում է բանվորների և դյուղացիների սկայքարը հոգուտ կոմունիզմի: Մեր իրավունքը արգելում է այն ամենը, ինչը կարող եր խախտել պրոլետարական դիկտատուրայի հիմքերը: Մեր իրավունքը արգելում է բուրժուազիայի ամեն տեսակ քաղաքական կազմակերպություններ, նրան զրկում է քաղաքական իրավունքներից, ամեն կերպ սահմաններ է դնում բուրժուազիայի այն բոլոր քայլերի դեմ, վոր արվում են բանվորներին և դյուղացիներին շահագործելու նպատակով:

Խորհրդային իրավունքն այդ բոլորը անում է նրա համար, վորովհետեւ նա դասակարգային իրավունք է: Այդ իրավունքը—պրոլետարիատի իրավունք է, վոր պաշտպանում է նրան և նրա դաշնակցին՝ դյուղացիներին շահագործելու նպատակով:

ությունը, և ուղղված ե բուրժուազիայի ու կալվա-
ծատերերի դեմ:

Այդպիսով, խորհրդային իրավունքը խիստ տար-
բերվում է բուրժուական իրավունքից: Ինարկե, թե
մեկը և թե մյուսը դասակարգային են: Բայց մերը—
խորհրդայինը—ճնշվածների ու շահագործվածների իրա-
վունք ե, վորը մեզ անհրաժեշտ ե՝ ազատազրկելու
համար: Խակ բուրժուազիայի իրավունքը—պարագիտի
(տղուկի), շահագործողի իրավունք ե, վոր բուրժու-
ազիան դա կիրառում ե՝ աշխատավորությանը ճշն-
շելու համար:

Խորհրդային դատարան: — Մեր դատարանների
կազմն ևս խորհրդային ե, պրոլետարական: Նրա վե-
րաբերմունքը դեպի բուրժուազիան այլ ե, քան դեպի
աշխատավորությունը: Խորհրդային դատարանը դա-
տավճիռը հաճախ մեղմացնում ե՝ «նկատի ունենա-
լով պրոլետարական ծագումը»: Բայց այստեղ ևս
պետք ե ասել, վոր հակայական տարբերություն կա-
շահագործողների դատարանի և աշխատավորության
դատարանի միջև: Այստեղ դատում են՝ աշխատավոր
ժողովրդին ճնշելու համար, խակ մեզ, մոտ—աշխա-
տավոր ժողովրդին ազատազրելու համար:

Պետք ե շեշտել և այն, վոր խորհրդային իրավուն-
քին ոտար ե վրեժի զգացմունքը: Խորհրդային դա-
տարանը վրեժ չի լուծում, այլ վտանգավոր անձին
հասարակությունից մեկուսացնում ե, այդ անձին
հնարավորություն ե տալիս ուղղվելու: Բուրժուական
դատարանի համար բնորոշ գիծ ե հանդիսանում վրեժի
իդեյան: Նա հանցագործին միայն պատժում ե, նրան չի

ուղղում կամ հասարակության համար անվտանգ չի
դարձնում, այլ միմիայն պատժում ե, վրեժ և առնում:

Իրավունքը կունենազմի որով կմահանա: — Քանի
վոր իրավունքը դասակարգային յերեսությ ե, ապա
ուրեմն նա կոմունիստական հասարակության որոք
կմահանա: Հետզհետե, դասակարգերի վերացման հետ
միասին, կակսեն վերացվել նաև դասակարգային հա-
սարակության հակասությունները: Հասարակությունը
կառուցված կլինի այնպես, վոր կարիք չի լինի պե-
տության կողմից տրվող հրամանների:

Մարդկանց միջև մզվող պայքարին կփոխարինե
նրանց սերտ աշխատակցությունը: Հանցագործություն-
ների հիմնական պատճառները, ինչպիսիք են՝ չքավո-
րությունը, մասնավոր սեփականությունը, ստացվածք-
ային հաշվաները — կվերացվեն, վորովհետև կոմու-
նիզմի որոք մասնավոր սեփականություն չի լինի:
Իրավունքն արգեն ավելորդ կդառնա: Նա կմնա միայն
պատմական գրքերում:

ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մեծ նշանակություն ունի դասակարգային իդեո-
լոգիայի այն մասը, վորը բարոյականություն
անունն ե կրում (այլ կերպ ասում են՝ մորալ կամ
եթիկա: այդ բոլոր բառերը նույն իմաստն ունեն):

* Կարող են հարցնել, թե կոմունիզմի որոք ապա ինչ-
պես կվարվեն, որինակ, այն մարդու հետ, վորը կսպանի
մեկ ուրիշին: Պետք ե ասել, վոր այն ժամանակվա պայ-
մաններում և մարդկանց իդեյաններում նման դեպք կարող
ե պատճել միայն հիվանդ մարդու հետ: Պարզ ե, վոր
նրան պետք ե բժշկել և վնչ թե դատել:

Ի՞նչ ե բարոյականությունը:—Բարոյականություն
ենք անվանում վարքի այնպիսի կանոնները, վորոնք
ցույց են տալիս, թե մենք ինչ պետք ե անենք և
ինչ—չպետք ե անենք:

Բարոյականություն յեվ իարվունք:—Այդ կանոն-
ները իրավունքի կանոններից, որենքից տարբեր-
վում են նաև նրանով, զոր բարոյականությունը
մեղ չեն հրահանգում (իսկ իրավունքն, ինչպես
տեսանք, հրահանգում են), թե մենք Բնչակիսի վարք
պետք ե ունենանք: Իրավունքը մեղ հարկադրում է
պետության ուժով: Բարոյական հրահանգներն այդ-
պես չեն: Նրանք, այսպես ասած, մեր ներսից բղիող
կանոններ են, այդ հրահանգներն ապրում են մեր գի-
տակցության մեջ: Ներքին պարտականությունը մեղ
ստիպում է վարվել այսպես և վոչ թե այլ կերպ:
Որինակ, յեթե մարդ գնում է պատերազմ նրա համար
զոր նաև մորթիլզացիայի յե յենթարկվում պետության
կողմից, այսինքն նրա հոգար, զոր պետությունը
նրան ստիպում է այդ անել:—այստեղ արդեն գոր-
ծում է իրավունքը: Իսկ յեթե նա գնում է իր կամ-
քով, ընդունելով զոր պետք ե ընդհանուր պրոլետա-
րական գործը պաշտպանել:—այստեղ արդեն գոր-
ծում է բարոյականությունը: Յերկրորդ, բարո-
յականությունը իրավունքից տարբերվում է նրա-
նով, զոր իրավունքը միշտ սահմանվում է իշխող դա-
սակարգի կողմից: Ճնշված դասակարգը իր իրավունքը
սահմանում է իշխանությունը բռնագրավելուց հետո
միայն: Իսկ այդ ժամանակ վոչնչացվում է այն իրա-
վունքը, զոր սահմանել եր նրա նախորդը: Բարոյակա-

նության վերաբերյալ այդ չի կարելի ասել: Նա ստեղծ-
վում է յուրաքանչյուր խոշոր և զարգացող դասակարգի
կողմից, անկախ այն հանգամանքից՝ նա իշխող է հանդի-
սանում թե վոչ: Այսպես, միաժամանակ գոյություն
ունեն և բուրժուական և պրոլետարական բարոյակա-
ռություն (յուրաքանչյուրն իր դասակարգի համար):

Բոլորունական բարոյականություն: — Բուրժուա-
կան բարոյականությունը համապատասխանում է կա-
պիտավորակարգի շահերին ու գրությանը:
Այն բոլորը, ինչի մեջ կապիտավորական իրավա-
կարգը շահագրգռված է, այդ բոլորը նա հայտարա-
րում է բարոյական, իսկ այն ամենը, ինչ նրան ձեռնաու-
չե, ինչ նրա համար վտանգավոր է և նրա զորու-
չե, ինչ նրա համար վտանգավոր է և նրա զորու-
չե իսախող—նա հայտարարում է անբարոյա-
թյունը խախտող—նա հարաբերությունները,
կան: Նա պաշտպանում է այն հարաբերությունները,
զորոնք բուրժուական իրավակարգը ամրապնդում են:
Նա ունի միենույն նպատակը, ինչ նպատակ վոր ունի
նա ունի միենույն նպատակը, ինչ նպատակ վոր ունի
պաշտպանում է ամբողջ կապիտավորական մասնավոր սեփականու-
թյունը: Միայն թե բարոյականությունը այդ անում
է ավելի նուրբ կերպով:

Բուրժուական բարոյականությունը արդարացնում
է և բանվորներին շահագործելը, և աշխատավոր բնակ-
չության լայն մասսաների աղքատությունը, և պա-
տերազմները, զորտեղ միլիոնավոր աշխատավորներ են
կապիտավորական շահույթների համար: Այդ
ամենը բուրժուական բարոյականությամբ քողարկ-
վում են, զորովհետեւ դրանք հանդիսանում են կապի-
տավորական աշխարհի հիմքերը:

Բուրժուազիայի յերկու տեսակի բարոյականությունը.—Բայց բարոյականության բուրժուազիան քառողիչներից կարելի յե և այլ բան լսել: Նրանք համախ խոսում են այն մասին, վոր մարդիկ—յեղայրներ են, վոր կոփը—վատ բան ե, վոր չի կարելի մարդուն ոգտագործել ուրիշի շահերի համար և այն: Այդ քառողը չի ծառայում բուրժուազիայի «ներքին զոր ծածության» համար: Մենք վերև ցույց տվինք բուրժուաշահագործողի իսկական, գործնական բարոյականությունը: Իսկ յերկրորդ՝ «լավ» բարոյականությունը ծառայում ե աշխատավորների գլուխները մթագնելու համար: Նա լավ խոսքեր ե ասում, գեղեցիկ պատկերներ նկարում, բայց իհարկե բուրժուազիան այդ չի կիրառում:

Այդպիսով, բուրժուազիան ունի յերկու տեսակի բարոյականություն—մեկը իսկական, վորը թույլ ե տալիս ամենատմարդի կերպով շահագործելու աշխատավոր մասսաներին, որինում ե ամեն տեսակի սրիկայություններ և ստորություններ, իսկ մյուսը, պաշտոնականը—կեղծ ե: Առաջինը կիրառում ե բուրժուազիան, իսկ յերկրորդը հրամցնում են պրոլետարիատին: Այդ յերկրորդ բարոյականությունը կապիտալիստների կեղտու արարքների համար ծառայում ե միայն վորպես շիրմա, վորպես ծածկույթ:

Յեվ հենց դրա համար ե, վոր բուրժուազիան իր բարոյականությունը համարում ե հավիտենական, բոլոր ժամանակների ու բոլոր դասակարգելի համար պիտանի: Նա ժխտում ե բարոյականության ծառայական դասակարգային դերը և պնդում, վոր կարող ե

լինել միայն մեկ իսկական բարոյականություն: Իսկ յեթե դա այդպես ե, ապա ուրեմն ուրիշ բարոյականություն նույն իսկ վնարել պետք չե ու չի կարելի: Հետևապես կապիտալիստական իրավակարգը «հավիտայանա-հավիտենից» ամպահովված ե, քանի վոր բոլոր մարդիկ, մանավանդ բանվոր դասակարգը, անբարոյական գործ կհամարեն այդ իրավակարգի դեմ պայքարելը:

Իհարկե, այդպիսի պնդումն բոլորովին սխալ ե: Մենք հազարավոր որինակների վրա տեսնում ենք, վոր հավիտենական բարոյական ճշմարտություններ չկան: Բարոյականությունը փոփոխվում ե՝ նայած թե ինչպիսի հասարակական իրավակարգ գոյություն ունի: Յեվ ամեն մի իրավակարգի մեջ գոյություն ունին բարոյականության այնքան զանազան տեսակներ, ինչքան կան խոշոր ու զարգացող դասակարգեր:

Պրոլետարական բարոյականություն:—Պրոլետարական բարոյականությունը ևս դասակարգային բնույթ ե կը ունի: Նրա պահանջները ուղղվում են բանվոր դասակարգի անդամներին և նրանց թելագրում են գործելու այնպես, վոր ավելի ոգտակար լինի պրոլետարական պայքարի շահերի համար: Յեվ քանի վոր բանվոր դասակարգի պայքարի շահերը կայանում են բանվոր դասակարգի կապիտալիզմի կործանման ու կոմունիստական հասարակության ստեղծման մեջ, ապա և պրոլետարական բարոյականությունը թելագրում ե հենց այդ ուղղությամբ գործելու: «Մենք ասում ենք—հայտարարում եր Լենինը—բարոյականությունն այն ե, ինչ ծառայում ե հին շահագործական հասարակության կործանմանը և աշխատավորների հա-

Բուրժուազիայի յերկու տեսակի բարոյականությունը:—Բայց բարոյականության բուրժուազիան քառողիչներից կարելի յե և այլ բան լսել: Նրանք համախխոսում են այն մասին, վոր մարդիկ—յեղայրներ են, վոր կոփը—վատ բան ե, վոր չի կարելի մարդուն ոգտագործել ուրիշի շահերի համար և այն: Այդ բարողը չի ծառայում բուրժուազիայի «ներքին զոր ծածության» համար: Մենք վերև ցույց տվինք բուրժուազործողի իսկական, գործնական բարոյականությունը: Իսկ յերկրորդ՝ «լավ» բարոյականությունը ծառայում ե աշխատավորների գլուխները մթագնելու համար: Նա լավ խոսքեր ե ասում, գեղեցիկ պատկերներ նկարում, բայց ինարկե բուրժուազիան այդ չի կիրառում:

Այդպիսով, բուրժուազիան ունի յերկու տեսակի բարոյականություն—մեկը իսկական, վորը թույլ ե տալիս ամենատմարդի կերպով շահագործելու աշխատավոր մասսաներին, որինում ե ամեն տեսակի սրիկայություններ և ստորություններ, իսկ մյուսը, պաշտոնականը—կեղծ ե: Առաջինը կիրառում ե բուրժուազիան, իսկ յերկրորդը հրամցնում են պրոլետարիատին: Այդ յերկրորդ բարոյականությունը կապիտալիստների կեղառու արարքների համար ծառայում ե միայն վորպես շիրմա, վորպես ծածկույթ:

Յեվ հենց գրա համար ե, վոր բուրժուազիան իր բարոյականությունը համարում ե հավիտենական, բոլոր ժամանակների ու բոլոր դասակարգելի համար պիտանի: Նա ժխտում ե բարոյականության ծառայական դասակարգին գերը և պնդում, վոր կարող ե

լինել միայն մեկ իսկական բարոյականություն: Իսկ յեթե դա այդպես ե, ապա ուրեմն ուրիշ բարոյականություն նույն իսկ վնասը պետք չե ու չի կարելի: Հետեւապես կապիտալիստական իրավակարգը «հավիտանա-հավիտենից» ապահոված ե, քանի վոր բոլոր մարդիկ, մանավանդ բանվոր դասակարգը, անբարոյական գործ կհամարեն այդ իրավակարգի դեմ պայքարելը:

Ինարկե, այդպիսի պնդումն բոլորովին սխալ ե: Մենք հազարավոր որինակների վրա տեսնում ենք, վոր հավիտենական բարոյական ճշմարտություններ չկան: Բարոյականությունը փոփոխվում ե՝ նայած թե ինչպիսի հասարակական իրավակարգ գոյություն ունի: Յեվ ամեն մի իրավակարգի մեջ գոյություն ունին բարոյականության այնքան զանազան տեսակներ, ինչքան կան խոշոր ու զարգացող դասակարգեր:

Պրոլետարական բարոյականություն:—Պրոլետարական բարոյականությունը ևս դասակարգային բնույթ ե կրում: Նրա պահանջները ուղղվում են բանվոր դասակարգի անդամներին և նրանց թելազրում են գործելու այնպես, վոր ավելի ոգտակար լինի պլույատարական պայքարի շահերի համար: Յեվ քանի վոր բանվոր դասակարգի պայքարի շահերը կայանում են գլխավորապես կապիտալիզմի կործանման ու կոմունիստական հասարակության ստեղծման մեջ, ապա և պրոլետարական բարոյականությունը թելազրում ե հենց այդ ուղղությամբ գործելու: «Մենք ասում ենք—հայտարարում եր Լենինը—բարոյականությունն այն ե, ինչ ծառայում ե հին շահագործական հասարակության կործանմանը և աշխատավորների հա-

մախմբմանը պրոլետարիատի շուրջը, վորը ստեղծում ե կոմունիստների նոր հասարակություն»:

Այսպիսով, պրոլետարական բարոյականությունը մեր բոլոր քայլերը գնահատելու խնդրում յելնում ե հեղափոխությանը աջակցություն ցույց տալու տեսակետից։ Յեթե նրան այս կամ այն քայլերը ոգնում են—ուրեմն դրանք լավ են, բարոյական են, իսկ յեթե հեղափոխության զարգացմանը խանդարում են—վատ են, անբարոյական են։

Իհարկե, այս բոլորը կիրառվում ե միայն բանվոր դասակարգի նկատմամբ։ Պրոլետարիատը, հականեղափոխականների գեմ կովերով, չեր ասում—ահ, վնրքան անբարոյական են դրանք։ Նա հասկանում եր, վոր բարոյականությունը դասակարգային հասկացողություն ե։ Պրոլետարական բարոյականությունը. կիրառելի յե այն բոլոր մարտիկների նկատմամբ, վորոնք կովում են հոգուտ բանվոր դասակարգի, իսկ նրա թշնամիների նկատմամբ, իհարկե, այլ մոտեցում կա. նրանց հետ չեն խոսում բարոյականության մասին, այլ ուղղակի կովում են, սպանում են՝ յեթե դա անհրաժեշտ է, և այլն։

Սուածին որինակ—սպանություն։—Բայց պրոլետարական բարոյականությունը ի՞նչպես ե կոնկրետ կերպով գնահատում այս կամ այն վարմունքը, որինակ՝ սպանությունը։ Դա լավ ե թե վատ։ «Աստվածաշունչը», ի՞նչպես հայտնի յե, ասում ե—մի սպանիր։ Պրոլետարական բարոյականությունը այդպես չի մոտենում խնդրին։ Պետք ե բոլոր յերեսութները քննել կոնկրետ կերպով, հետևապես պետք ե իմանալ, թե յերբ, վոր-

տեղ և ինչ պայմաններում ե կատարվել սպանությունը։ Հարցը վճռել կարելի յե միայն այն ժամանակ, յերբ պարզվի, թե տվյալ յերեսութն արդյոք համապատասխանում ե պրոլետարական բարոյականությանը։ Յեթե քանվորը քաղաքացիական պատերազմի ժամանակ սպանել է հականեղափոխականների, նա՝ պրոլետարիատի առեսակետից՝ բարոյական վարմունքը ե թույլ տվել։

Բայց յեթե մենք, որինակ, իմանում ենք, վոր բանվորական միջավայրում, անձնական վիրավորանքի հետևանքով մի բանվոր սպանել ե մյուսին, մենք ի՞նչպես ենք վերաբերվում գեպի այդ։ Իհարկե դատապարտում ենք։ Կասենք, վոր դա անբարոյական ե, ինչու։ Վորովհետեւ այդ և նման յերեսութները քայլըցում, կազմակուծում են պրոլետարական շարքերը, բանվորների մեջ գժտություն են առաջ բերում և աշխատանքին խանգարում։ Պրոլետարական բարոյականությունը նման սպանությունը դատապարտում ե,

Յերկրորդ որինակ—աշխատանքի արտադրողականություն։—Յեթե ցարական շրջանում մի խումբ բանվորներ գործարանում սկսելին պայքարել հոգուտ աշխատանքի արտադրողականության և ինտինսիվության (լարվածության)՝ դրան ի՞նչպես կիրաբերվելին բանվորները։ Նրանք այդ խմբի քայլը կդատապարտելին, նրանք այդ խմբին կհամարելին դավաճաններ, բուրժուազիայի հացին յուղ քաղներ։ Մեկ խոսքված վարքը կհամարելին անբարոյական։

Հիմա տեսնենք, թե ի՞նչպես ե գնահատվում նման վարմունքը ներկա պայմաններում։

մախմբմանը պրոլետարիատի շուրջը, վորը ստեղծում է կոմունիստների նոր հասարակություն»:

Այսպիսով, պրոլետարական բարոյականությունը մեր բոլոր քայլերը գնահատելու խնդրում յենում են հեղափոխությանը աջակցություն ցույց տալու տեսակետից: Յեթե նրան այս կամ այն քայլերը ոգնում են—ուրեմն դրանք լավ են, բարոյական են. իսկ յեթե հեղափոխության զարգացմանը խանդարում են—վատ են, անբարոյական են:

Իհարկե, այս բոլորը կիրառվում են միայն բանվոր դասակարգի նկատմամբ: Պրոլետարիատը, հականեղափոխականների գեմ կռվելով, չեր ասում—ահ, վնասան անբարոյական են դրանք: Նա հասկանում եր, վոր բարոյականությունը դասակարգային հասկացողություն եւ: Պրոլետարական բարոյականությունը. կիրառելի յե այն բոլոր մարտիկների նկատմամբ, վորոնք կռվում են հոգուտ բանվոր դասակարգի, իսկ նրա թշնամիների նկատմամբ, իհարկե, այլ մոտեցում կա. նրանց հետ չեն խոսում բարոյականության մասին, այլ ուղղակի կռվում են, սպանում են՝ յեթե դա անհրաժեշտ ե, և այլն:

Սուացին որինակ—սպանություն:—Բայց պրոլետարական բարոյականությունը ինչպես ե կոնկրետ կերպով գնահատում այս կամ այն վարմունքը, որինակ՝ սպանությունը: Դա լավ ե թե վատ: «Աստվածաշունչը», ինչպես հայտնի յե, ասում ե—մի սպանիր: Պրոլետարական բարոյականությունը այդպես չի մոտենում խնդրին: Պետք ե բոլոր յերեսույթները քննել կոնկրետ կերպով, հետևապես պետք ե իմանալ, թե յերբ, վոր-

տեղ և ինչ պայմաններում ե կատարվել սպանությունը: Հարցը վճռել կարելի յե միայն այն ժամանակ, յերբ պարզիի, թե տվյալ յերեսույթն արդյոք համապատասխանում ե պրոլետարական բարոյականությանը: Յեթե քանվորը քաղաքացիական պատերազմի ժամանակ սպանել է հականեղափոխականների, նա՝ պրոլետարիատի առեսակետից՝ բարոյական վարմունք ե թույլ տվել:

Բայց յեթե մենք, որինակ, իմանում ենք, վոր բանվորական միջավայրում, անձնական վիրավորանքի հետևանքով մի բանվոր սպանել ե մյուսին, մենք ինչպես ենք վերաբերվում գեպի այդ: Իհարկե դատապարտում ենք: Կասենք, վոր դա անբարոյական ե: Ինչու: Վորովինետե այդ և նման յերեսույթները քայլայում, կազմալուծում են պրոլետարական շարքերը, բանվորների մեջ գժտություն են առաջ բերում և աշխատանքին խանգարում: Պրոլետարական բարոյականությունը նման սպանությունը դատապարտում ե:

Յերկրորդ որինակ—աշխատանքի արտադրողականություն:—Յեթե ցարական շրջանում մի խումբ բանվորներ գործարանում սկսելին պայքարել հոգուտ աշխատանքի արտադրողականության և ինտիմսիվության (լարվածության) — դրան ինչպես կվերաբերվելին բանվորները: Նրանք այդ խմբի քայլը կդատապարտելին, նրանք այդ խմբին կհամարելին դավաճաններ, բուրժուազիայի հացին յուղ քսողներ: Մեկ խոսքով— նրանց վարքը կհամարելին անբարոյական:

Հիմա տեսնենք, թե ինչպես ե գնահատվում նման վարմունքը ներկա պայմաններում:

Այժմ ել ֆարբիկաներում և գործարաններում պայքար ե մղվում հոգուտ աշխատանքի արտադրողականության, հոգուտ աշխատանքի ինտենսիվության (լարվածության): Առաջավոր բանվորներն ամեն կերպ աշխատում են բանվորական ամբողջ մասսային վոտքի կանգնեցնել այդ ուղղությամբ:

Այժմ ի՞նչպես պետք ե վերաբերվենք դեպի այդ՝ Նույնպես դատապարտե՞նք: Վոչ յերբեք: Այժմ յերբ մեկը ազիտացիա յե անում այն մասին, վոր բանվորը պետք ե լարված աշխատի, — պրոլետարական տեսակետից դա բարոյական ե: Ինչու: Վորովիետև աշխատանքի լարվածությունն ու արտադրողականությունը այժմ լավագույն և գլխավոր պայքարն ե հոգուտ կոմունիկմի:

Յերրորդ որինակ — արբեցողուրյուն: — Արար կամ գինի խմելն լավ ե թե վատ: Հարցը այդպես չի դնում պրոլետարիատն ու կոմունիստական կուսակցությունը: Նրանց հետաքրքրում ե ուրիշ հարց: Խմիչք (սպիրտ) գործածելն ի՞նչպես ե ազդում աշխատանքի հաջողության վրա: Խանգարման ե թե վոչ: Յեթե սպիրտը մարդու վրա ազդեր այնպես ինչպես հացը կամ միսը, վոչ վոք այդ մասին չեր ել խոսի: Բայց մենք գիտենք, վոր սպիրտը մարդուն քայլայում ե: Դրա շարունակական գործածությունը մարդու աշխատառնակությունը նվազեցնում ե, մարդուն զրկում յեռանդից, կամքից: Հետևապես, սպիրտը թուլացնում ե պայքարն այն դասակարգի, վորին պատկանում ե տվյալ մարդը:

Դրա համար ել պրոլետարական գիտակցությունը դեմ ե սպիրտի գործածությանը, դա սիստեմատիկ

գործածելն համարում ե անբարոյական: Սպիրտը — կոմունիկմի թշնամին ե: Նա կոմունիկմի թշնամին ե նրա համար, վորովիետև նա պրոլետարական շարքերից խլում ե առանձին մարտիկներին: Պրոլետարական միջավայրում վորքան քիչ խմեն, այնքան ամուր կլինի բանվոր դասակարգն, այնքան առողջ կլինի նրա ընտանեկան կենցաղը, այնքան արագ կդիմենք դեպի կոմունիկմ: Մհան թե ինչու պրոլետարական բարոյականությունը դեմ ե սպիրտային խմիչքներ գործածելուն, բացի իհարկե բժշկական նպատակներով...

ԿՐՈՆ

Ի՞նչ է կրոնը: — Կրոնը — դա հավատ ե առ աստված, հավատ առ այն, վոր ամբողջ աշխարհը ստեղծել և կառավարում ե ինչ-վոր վոգի: Կրոնը — դա նույն իդեալիզմն ե (վորի մասին մենք խոսեցինք): Միայն թե ավելի կոպիտ ձևով: Ըստ կրոնի — այն բոլորը, ինչ գոյություն ունի, կարելի յե բաժանել յերկու մասի — 1) նյութական (մատերիական) աշխարհ, բնություն և 2) հոգեկան աշխարհ, վորը կազմված ե անմարմին վոգիներից — աստվածներ, հրեշտակներ, մարդու հոգին և այլն: Կրոնը միաժամանակ պնդում ե, վոր աստված ե կառավարում այն ամենը ինչ գոյություն ունի և վերջիներիս նա յե ստեղծել, այսինքն՝ աստված ստեղծել ե և կառավարում ե ամբողջ տիյեղերքը:

Ի՞նչպես և ծագել կրոնը: — Վորպեսզի ավելի խորը քննենք իդեոլոգիական այդ վերնաշենքի եյությունը, պետք ե տեսնենք, թե ի՞նչպես ե նա ծագել: Այս-

մեղ մենք նախ նկատենք, վոր կըո՞նը յերբեք հասուկ չե մարդկությանը նրա կյանքի բոլոր աստիճաններում։ Մարդկության զարգացման արշալուսին կըոն գոյություն չուներ։ Մարդիկ չփառելին թե ինչ է աստված կամ հոգի։ Զելային այնպիսի պայմաններ, վորոնք մարդային գլուխներում ծնեցնելին կըոնական պատկերացումներ։ Իսկ յերբ նախնական կոմունիստական իրավակարգը սկսեց մահանալ և փոխարինվել նահապետական իրավակարգով, այն ժամանակ սկսեցին յերևան գալ այնպիսի պայմաններ, վորոնք և ստեղծեցին կըոնը։ Տեսնենք թե դա ի՞նչպես կատարվեց։

Նահապետական իրավակարգը, վոր ծագեց նախնական կոմունիզմից, բնորոշվում է հետեւյալ գծերով։ Մարդկային խմբերի ամբողջ կյանքը ղեկավարում են առաջնորդները — նահապետները։ Յեթե նախնական կոմունիզմի եպօխայում աշխատանքի մեջ լրիվ ընկերություն կար, այսինքն գործի մեջ հավասար աշխատակցում ելին ամենքը, — այժմ մարդկանց համայնքը բաժանվում է յերկու մասի — 1) նրա շարքային անդամների, վորոնք կատարում յեն բոլոր նյութական աշխատանքները, այն ե՝ բնակարաններ կառուցել, ձռւկ և գաղաններ վորսալ, հազուստ պատրաստել և այլն, 2) առաջնորդ-նահապետների, վորոնց աշխատանքը գլխավորապես կայանում է ղեկավարության մեջ, այսինքն՝ վոչ թե նյութական, այլ մտավոր աշխատանքի մեջ։

Ստեղծվեց հասարակական այնպիսի կառուցվածք, վորտեղ վոմանք (ղեկավարները) մտածում ելին, իսկ մյուսները կատարում ֆիզիկական աշխա-

տանք, ըստ վորում մտածողները, այսինքն նահապետները, կառավարում ելին մնացած բոլորին։

Միանգամայն բնական է, վոր մարդկային այդպիսի հարաբերություններն արտադրության մեջ, խիստ ազդեցություն գործեցին մարդկային մտածողության վրա։ Ակսեցին իրենց պատկերացնել, վոր ամբողջ աշխարհն ևս այդպես է կառուցված։ Յեթե մարդկային համայնքի մեջ միտքը (նահապետը) կառավարում է նյութական աշխատանքը (համայնքի շարքային անդամների աշխատանքը), ապա ուրեմն անտառներն ևս յերեկի ունեն իրենց «նահապետը» — անտառի վոգի, լեռներն ևս — լեռների վոգի, ջրերն ևս — ջրերի վոգի, և այլն։ Ամեն մի առարկային ղեկավարում է նրա վոգին — այդ առարկայի «հոգին»։ Ամբողջ աշխարհի «հոգին» — աստված է։

Կրոնը դասակարգային հասարակության պրոդուկտ է։ — Այսպիսով մենք տեսնում ենք, վոր կըո՞նի յերեան գալն հանդիսանում է հասարակական վորոշ հարաբերությունների հետեւանք։ Շնորհիլ վոմանց տիրապետության և բնակչության մյուս խավերի հպատակության, խորը տղիտության, բնության խեկան հատկություններին անտեղյակ լինելու հետեւանքով ստեղծվում են կըոնական պատկերացումներ։ Յեկ նրանք շարունակում են գոյություն ունենալ հենց նրա համար, վոր դեռևս պահպանվում է դասակարգային հասարակությունը, վորտեղ գոյություն ունի նույնպիսի բաժանում — իշխողներ և հպատակներ։

Կրոնական դավանությունների տարբերությունը — Քանի վոր կըո՞նը ստեղծվում է հասարակական վորոշ

հարաբերությունների ձետևանքով, ապա միանգամայն ընական ե, վոր՝ նայած զանազան ժողովուրդների կյանքի պայմանների տարբերության՝ տարբեր կյիւնն և նրանց կրոնական դավանությունները։ Իրականության մեջ այդպես ել ե։ Զանազան ժողովուրդներ զանազան կերպ են աստծուն պատկերացնում։ Տերտերներն այդ չեն կարողանում բացատրել։ Յեվ կամ նրանք ասում են—մեր կրօնը, մեր աստվածը—իսկական ե, մյուս բոլոր կրօններն ու աստվածները—խարեբայություն ե։ Բայց ումը հավատալ։ Լուսավորչականներին, ուղղափառներին, կաթոլիկներին, մահմեղականներին, բուդդայականներին... Բոլորն ել ասում են—միայն մեր աստվածն ե իսկական։

Բայց դա դժվար չե բացատրել։ Թողնենք վոր տերտերները վիճեն ու ապացուցեն, թե ում աստվածն ե իսկական։ Մենք գրա բացատրությունը կտանք՝ յելնելով պատմական մատերիալիզմի հիմունքներից։ Վորպես որինակ՝ վերցնենք հրեյաների Յեհովա աստծուն և դրան համեմատենք հին քրիստոնեաների աստծու հետ (շեշտում ենք՝ հին քրիստոնեաների, քանի վոր յետագայում քրիստոնեական աստվածը փոխվեց, ավելի ճիշտը՝ նրան փոխեցին իշխող դասակարգերը, հարմարեցնելով իրենց կարիքներին),

Յեհովան—չար, վրիժառու, անխնա, դաժան աստված ե։ Նա խիստ հետեւմ ե մարդկանց ու նրանց պատժում՝ յեթե չեն լսում։ Ընդհակառակը, հին քրիստոնեաների աստվածը շատ բարի յե, վողորմած ե, սիրո և յեղբայրության կոչ ե անում։

Տարբերությունը հսկայական է։ Խնչույթ այդպես Դրա պատասխանը մեզ տալիս են այն պայմանները, վորոնց մեջ (հրեյաների մոտ և հին քրիստոնեաների մոտ) ստեղծվել են պատկերացումներն աստծու մասին։

Հրեյաները այդ հեռավոր եպոսայում, երբ նրանց մոտ նոր եր զարգանում հասկացողությունը աստծու մասին, թափառաշրջիկ ժողովուրդ ելին։ Նրանք իրենց ամբողջ կյանքը անց են կացրել ուրիշ թափառական ու նստակյաց ցեղերի հետ ունեցած անդադար ընդհարումների մեջ։ Այդ կոփմսերից դուրս գալ կարելի յեր միայն մեծ տոկունություն, խստություն ու դաժանություն ցուցաբերելով։ Յեվ հասարակական այսպիսի կեցությունն եր, վոր վորոշեց նրանց աստծու դեմքը։ Նրանց պետք չեր թույլ, ներողամիտ աստված։ Ուստի և նրանք իրենց համար ստեղծեցին Յեհովային—խիստ ու դաժան։

Իսկ նախնական կոմունիզմը աղքատ ժողովրդի կրոնն եր—հին Հռոմեյական պետության մեջ ստրուկների ու արհեստավորների կրօնն եր։ Առ իսպերը ճնշված ու շահագործված ելին։ Նրանք իրենց դրությունից չելին կարող կռվով դուրս գալ—անհուսալիքան եր թվում՝ կռվել շահագործող դասակարգերի հզոր պետական կազմակերպության դեմ։ Ուստի և ստրուկների և չքափոր արհեստավորների իդեալն եր կաղմում հարմարվիլը, յեղբայրությունը, հարստության բաժանումը, սպառողական կոմունիզմը*։ Ասպես եր նախնական քրիստոնեությունը։

* Սպառողական կոմունիզմը ապագա կոմունիզմից տարբերվում է նրանով, վոր վերջինիս մեջ վոչ միայն սպառողական գործը, այլ և արտադրությունը կազմակերպված կլինի կոմունիստորեն։

հարաբերությունների ձետեանքով, ապա միանգամայն բնական է, վոր՝ նայած զանազան ժողովուրդների կյանքի պայմանների տարբերության՝ տարբեր կյեննեն և նրանց կրոնական զավանությունները։ Իրականության մեջ այդպիս ել է։ Զանազան ժողովուրդներ զանազան կերպ են աստծուն պատկերացնում։ Տերտերներն այդ չեն կարողանում բացատրել։ Յեվ կամ նրանք ասում են—մեր կրոնը, մեր աստվածը—իսկական ե, մյուս բոլոր կրոններն ու աստվածները—խարբերայություն ե։ Բայց ումը հավատալ։ Լուսավորչականներին, ուղղափառներին, կաթոլիկներին, մահմեդականներին, բուդդայականներին... Բոլորն ել ասում են—միայն մեր աստվածն ե իսկական։

Բայց դա դժվար չե բացատրել։ Թողնենք վոր տերտերները վիճեն ու ապացուցեն, թե ում աստվածն ե իսկական։ Մենք դրա բացատրությունը կտանք՝ յելներով պատմական մատերիալիզմի հիմունքներից։ Վորպիս որինակ՝ վերցնենք հրեյաների Յեհովա աստծուն և դրան համեմատենք հին քրիստոնեանների աստծու հետ (շեշտում ենք՝ հին քրիստոնեանների, քանի վոր յետագայում քրիստոնեական աստվածը փոխվեց, ավելի ճիշտը՝ նրան փոխեցին իշխող դասակարգերը, հարմարեցնելով իրենց կարիքներին)։

Յեհովան—չար, վրիժառու, անխնա, դաժան աստված ե։ Նա խստ հետեւում է մարդկանց ու նրանց պատժում՝ յեթե չեն լսում։ Բնդիակառակը, հին քրիստոնեանների աստվածը շատ բարի յե, վողորմած ե, սիրո և յեղբայրության կոչ ե անում։

Տարբերությունը հսկայական է։ Խնչու յե այդպես ՚իրա պատասխանը մեզ տալիս են այն պայմանները, վորոնց մեջ (հրեյանների մոտ և հին քրիստոնեանների մոտ) ստեղծվել են պատկերացումներն աստծու մասին։

Հրեյանները այդ հեռավոր եպոխայում, երբ նրանց մոտ նոր եր զարգանում հասկացողությունը աստծու մասին, թափառաշրջիկ ժողովուրդ եյին։ Նրանք իրենց ամբողջ կյանքը անց են կացրել ուրիշ թափառական ու նստակյաց ցեղերի հետ ունեցած անդադար ընդհարումների մեջ։ Այդ կոփառերից դուրս գալ կարելի յեր միայն մեծ տոկունություն, խստություն ու դաժանություն ցուցաբերելով։ Յեվ հասարակական այսպիսի կեցությունն եր, վոր վորոշեց նրանց աստծու դեմքը։ Նրանց պետք չեր թույլ, ներողամիտ աստված։ Ուստի և նրանք իրենց համար ստեղծեցին Յեհովային—խստ ու դաժան։

Իսկ նախնական կոմունիզմը աղքատ ժողովրդի կրոնն եր—հին Հոռմեյական պետության մեջ ստրուկտորների ու արհեստավորների կրոնն եր։ Այդ խավերը ձնշված ու շահագործված եյին։ Նրանք իրենց դրությունից չեյին կարող կովով դուրս գալ—անհուսավիրան եր թվում՝ կովել շահագործող դասակարգերի հզոր պետական կազմակերպության դեմ։ Ուստի և ստրուկտորների և չքավոր արհեստավորների իդեալն եր կազմում հարմարվիլը, յեղբայրությունը, հարստության բաժանումը, սպառողական կոմունիզմը*։ Այսպես եր նախնական քրիստոնեությունը։

* Սպառողական կոմունիզմը ապագա կոմունիզմից տարբերվում է նրանով, վոր վերջինիս մեջ վոչ միայն սպառողական գործը այլ և արտադրությունը կազմակերպված կլինի կոմունիստորեն։

Այժմ մեզ համար պարզ եւ տարբերությունը աստվածների միջև։ Դա լիովին բացատրվում է կյանքի աշխատանքային պայմանների տարբերությամբ։ Բոլոր աստվածներն ել—ցնորք, յերևակայություն եւ, սխալ պատկերացումներ։ Այդ ցնորքներն իրարից տարբերվում են առանձին հատկություններով։ Նայած մարդկանց կյանքի պայմաններին։ Տերտերներն ասում են—աստված մարդուն ստեղծել եւ իր պատկերով։ Բայց իսկապես հակառակն եւ լինում—մարդիկ են ստեղծում աստվածներին իրենց պատկերով։ Վոչ միայն մարմնական, այլ և հասարակական պատկերով։

Միասվածություն յեվ բազմասվածություն։ — Իհարկե, աստծու մասին ունեցած պատկերացումները փոփոխվում եյին։ Մարդկանց հասարակական կյանքի զարգանալովը ու բարդանալովը փոփոխություններ եյին տեղի ունենում աստվածների և՛ քանակի և՛ վորակի մեջ։ Առանձին խմբերի միանալով, փոփոխվում եր դրանց աստվածների քանակը։ Հասկանալի յե, վոր մարդիկ միացնում եյին նաև իրենց աստվածներին։ Այդ դեպքում այնտեղ, ուր համայնքների միացումը կատարվում եր այնպես, վոր մեկ համայնքին յենթարկվում եյին մյուսներն, այնտեղ հաղթողների աստվածը դառնում եր գլխավոր աստված։ Իսկ յերբ ուժերի տեսակետից հավասար մարդկային խմբերը իրենց կամքով եյին միանում, — նրանց աստվածներն ևս միանում եյին հավասար հիմունքներով։

Թշնամի աստվածներ, — Հետաքրքիր եւ հիշատակել նաև բացասական վորիների, այն ե՝ սատանաների,

դեկերի և այլն ծագումը։ Մարդկային յերեակայության այդ ստեղծագործություններն ևս մարդկանց հարաբերությունների արտացոլումն եյին։ Միայն թե տարբեր հարաբերություններն եյին այստեղ դեր կատարում։ — յուրաքանչյուր ժողովուրդ կռվում եր իր հարեանների հետ։ Այդ կռիվը մարդիկ իրենց այնպես եյին պատկերացնում, վորպես թե իրենց աստվածներն ել են կռվում։ Իրենց աստվածը — լավ աստված ե, հակառակորդների աստվածը — վատ աստված ե, չար վորի յե, ձգտում ե ամեն ինչ կործանել, սատանա յե։

Յեկեղեցի, կրոն յեվ դասակարգային պայմար։ — Ամեն մի կրոն ունի իր կազմակերպությունը։ Կրոնի այդպիսի կազմակերպությունը կոչվում է յեկեղեցի։ Նրա մեջ մտնում են այն բոլոր հավատացյալները, վորոնց հավատն առ աստված համապատասխանում է տվյալ կրոնական ուսմունքին։ այստեղ առանձին կարևոր դեր են խաղում յեկեղեցական ծեսերի կատարողները — քահանաները, մոլլաները, ութերիները, յեպիսկոպոսները և այլն։ Այդ վերջինները ուղղություն են տալիս յեկեղեցական կազմակերպության ամբողջ կյանքին։ Յեվ վորովհետև յեկեղեցին, ինչպես և կրոնը, գոյություն ունեցող դասակարգային հարաբերությունների արտացոլումն ե, — ապա և յեկեղեցու գործնեյության ուղղությունը վորոշվում է այն դասակարգերի շահերով, վորին պատկանում ե այդ յեկեղեցին։ Յեկեղեցին համարյա միշտ ել պաշտպան և հանդիսանում այն դասակարգերին, վորոնց հետ նա կապված ե ընդհանուր շահագործական կյանքով։

Բայց յեղել են դեպքեր, յերբ կրոնական ուսումունքը և համապատասխան յեկեղեցական կազմակերպությունը դառնում եյին ճնշված դասակարգերի ձգտումների արտահայտություններ։ Այդպես առաջ եյին գալիս յեկեղեցական «հերետիկոսները»։ Կրոնական նոր ուսմունքի կողմանիցները ձգտում եյին փոփոխել տվյալ կրոնն ու յեկեղեցին, դիմել «իսկական» աստծուն։ Իշխող յեկեղեցականներն, ընդհակառակը, գտնում եյին, վոր «հետետիկոսները» «իսկական» աստծուն փոխարինում են կեղծ աստծով։

Սակայն պետք չե գրավվել արտաքինով, նրանով, թե ինչ են ասում իրենք վիճողները։ Տարածայնությունների եյությունը իսկապես միշտ ել կայացել ե վոչ թե նրանում, թե ինչպես պետք ե խաչակներել կամ հաղորդվել, այլ դասակարգային ուեալ շահերի մեջ։ Յեկեղեցական ուժքորմների (բարենորոգությունների) պահանջի քողի տակ՝ «հերետիկոսական» ուսմունքներն միշտ ել թագցրել են քաղաքական կամ տնտեսական հարաբերությունները փոխելու պահանջներ։ Յեկեղեցական կամ կրոնական պայքարը հանդիսացել ելոկ դասակարգային պայքարի պատրվակ։

Այդպիսով մենք տեսնում ենք, վոր կրոնը նշանակալից դեր ե կատարում դասակարգային պայքարի մեջ։ Կրոնը շահագործող դասակարգերի ձեռքին ծառայել ե վորպես ուժեղ գործիք։ Յեթե առաջ յեկեղեցին յերբեմն հրապարակ եր գալիս իբր պաշտպանելու ճնշված դասակարգերին (400—500 տարի առաջ գյուղացիական շարժումները Զեխիայում, Գերմանիայում և ուրիշ յերկրներում), նա այն ժամանակ ևս վճռական

պայքարի հնարավորություններ չեր տալիս։ Կրոնը ճնշվածների ուշադրությունը յերկրային կյանքից կասեցնում եր և ուղղում դեպի գոյություն չունեցող անդրգերեզմանային կյանքը։ Լենինն այդ մասին գրում ե.

Լենինը կրոնի մասին։—Կրոնը հոգեկան ճնշման մի տեսակն ե. այդ լուծը միշտ ել և ամեն տեղ դրվում ե ժողովրդական այն մասսաների վրա, վորոնք աշխատելով ուրիշների համար՝ միշտ ել գըտնվում են կարիքի, զրկանքի ծանրության տակ։ Այն հանգամանքը, վոր շահագործվող մասսաները անզոր են պայքարելու շահագործողների դեմ, այդ հանգամանքն ևս նրանց մեջ անխուսափելիորեն ծնեցնում ե հավատ դեպի անդրգերեզմանային կյանքը, ինչպես վոր վայրենու՝ բնության դեմ պայքարելու թուլությունը նրա մեջ ծնեցնում ե հավատ առ աստված, սատանաներ, հրաշքներ և այլն։ Նրան, ով իր ամբողջ կյանքում աշխատում ե և կարիքի մեջ ե, կրոնը նրան սովորեցնում ե հեղություն և համբերատարություն յերկրային կյանքում՝ միիթարելով յերկնային պարգևի հուսով։ Իսկ նրանց, վորոնք ուրիշների աշխատանքով են ապրում, կրոնը նրանց սովորեցնում ե բարեգործություն անել յերկրային կյանքում, առաջարկելով շատ եժան արդարացում նրանց ամբողջ շահագործական գոյության համար, և ծախելով միտեսակ գնով տոմսեր յերկնային բարորության։ Կրոնը ժողովրդի համար ուղիում* ե։ Կրոնը — հոգեկան

* Ոպիում (ափիոն) — հնդկական խաշխաշից պատրաստած մի նյութ ե, վոր ծխում են։ Ծխելուց քննելով հրաշալի յերազներ են տեսնում։ Բայց մի քանի տարուց հետո, ոպիում ծխողները իրենց որգանիզմը բոլորովին քայլայում են։

մի տեսակ արագ է, վորի մեջ կապիտալի ստրուկները խեղդում են իրենց մարդկային պատկերը, մարդուն միքիչ վայել կյանքի իրենց պահանջները:

Հեղափոխական պայմար յեվ կրոն:—Այստեղից միանգամայն հասկանալի յե, վոր կրոնը բանվորական մասսաների մտքին տիրում և մինչ այն ժամանակ, քանի դեռ նրանք զգում են իրենց թուլությունը կապիտալի հակայական ճնշման հանդեպ: Հեղափոխական պայքարը վոչնչացնում է այն պայմանները, վորոնք ծնեցնում են հավատ առ աստված: Նա բանվորին ստիպում է մտածել, վոր՝

Վոչ վոք չի տա մեղ մեր փրկությունը,
Վոչ աստված, վոչ հերոսը, վոչ արքան.
Մենք պետք ե մեր ազատությունը
Կոենք ձեռքով մեր սեփական:

(«Ինտերնացիոնալ»-ից)

Մյուս կողմից ել, կրոնական մշուշն ամեն կերպ թուլացնելն ավելացնում է ձգտումն դեպի հեղափոխական պայքար: Դա հասկանալի յե: Յեթե բանվորը դադարել է աստծուց փրկություն սպասել, — ապա նրա համար միակ ճանապարհը մնում է հեղափոխական պայքարը:

Այսպիսով մենք կարող ենք ասել, վոր պրոլետարիատի հեղափոխական պայքարի աճումն նրա մեջ սպանում է հավատ առ աստված, իսկ աճող անսատվածությունը, բանվոր դասակարգի անհավատությունը ավելացնում է հեղափոխական ձգտումների ուժը:

Դրա համար ել կոմունիստական կուսակցությունները շարունակ և յեռանդով մղում են հակաբրոնական պայքար: Դրանով նրանք ոգնությամբ պայքարում են, վոր

պրոլետարիատը լիովին և պարզ գիտակցի հեղափոխական պայքարի նշանակությունը: Այդ գիծն ընկ լենինը հետեւյալ կերպով է հիմնավորել.

«Կրոնը — հոգեկան մի տեսակ արագ է, վորի մեջ կապիտալի ստրուկները խեղդում են իրենց մարդկային պատկերը, մարդուն միքիչ վայել կյանքի իրենց պահանջները: Բայց այն ստրուկը, վորն իր ստրությունը գիտակցում է և իր ազատազրության համար կովի ե յելնում, — սա կիսով չափ արդեն դադարում է ստրուկ լինելուց: Ժամանակակից (դա գլուխ է գեռ 1905 թ.) գիտակից բանվորը, վոր դաստիարակվել ե ֆարբիկային խոշոր արդյունաբերության պայմաններում, վորին քաղաքային կյանքը լուսավորել ե, — այդպիսի բանվորը արհամարանքով դեն և շպըրտում կրոնական նախապաշարմունքները, յերկինքը թողնում է տերտերների և բուրժուական կեղծ բարեպաշտների բաժին, իսկ ինքն այստեղ, յերկրիս վրա համար նվաճում է լավագույն կյանքը: Ժամանակակից պրոլետարիատը անցնում է սոցիալիզմի կողմը, կրոնավորը գիտության ողնությամբ պայքարում է կրոնավորը գիտության ողնությամբ պայքարում է կան մշուշի դեմ և բանվորներին անդրզերեզմանային կանքի հավատից ազատազրում է նրանով, վոր նրանց համախմբում ե լակական պայքար մղելու յերկրային լավագույն կյանքի համար»:

Զի կարելի պայքար մղել հոգուտ սոցիալիզմի՝ չպայքարելով կրոնի դեմ, վորը բուժուազիայի ձեռքին դեռևս խիստ ուժեղ գործիք ե հանդիսանում:

Կրոնը արդյո՞ք մասնավոր գործ է: — Սակայն մենշևիկները բոլոր յերկրներում ել ասում են, վոր

«կրոնը մասնավոր գործ ե»։ Նրանց կուսակցությանը չի հետաքրքրում այն հարցը, թե բանվորները, գյուղացիները և նույն իսկ իրենց կուսակցության անդամները հավատում թե չեն հավատում։ Հարցն այդ ձեռվ դնել, կնշանակի դավաճանություն գործել պրոլետարիատի հանդեպ։ Մենք արդեն գիտենք, վոր բանվոր դասակարգը չի կարող ուժեղ լինել՝ յեթե նա իր ուսերից գեն չի շպրտել կրոնական ցնցութիները։ Կրոնը — հեղափոխական դասակարգի վզից կախած ծանր քարե։ Ուստի և պայքարը կրոնի ղեմ՝ կազմում ե պայքար ընդգեմ կապիտալիզմի, պայքար հոգուտ կոմունիզմի։ Յեկ ընդհակառակը, նա՝ ով պայքարում ընդգեմ կապիտալիզմի, նա պայքարում ե և պետք ե պայքարի ընդգեմ կրոնի, կրոնը կուսակցության համար — մասնավոր գործ չե։ Իհարկե, չի կարելի մարդկանց անաստված դարձնել բռնություն գործ դնելով կամ նրա կրոնական զգացմունքները վիրավորելով։ Դրանով մենք կրոնը ավելի և ամրապնդած կլինենք աստվածապաշտների գլուխներում։ Ուստի և կոմկուսակցությունը շատ մեծ զգուշությամբ ընտրելով հակակրոնական պայքարի մեթոդներ, հակակրոնական պայքարը մղում ե մեծ յեռանդով։ Լրագրները, բրոցյուրները և գրքերը, հակակրոնական և գիտական-կրթական թեմայի վրա դասախոսությունները, կինո-նկարները, — բոլորը ոգտագործվում են այդ նալաւակի համար, վորվետե կրոնը շահագործող իրավակարգի մարմնացումն ե։

Կոմունիզմի որով յի կարող կրոն լինել։ — Կոմունիզմի որով չի կարող կրոն լինել ու չի լինի։ Գի-

տությունը բոլոր անհասկանալի յերեւյթները կբացատրի։ Շահագործող դասակարգեր նույնպես չեն լինի։ Կրոնական հայացքներ ծնեցնող պայմանները կ'վերանան։ Մինչ այդ վիճակին հասնելը, մեծ լարված պատերազմ կմղկի՝ բանվորների ու գյուղացիների գլուխները կրոնական թույնից մաքրելու համար։ Այդ թույնից ազատագրվել՝ առանձնապես դժվար կլինի գյուղացու համար։ Նրա յետամացությունը, տղիտությունը, նրա կախում ունենալը բնության ուժերից, վորոնց պատճառներն նա չգիտե, — այդ ամենը խորը արմատներ ե ստեղծում կրոնի համար։ Բայց գյուղացիական անտեսության զարգացումը, նրա կողեկտիվացումը, տրակտորին ու ելեքտրականությանը (յեզի ու ձիու փոխարեն) անցնելը, բնության պայմաններին հաղթահարելը — այս ամենը կրոնի արմատները կվոչնչացնեն։ Կրոնը հետզհետե կանցնի այնտեղ, ուր կանցնեն և՛ պետությունը, և՛ դասակարգերը, և՛ իրավունքը — հնությունների թանգարանը։

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Մենք այս գրքույկում մի քանի անգամ ցույց ենք տվել, թե ինչպես են ստացվում մարդկանց գիտելիքներ։ Բնության վրա ներգործելով, հասարակության մեջ միմիանց հետ գործ ունենալով, մարդիկ իրենց բոլոր գործքերից (ինչով և ինչի վրա աշխատում են) ձեռք են բերում գիտելիքներ։ Գիտությունը այդպիսի գիտելիքների ամբողջությունն եւ սիստեմի բերված։

Ի՞նչպես և ստեղծվել զիսուրյունը:—Նա ստեղծվել ու զարգացել ե մարդկային ամբողջ պատմության ընթացքում: Արտադրության տեխնիկայի մեջ կատարված փոփոխության հետ միասին լայնացել ե մարդկանց փորձը, աճել ե հասարակությունը և մեծացել են փորձից ու բնությունից ստացված տպավորությունները: Բնական ե, վոր դրա արտացոլումն ե՝ գիտության համապատասխան զարգացումը: ԶԵ վոր գիտությունը նշանակում ե—մարդկային լեզվի, մարդկային մտածողության փոխադրել այն, ինչ կա աշխարհում, ինչի հետ մարդիկ բաղկավում են: Լայնանում ու խորանում ե հասարակության և բնության փոխհարաբերությունը, աճում ու լայնանում ե նրանց արտացոլումն մարդկանց գլուխներում: Մարդկային գլուխներում չկա մի բան, վոր մարդկային պրակտիկայի (փորձի, գործառնության) մեջ չլիներ: Դա մեզ համար ավելի պարզ կլինի, յերբ իմանանք, թե ինչպես ե ստեղծվել ինքը մարդկային լեզուն և մտածողությունը:

Մարդկային լեզվի յեվ մտածողության ծագումը:—Կենդանիները զուրկ լինելով այն բարբառից, վոր ունի մարդու, նրանք իրենց զգացմունքները, ինչպես են՝ ցավը, վախը, հաճույքն արտահայտում են աղաղակ (ճիչ) արձակելով:

Մարդուս գիտակցությունն ու բարբառը ավելի յեն զարգացած: Մարդս արտահայտում ե իր մտքի հազարավոր յերանդները, բազմաթիվ առանձին առարկաների և գործքերի անուններ, նաև յերեք-չորս տասնյակ հնչյուններից հսկայական քանակությամբ կոմբինացիաներ և ստեղծում:

Զպետք ե կարծել, վոր մարդու այդ ամենը միշտ ել ունեցել ե: ԶԵ վոր մենք զիտենք, վոր մարդիկ մի ժամանակ ապրել են այնպես, ինչպես մյուս կենդանիները: Այն ժամանակ լեզուն ընդհանուր առմամբ այնպես եր, ինչպես և մյուս ցեղերինը: Բայց յերբ մարդիկ, կոլեկտիվ կյանքով ապրելով, սկսեցին գործել աշխատանքի գործիքներով,—սկսվեց ուրիշ շրջան: Աշխատանքի հարաբերական բարդությունն ու բազմակողմանիությունը մարդկանց դրդեցին զարգացնելու իրենց լեզուն: Իսկ ինչպես ե առաջացել մարդկային բարբառը: Ժամանակակից գիտությունն ասում ե, վոր մարդկային լեզուն ծագել ե աշխատանքի պրոցեսում: Մարդիկ այս կամ այն առարկայի վրա աշխատելով, ակամայից արձակում ելին ձայներ, նման այնպիսի ձայների, վոր աշխատելիս արձակում ե, որինակ, փայտահատը: Հետեապես, մարդիկ ստացել են միաժամանակ յերկու տպավորություններ—1) աշխատանքային ակտ (գործ) և 2) ձայն: Գուցե և վահանակ աշխատավորի արձակած ձայնը, այլ և հենց նյութական աշխատանքից (փայտ կոտրելիս, քարը ընկնելիս, վիրավոր կենդանու ճիշից) ստացվող ձայնը: Միաժամանակ մտնելով մարդու գիտակցության մեջ, այդ յերկու տպավորությունները կապվել են միմիանց հետ: Բավական ե հիշել մեկը, վորպեսզի մարդ միաժամանակ հիշե նաև մյուսը: Առողյա կյանքում այդ յերեսութիւնը բազմաթիվ որինակներ ամենքին հայտնի յեն—յերբ մի բան մարդուս անմիջապես հիշեցնում ե դրա հետ կապված մի ուրիշ բան: Պարզ

ե, թե ինչի կհասցներ այս յերեռութը։ Զե՞ վոր մարդուկ ապրում եյին խմբերով։ Յեվ յերբ պետք եր լինում իրար հաղորդելու, վոր հավաքվեն՝ աշխատելու համար կամ վորսի գնալու համար, և կամ յերբ պետք եր լինում հաղորդել վտանգի մասին և այլն,—բավական եր արձակել համապատասխան ձայնը, և ամենքը հասկանում եյին։ Այսպես կազմվեց մարդկային բարբառ։ Բայց յերբ մարդիկ խոսում եյին, նրանք հայտնում եյին վորեւ միտք։ Վորքան ավելի յեր զարգանում բարբառ, այնքան ավելի յեր զարգանում և մարդկային մտածողությունը։ Յեվ ընդհակառակը, մարդկային մտքի զարգացմամբ, մարդս անհրաժեշտություն զգաց զարգացնելու իր լեզուն, վորպեսզի իր միտքն հաղորդե ուրիշներին։

Գիտության զարգացումը—իհարկե, սկզբնական ժամանակներում մարդկանց գիտելիքները չափաղանց սուղ եյին։ Դա համապատասխանում եր նրանց անզարգացած տեխնիկային։ Սակայն, աշխատանքի գործիքների զարգացմամբ, գիտելիքների քանակությունը ավելանում եր, այդ գիտելիքները ընդգրկում եյին նորանոր բնագավառներ։ Արդեն անհրաժեշտ եր դառնում դրանք սիստեմի յենթարկել, այսինքն կարգավորել, դրանց մեջ ներդաշնակ կարգ սահմանել։ Յեվ մարդու գիտելիքների այդ ամբողջությունը, սիստեմի յենթարկված, կազմում ե գիտությունը։ Գիտելիքները հետզհետե ավելանալով, բաժանվում են առանձին ճյուղերի։ սրանք ևս իրենց հերթին ստորաբաժանվում են, և այլն։ Մենք գիտությունը կարող ենք բաժանում համար համար, նրա համար, վորպեսզի յուրաքանչյուր գիտություն ունենա մեկ ընդհանուր հիմք։ Այդպիսի հիմք ե կազմում գիլիսովայությունը։ Նա բնության կամ հասարակության առանձին յերեռութները չեն քննում, այլ սահմանում ե ընդհանուր մոտեցում դեպի բոլոր յերեռութները։

Յերկու հիմնական մոտեցում կարող ե լինել—կամ իդեալիզմ, կամ մատերիալիզմ։ ներ՝ բնության մասին (բնագիտություն) և 2) գիտություններ՝ հասարակության մասին (հասարակագիտություն)։ Առաջինները բաժանվում են հետեւածյուղերի—մաթեմատիկա (գիտություն՝ զանազան մեծությունների մասին), աստղաբաշխություն (գիտություն՝ արևի, աստղերի և այլն մասին), ֆիզիկա (գիտություն՝ առարկաների զանազան դրությունների և շարժումների մասին), քիմիա (գիտություն՝ առարկաների կազմության մասին), բիոլոգիա (գիտություն՝ կյանքի մասին), և այլն։ Ֆիզիկան, որինակ, ունի հետեւածյուղ բաժինները—ելեկտրականություն, ուսմունք լույսի մասին, ուսմունք ձայնի մասին, տաքության մասին և այլն։ Դրանցից յուրաքանչյուրը նույնպես ունի իր ստորաբաժանումները։ Նույնը կարելի յետել նաև ուրիշ գիտությունների մասին։ Գիտելիքների ծավալը այնքան ե մեծացել, վոր գիտությունը պետք ե բաժանվեր բազմաթիվ ճյուղերի։

Փիլիսոփայությունը բոլոր գիտությունների ընդհանուր հիմքն է։—Բայց, մյուս կողմից, այդպես մասերի բաժանվելը անհրաժեշտ ե դարձնում մշակելու ընդհանուր հիմք՝ բոլոր յերեռութները բացատրելու համար, նրա համար, վորպեսզի յուրաքանչյուր գիտություն ունենա մեկ ընդհանուր հիմք։ Այդպիսի հիմք ե կազմում գիլիսովայությունը։ Նա բնության կամ հասարակության առանձին յերեռութները չեն քննում, այլ սահմանում ե ընդհանուր մոտեցում դեպի բոլոր յերեռութները։

Յերկու հիմնական մոտեցում կարող ե լինել—կամ իդեալիզմ, կամ մատերիալիզմ։

Մատերիալիզմ յեվ իդեալիզմ:—Գիտության բուլը տվյալները, բոլոր փաստերը, մանավանդ վերջին տարիներս, ապացուցել են, վոր ճիշտ տեսակետը դիալեկտիկական մատերիալիզմինն է, այսինքն ճիշտը պրոետարիատի փիլիսոփայության տեսակետն է (տես յեր. 10 և շար.):

Սակայն մենք չենք կարող ասել, վոր բոլորն ել այդ տեսակետի վրա յեն կանգնած: Դա բացատրվում է ժամանակակից հասարակության դասակարգակին կառուցվածքով:

Յեվ իսկապես: Ժամանակակից գիտությունը ամբողջ աշխարհում, բացի ԽՍՀՄ, ամբողջովին գտնվում է բուրժուական գիտնականների ձեռքը: Բուրժուակայի համար ձեռնտու յե մատերիալիզմի հաղթանակը: Ինարկե վոչ. վորովհետեւ դա նշանակում է պրոլետարական հայացքների հաղթանակը և պրոլետարական հեղափոխության մերձեցում: Իսկ մի գիտնական շատ վաղուց ե ասել, վոր յեթե «յերկու անգամ յերկու հավասար ե չորսի» մաթեմատիկական որենքը վնաս հասցնի վորեւ մեկի շահերին, ապա այդ որենքը կսկսելին ժամանել, դա սխալ համարել:

Բայց գուցե այնպիսի դրություն է ստեղծվում, վոր, հակառակ բուրժուազիայի շահերի, նրա գիտնականները ստիպված են լինում ճիշտ համարելու մատերիալիստական աշխարհայացքը: Իսկապես մասամբ այդպես ել ե, մանավանդ այն գիտությունների մեջ, վորոնք վերաբերում են բնությանը: «Փաստերը—համառ բաներ են»: Ահա այդ փաստերը հազարավոր բուրժուական գիտնականներին, հակառակ սրանց ցան-

կության, ստիպում են ճիշտ համարելու պրոլետարական փիլիսոփայությունը:

Բայց վորովհետեւ նրանք բուրժուական պրոֆեսորներ են, ապա և նրանք ամաչում են, բացարձակ չեն անվանում մատերիալիզմը, թեև նրանք փաստորեն արդեն կանգնած են այդ տեսակետի վրա:

Պետք ե շեշտել և այն, վոր կապիտալիստական իրավակարգը քանի գեռ գոյություն ունի, նա նորանոր հող է պատրաստում իդեալիստական հայացքների համար: Ձե՛ վոր կապիտալիզմը պահպանում է այս բաժանումը—ֆիզիկական աշխատավորներ և նրանց դեկապարզներ, այսինքն՝ մտավոր աշխատանքի մարդիկ: Իսկ մենք գիտենք թե դա դեպի ուր ե տանում—դեպի կրոնը, դեպի իդեալիզմը: Միայն հեղափոխական պրոլետարիատը կարող է կանգնել մատերիալիստական տեսակետի վրա: Դա տեղի յե ունենում այն պատճառով, վոր նա սկսում է իր մեջ միացնել և ֆիզիկական բանվորին, և մտածող հեղափոխականին: Այստեղ հողն իդեալիզմի համար վոչնշանում ե: Առանձին-առանձին չկան «վոգի» և մարմին: Նրանք միանում են մեկ մարդու մեջ

Գիտության դերը մեղալիզմի եպոխայում:—Գիտության դերը գանազան ժամանակներում տարբեր ե յեղել: Ֆեոդալիզմի եպօխայում (մեզնից 500—1000 տ. առաջ) գիտությունը «կրոնի նամակիշտը» (աղախինն) եր:

Մարդկանց ամբողջ մտավոր կյանքը անց ե կացել կրոնի շրջանակներում: Գիտությունը աստծու գոյության ապացուցումով ավելի շատ եր զբաղվում, քան բնության և հասարակական յերկույթների բացա-

տրությամբ։ Գիտության այդպիսի զբաղմունքն անհրաժեշտ եր ֆեոդալների - կալվածատերերի իշխող դասակարգին։ Վերջիններս գիտության իսկական զարգացման մեջ շահագրգոված չեն։

Բուրժուազիան յեվ գիտությունը։ — Այլ բան ե— բուրժուազիան։ Կապիտալիստական արտադրությունը շարունակ կարիք ունի տեխնիկայի զարգացման, — իր մեքենաները կատարելագործելով ե, վոր ամեն մի կապիտալիստ հաջողությամբ մրցել կարող ե ուրիշների հետ։ Բայց տեխնիկայի զարգացումը կախված է գիտության զարգացումից։ Այնպես վոր՝ այդ հանգամանքը բուրժուազիային ստիպում ե ամեն կերպ զարգացնել գիտությունը, զիսավորապես մաթեմատիկան և բնագիտությունը։

Բուրժուազիան վորոշ չափով ստիպված ե լինում զարգացնելու նաև հասարակական գիտությունները։ Հասարակության հսկայական աճումը, հասարակական փոփոխությունների չափը, հակասությունների զարգացումն ու պայքարը հասարակության ներսում, հասարակական կյանքին ուղղություն տալու անհրաժեշտությունը, — այդ բոլորը դրդում են հասարակական գիտությունների բնագավառում ել ավելի մեծ քայլեր անելու դեպի առաջ։

Բայց դրան սահման կա։ Հենց վոր հանդես ե գալիս պրոլետարիատը, բուրժուազիան իսկույն և յեթ յերես ե գարձնում հասարակության կյանքի իսկական ճանաչողությունից։

Յեկ իրոք Կապիտալիզմի որոք հասարակական զարգացումը կապիտալիզմին տանում ե դեպի ան-

խուսափելի կործանում։ Պրոլետարիատի հանդես գալն այդ դարձնում ե անկասկած։ Նշանակում ե, իրականությունը — բուրժուազիայի դեմ ե։ Բուրժուազիան առայժմ իշխում ե, բայց ուշագիր ուսումնասիրությունը ցույց ե տալիս, վոր նա մատնված ե կործանման։ Դրա համար ել բուրժուազիան և նրա պրոֆեսորները լիովին չեն մոտենում հասարակական կյանքի խորը ուսումնասիրության։

Նրանք այդ կյանքը ուսումնասիրում են շատ մակերեսորեն և չափազանց աղավաղում, խեղություրում են յեզրակացությունները։ Բուրժուազիայի ստեղծագործական հանճարը այդ բնագավառում բուգրովին չքացել ե. նա զբաղված ե սպառնացող իրանությունը սրիկայաբար պճնագարդելով։

Բուրժուազիան չի կարող այդպես վարվել բնական գիտությունների վերթերմամբ, վորովիետև վերջիններս անհրաժեշտ են արտադրության զարգացման համար։ Բայց այստեղ ևս զգացվում ե բուրժուազիայի մահացման ապականիչ ազդեցությունը։ Յերբ անհրաժեշտ ե լինում այդ գիտություններից ընդհանուր հետեւթյուններ անել, իսկույն առաջին պլանի վրային դրվում ուեակցեռն իդեալիստական դատողություններ։ Բուրժուազիան բնության բացատրության իմուլիներում իսկույն մեջ ե բերում նաև իր կրօնական հայցքները և հենց զրանով մթագնում ե բնության իսկական եյության ճանաչողությունը։

Բուրժուազիան գիտելիքները մնենպոլիա յեւ դարձել։ Այդ մնանպոլիայի նշանակությունը — Ընդհանուրապես պետք ե ասել, վոր բնական գիտություն-

Ները բուրժուական հասարակության մեջ չնայած զարգացած են, բայց այդ հասարակությունը հնարավորություն չի տալիս վոր դրանք առանձնապես արագ աճեն: Մարդկային յեռանդի հսկայական քանակություն վատնվում ե վոչ թե գիտությունների զարգացման վրա, այլ մարդկանց փոխադարձ պայքարի վրա: Մյուս կողմից, կապիտալի տիրապետությունը 10.000 մարդուց 9.999-ին դնում ե այնպիսի պայմաններում, վոր նրանք ստիպված են զբաղվելու բացառապես իրենց որեկան պարենը հայթհայթելով: Մի չնչին խմբակ ե, վոր հնարավորություն ունի գիտությունը զարգացնելու: Անա այդ մոնոպոլիան*, գիտության վրա դրանց ունեցած մոնոպոլիան պետք ե վոչնչացնել: Այդ մոնոպոլիան իշխող դասակարգին ձեռնառու յե: Դա նրանց համար վորոշ յերաշխիք ե այն բանի, վոր ճնշվածները չեն կարող իշխող դասակարգին դեն շպրտել դրա գրաված դիրքերից:

Մենք այդ տեսնում ենք մեր հեղափոխության որինակից: Մեր բանվորական պետությունը զգացել ե և այժմս ել գեռ շարունակում ե զգալ այդ դժվարությունները. բանվոր դասակարգին մեր յերկրում եւ առաջ թույլ չեյին տալիս գիտելիքներ սովորելու: Պրոլետարիատը հնարավորություն ստացավ այդ անելու հեղափոխության շնորհիվ: Դժվար եր մանավանդ

* Մոնոպոլիան այնպիսի յերկույթ ե, յերը վարեե բանե տերում են մի քանի մարդիկը իսկ մյուսները վոչ մի տեղ դա ստանալ չեն կարող. ստանալ. կարող են միմիայն դըս տիրոջից (մոնոպոլիստից):

սկզբնական շրջանում, յերբ բուրժուազիան և ինտելիգենցիայի մի մասը սարստաժի եյին յենթարկում Խորհրդային իշխանությունը: Նրանք մտածում եյին, վոր բանվորները, վորոնց իրենք առաջ գիտությունները չեն տվել, այժմ չեն կարողանա լուծել նոր խնդիրները:

Պրոլետարիատը այդ սարստաժը կոտրեց, ստիպեց աշխատել, նա ցույց տվեց, վոր ինքը կարող ե նոր կյանքը կառավարել: Բայց բուրժուազիայի՝ գիտելիքների վրա ունեցած մոնոպոլիան իհարկե խիստ արգելը եր հանդիսանում պրոլետարիատի հաջողություններին: Անա թե ինչու այդ մոնոպոլիան բուրժուազիան թանգ եր գնահատում: Յեկ նա այդպիս շարունակում ե վարվել, չնայած այն հանգամանքին, վոր գիտելիքների վրա իր ունեցած այդ մոնոպոլիան գիտության զարգացմանը խանգարում ե, քանի վոր գիտական աշխատանքի մեջ մասնակցում են, փոխանակ հարյուրավոր միայն հազարները:

Պրոլետարիատը յեկ գիտությունը: —Պրոլետարիան գիտությունը բուրժուական գիտությունից տարբերվում ե նախ նրանով, վոր առաջինը այլ կերպ ե լուսաբանում փաստերը, միանգամայն այլ կերպ ե դրանք ի մի շաղկապում: Իհարկե, մանավանդ սկըզբում — պրոլետարական գիտությունը ստիպված ե հիմնվել այն հսկայական մատերիալի վրա, վոր հավաքել են բուրժուական գիտնականները: Բայց պրոլետարիատն այդ մատերիալը ոգտագործեց այնպիս, վոր բուրժուական թեորիաներին այլևս վոչինչ չի

մնում անելու։ Նրանց անձշտությունը բոլորովին պարզվեց։ Միջազգային պրոլետարիատի պայքարի առաջնորդներից ու նահատակներից մեկը, վորին 1919 թ. գերմանական մենշևիկները սպանեցին, Ռողակությունը մը առաջնորդը, այդ միտքն այսպես է արտահայտել. «մարքսիզմը — բուրժուական գիտության զավակն է, բայց այդ զավակի ծնունդը կատարվեց մոր կյանքի գնով»։

Բնական գիտությունների նկատմամբ պրոլետարիատն առայժմ շատ բան անել չի կարող։ Բայց այստեղ ևս նա պետք է մաքրի իդեալիզմի ռեակցիոն ամբողջ հին խլամը, վորից հետո արդեն նա կշարունակի դա ևս դարձացնել։

Պրոլետարիատը ստեղծում է այնպիսի գիտություն, վորը իրականությունը ճշտությամբ անդրադարձնում է։ Այն, ինչ տեղի յեւ ունենում հասարակության կյանքում, դա նրան տանում է դեպի հաղթանակ։ Հետևապես պրոլետարիատի շահերի համար ոգտակար է ճանաչել և հասարակական աշխարհը, և բնությունը այնպես, ինչպես դրանք կան։ Միայն այն ժամանակ հաղթանակը ապահովված կլինի, միայն այն ժամանակ պրոլետարիատի ուշադրությունը ուրիշ կողմ գրավել չեն կարող բուրժուական պնակալեզների քաղցր յերգերը։

Դրա համար ել պրոլետարիատը իր գրոշակի վրա գրում է — լիովին՝ մինչ հնարավորության վերջին սահմանը՝ ճանաչել իսկական եյությունը այն ամենի, ինչ գոյություն ունի։ Իհարկե, մարդս ամեն բան հասկանալ չե կարող։ Բայց այն, ինչ այժմ մարդ-

կության կողեկտիվ միտքն անել կարող է, դա պետք է արվի, վորովհետև պրոլետարիատի համար ձեռնոտու չե միակողմանի, անձիշտ, թերի ճանաչությունը։

Գիտությունը կոմունիստական հասարակության մեջ։ — Գիտությունը կոմունիստական հասարակության մեջ չի մահանա՞ ինչպես իդեոլոգիայի մի քանի այլ տեսակները, այլ հսկայական չափով առաջ կը նիմիանա։ Կվերացվեն նրա զարգացմանը խանգարող արգելքները և ամենից առաջ կվոչնչանա հակասությունը ֆիզիկական աշխատանքի և մտավոր աշխատանքի միջև։ Այդ հսկասությունը կապիտալի տիրապետության որոք ազգաբնակչության մասսաներին մատնել և տաժանակիր աշխատանքի՝ դազգահի և գութանի քով։ Այդ մասսաների վոխարեն մտածել են ուրիշները, վորոնք ապրել են նրանց հաշվին։ Կոմունիստական հասարակության զարգացմամբ այդ հսկասությունները կվերացվեն։ Մշակվում է մարդու նոր տիպ, վորն իր մեջ միացնում է և ֆիզիկական և մտավոր աշխատավորին։ Այն ժամանակ, յերբ ամբողջ մարդկությունը կվերակառուցվի այդ կերպ, — այն ժամանակ գիտության զարգացումն առաջ կը նիմիանա արագ քայլերով։ Արդեն վոչ թե տասնյակ հազարներ, այլ հարյուր միլիոնավոր մարդիկ համերաշխ աշխատանքով առաջ կմղեն գիտությունը։ Նրանց յեռանդը չի գործադրվի իրար դեմ պայքարելու վրա։ Նրանք հսկայական արշավանք կկատարեն՝ բնությունը իրենց յենթարկելու համար։ Իսկ բնությունը նվաճել կարելի յե միայն նրա հատկությունները ճանաչելով, հե-

տևապես գիտությունը զարգացնելով։ Մարդկության առաջ նոր հորիզոններ կբացվեն։ Մարդկությունը առաջ կդնա հսկայական քայլերով։

ԳԵՂԱՐՎԵՍ

ՄԵՆՔ մոտեցանք մարդկային հասարակության իդեոլոգիայի կարևորագույն տեսակներից վերջինին—գեղարվեստին։

Գեղարվեսի տեսակները։—Գեղարվեստին վերագրում ենք այնպիսի յերեսություններ, ինչպես՝ յերաժշտությունը (մուզիկա), նկարչությունը, քանդակագործությունը, ճարտարապետությունը (գեղեցիկ շենքեր կառուցելը), գրական գեղարվեստական յերկեր (բալետիստիկա)։ Չնայելով գեղարվեստի այդ բոլոր տեսակների միջև յեղած մեծ տարբերության, նրանց մեջ մի ընդհանուր միացնող բան կա։ Ի՞նչ։ Այդ մենք կտեսնենք, յերբ կըննենք, թե գեղարվեստի յերկերը ի՞նչպես են ազդում մարդուս վրա։

Գեղարվեսի ներգործությունը։—Յերբ մարդ նայում է նկարին կամ լսում է յերաժշտություն, նա առանց խոսքերի վարակվում է այն տրամադրություններով, այն մտքերով, վոր ստեղծագործողները (հեղինակները) դրել են նկարի կամ յերաժշտության կամ գեղարվեստի ուրիշ մեջ։ Մարդս վոչ միայն մտածում է, այլ և զգում—տանջվում է, հրձվում, ցանկանում, ուրախանում, տիրում կամ կարում և այլն։ Նրա զգացմունքները կարող են

անչափ բարդ և նուրբ լինել, նրա հոգեկան ապրումները կարող են բազմապիսի լինել։ Գեղարվեստը սիստեմի յենթարկում այդ զգացմունքները՝ դրանք արտահայտելով գեղարվեստական պատկերներում կամ խոսքով, կամ հնչյուններով, կամ շարժումներով (որինակ՝ պարը), կամ վորեւ ուրիշ միջոցով (յերբեմն նյութի միջոցով, որինակ՝ քանդակագործության մեջ)։ Կարելի յե ասել, վոր գեղարվեստը «զգացմունքները ընդհանրացնելու» միջոց է, կամ եմոցիոնել * «վարակման» միջոց։ Յեթե դուք լսում եք, որինակ, մի յերաժշտական յերկ, վորի մեջ արտահայտված է հոգեկան վորոշ տրամադրություն, —դուք և մյուս բոլոր ունկնդիրները (լսողները) ընկնում եք այդ տրամադրության մեջ, այդ տրամադրությամբ «վարակվում» եք։ Այն, ինչը մեկ մարդու տրամադրությունն եր կազմում, դարձավ շատերի տրամադրությունը, փոխանցվեց նրանց. այստեղ հոգեկան դրությունը, զգացմունքները «ընդհանրացան»։ Այդ նույն բանը տեղի յե ունենում գեղարվեստի նաև ուրիշ բնագավառներում — նկարչության մեջ, քանդակագործության մեջ, պոեզիայում և այլն։

Ի՞նչպես է ստեղծվել գեղարվեստի առաջին տեսակներից են յեղել պարը, յերգը։ Ի՞նչումն եյին կայանում գեղարվեստի այդ արտահայտությունները։ Ի՞նչ եյին նրանք անդրադարձնում։ Մարդկանց՝ աշխատանքային կյանքը։ Վորսորդությամբ պարապողների մոտ պարերը հիշեցնում
* եմոցիոնել—ծագում և «եմոցիա» բառից, վոր նշակում և հոգեկան «շարժում»։ Հույզ։

Եյին վորսը, յերկրագործությամբ պարապողների մոտ—ցանքսը և առհասարակ գյուղատնտեսական աշխատանքը։ Դա բացատրվում է այսպես. պարերը, վորոնց միջոցին աշխատանքի համար անհրաժեշտ շարժումներ եյին կատարվում, ստեղծում եյին համապատասխան տրամադրություն։ Դա ավելի ցայտուն կերպով յերեռում է նախնական ժողովուրդների զինվորական պարերի որինակի վրա։ Այդ պարերը վերաբարձրում են այն բոլոր գործողությունները, վորոնք անհրաժեշտ են պատերազմի ժամանակ։ Այդպիսի պարերը ստեղծում են ռազմական վորոշ տրամադրություն, վոր այնքան հարկավոր է հաջող կովի համար։

Գեղարվեսի զարգացումը— Գեղարվեսի զարգացումն ընթացել է մարդկանց աշխատանքային հարաբերությունների զարգացմանը զուգընթաց։ Փոխվել են այդ վերջինները, փոխվել են նաև գեղարվեստը։ Սակայն պետք է շեշտել հետեւյալը, մարդկության կյանքի սկզբնական եպիխայում գեղարվեստը անդրադարձել է ամբողջ համայնքի գործնեյությունը և ծառայել է դրան։ Բայց դասակարգերի յերեան գալը նոր դեր է հանձնել գեղարվեստին, վորս այժմ պիտի ամրապնդեր դասակարգային տիրապետությունը։ Գեղարվեստը մեծ չափով ստեղծել է զարգացնել կարող եյին իշխող դասակարգերը, թեև ճնշված դասակարգերն ևս ստեղծում եյին իրենց գեղարվեստը։ Մենք դրա մասին կիսունք հետու Բայց գեղարվեստը ծառայության մեջ մտավ գլխավորակես ճնշողների մոտ, վորոնք և դա լայն կերպով ոգտագործեցին։

Գեղարվեսը մեղաղիզմի եպոխայում։ — Որինակի համար վերցնենք թեկուզ ֆեոդալիզմը։ Ամբողջ կյանքն այնպես եր կառուցված, վոր հասարակության ցածրում գտնվում եյին գյուղացիության շահագործված լայն մասսաները, նրանց վրա բազմում եյին ազնվականները-կալվածատերերը. դրանք իրենց հերթին յենթարկվում եյին իշխաններին, իսկ վերջիններս—իրենցից ավելի հարուստ հողատերերին, և այլն։ Այդ սանդուխքի վերեռում կանգնած եր թագավորը կամ իմաստառը։ Այդպես յե յեղել ֆեոդալական հասարակության կառուցվածքը, վոր ամբողջովին հիմնված եր գյուղացիությունը տմարդի կերպով շահագործելու վրա։

Ի՞նչպես եր այն ժամանակվա իդեոլոգիան։ Ընթացողն հիշում է, թե ինչպես տիրապետության և հապատակության հետևանքով ստեղծվեց կրոնը։ Ֆեոդալական իրավակարգը տիրապետության-հալատակության այդ հարաբերությունը ծայր աստիճան զարգացրեց։ Բնական է, վոր այն ժամանակ կրոնը իդեոլոգիայի տիրապետող ձևն եր։ Ամեն ինչի վրա նայում եյին կրոնի ակնոցներով։ Վոչ միայն գիտությունն եր «կրոնի նամիշտը» (աղախինը), այլ և գեղարվեստը։ Յեկ նկարչությունը (կրոնական պատկերներ, իկոնաներ), և յերաժշտությունը (յեկեղեցական յերգը)՝ բոլորը ստեղծագործվում եյին այնպես, վորպեսզի բավարարվեն կրոնի կարիքները։ Այդը բոլոր գեղարվեստը մարդկանց զգացմունքները այնպես եր լարում, վոր նրանք աստվածային մեծության և նրա ներկայացուցիչ յեկեղեցու առաջ իրենց

զգում եյին վոչնչություններ։ Յեվ վորովհետև հոգեւ վորականությունը ֆեղալ կալվածատերերի—իշխող դասարարդի միայն մի մասն եր կաղմում, ապա հասկանալի յե, վոր գեղարվեստը շահագործական հարաբերությունները ամրապնդեց։

Բուրժուական գեղարվեստը։—Հենց վոր յերևան յեկավ կապիտալիզմը, սկսվեց գեղարվեստի համապատասխան վերակառուցումը։ Բուրժուական գեղարվեստը կրոնական չե։ Դա բացատրվում է նրանով, վոր ֆեղալական կալվածատիրական տիրապետությունը կործանելով՝ իշխանության գլուխ անցավ կապիտալիզմը։ Նա ստիպված եր կովել ինարկե նաև յեկեղեցական հզոր կազմակերպության դեմ, վոր սերտ կապված եր հին իշխանության շահերի հետ։ Դրա համար ել, յերբ բուրժուազիան դեռևս թույլ եր, նա «հերետիկոս» եր դառնում, իսկ յերբ նա սկսում եր ուժեղանալ, յերբեմն դուրս եր գալիս նույն իսկ ընդդեմ սատծու։ Ընդհանրապես կապիտալիստներն իրենց իշխանությունը ամրապնդելու համար, նորեն դիմեցին յեկեղեցուն՝ ձգտելով տերտերների աջակցությունը ստանալ։

Ահա այդ պատճառով ել բուրժուական գեղարվեստն, ընդհաննուր առմամբ, կրոնական չե, բայց լիովին անդրադարձնում է նոր հասարակական կեցությունը—բուրժուական կեցությունը։ Ինարկե, բուրժուազիան վորչափ զարգանում եր, այնչափ փոխվում եր և նըա գեղարվեստը։ Սակայն գեղարվեստը մասսաներին միշտ ել այնպես եր տրամադրում, վորպեսզի նրանք հավատային բուրժուական իշխանության

կարողությանը, վորպեսզի անհրաժեշտ համարելին պաշտպանել բուրժուազիային, վորպեսզի մասսաների մեջ զգվանք առաջացնի այն բոլորը, ինչ վտանգավոր ե բուրժուազիայի համար։

Դա յերևում է հաղարավոր որինակներից։ Վերցնենք դրանցից մեկը։ Հաճախ գրական գեղարվեստական յերկերում նկարագրվում են զանազան պատմական դեպքեր։ Մենք զիտենք, վոր հասարակության ամբողջ պատմությունը դասակարգերի պայքարի պատմություն է։ Պայքարում են դասակարգերը։ Մասսաներն են ամեն ինչ վճռում։ Իսկ բուրժուական գրական գեղարվեստի ներկայացուցիչների մոտ այլ բան է դուրս գալիս—«մեծ մարդիկն» են ամեն ինչ ստեղծում։ Մասսաները—դա միայն կավ ե, վորից «մեծ մարդիկ» պատրաստում են՝ ինչ կամենում են։

Ի՞նչ է դրա իմաստը։ Այն, վոր կարդալով այդպիսի գրքեր, միլիոնավոր մարդիկ կդան այն համոզման, վոր, իսկապես, մասսան—վոչինչ է։ Միայն «մեծ մարդիկն» են խելացի, զարգացած, միայն նրանք կարող են նոր բան ստեղծել։ Դրանով սպանվում է մասսաների ինքնագործնեցունը, ուրեմն և ամրապնդվում է իշխող դասակարգը։ Հակառակ պրոլետարական հիմնին՝

Վոչ վոք չի տա մեզ մեր փրկությունը,

Վոչ աստված, վոչ արքան, վոչ հերոսը, —

բուրժուական գեղարվեստը կոչ է անում ազատագրություն սպասել յեթե վոչ սատծուց, ապա ուրեմն «արքայից և հերոսից»։ Բայց հաճախ նաև սատծուց։

Սա միայն մի փոքրիկ որինակ է, վոր ցույց է տալիս, թե ինչպես գեղարվեստը, նայողներին ու

լողներին հեղինակի զգացմունքներով «վարակելով», մասսաներին տիրելու հզոր միջոց է հանդիսանում:

Բուրժուական գեղարվեսի ժամանակակից այս-
սերումը:—Մենք ասացինք, վոր գեղարվեստը հե-
տևում է այն փոփոխություններին, վոր կատարվում
են իրեն ստեղծող դասակարգերի մեջ: Այդ պատճա-
ռով ել այժմ, յերբ բուրժուազիան անհաստատ դրու-
թյան մեջ է գտնվում, յերբ նա իր իշխանությունը ամ-
րապնդելու անկարելիությունից գլուխը կորցրել է, —
նրա գեղարվեստը արագ այլասերվում է: Բուրժուայի
տեսակետից՝ հեղափոխական ցնցումները, բանվորների
կատաղի պայքարը անմիտ բաներ են: Իսկ ինքը բուր-
ժուազիան չի կարող տնտեսությունը վերականգնել
համաշխարհային մասշտաբով: Ինչ-վոր անհասկանալի-
բան է կատարվում: Աշխարհը, յերկի, իւրագարվել
է, —սարսափում է բուրժուազիան: Յեվ բուրժուա-
կան գեղարվեստը դա անդրադարձնում է՝ հետզհետե
ավելի ու ավելի անհասկանալի դառնալով:

Տանջալից կերպով վորոնում են նոր «ստիլ», նոր
ընդհանրացնող ձեռք, և չեն գտնում. ամեն որ ծնվում
է վորևե նոր «իզմ», վորը շուտով հնանում է: —«իմ-
պրեսիոնիզմից» հետո հայտնվեց «նոյիմպրեսիոնիզմ»,
«ֆուտուրիզմ», «եքսպրեսիոնիզմ» և այլն: Անթիվ
անհամար ուղղություններ ու փորձեր, անթիվ թե-
որիաներ, և վաշ մի՞ քիչ թե շատ կայուն սինթեզ:
Դա տեղի յե ունենում և նկարչության մեջ, և յե-
րաժշտության մեջ, և պոեզիայում, և քանդակոր-
ծության մեջ, մի խոսքով — գեղարվեստի ամբողջ
ֆլունտում:

Մյուս կողմից, բուրժուական նեխվող կյանքի իրակա-
նությունը բուրժուազիային և բուրժուական գեղարվես-
տին ստիպում է ապաստան գտնել «անդի աշխարհում»:

Միշտ այդպես ե լինում դասակարգերի հետ: Յերբ
յերկրային իսկական կյանքը նրանց քիչ և տալիս
ուրախություններ, նրանք թեկուղ մտքով անցնում
եր «աստվածային բնագավառը»: Ժամանակակից բուր-
ժուազիայի գեղարվեստը սկսում է ամեն մի սատա-
նայի հավատալ: Նա ձգտում աշխարհի «իսկական ճա-
նաչողության» ուղիներ գտնել վոչ թե գիտության
միջոցով, վոչ թե այդ աշխարհի պարզ նկարագրության
միջոցով, այլ «հոգու» միջոցով, աստծու հետ անմի-
ջականապես ձուլվելու միջոցով:

Այսպես ե ժամանակակից բուրժուական գեղար-
վեստը, վորը կյանքից հեռանում է դեպի անմտու-
թյուն ու նորից վերադառնում «ներքին աշխարհին»,
«հոգիներին», «աստծուն» և այլն:

Ավելացնենք նաև այն, վոր մեռնող բուրժուական
գեղարվեստի համար շատ բնորոշ ե՝ առաջին պլանի
վրա ցուցադրել սեռական հարցը՝ ամենախայտառակ
կողմերով: Պունոգրաֆիան (պոռնկագրությունը) իշ-
խում է: Դա իշխում է և մեռնող բուրժուազիայի
կյանքում և նրա գեղարվեստի մեջ: Տեսնելով սպառ-
նացող հասարակական մահը, բուրժուազիան շտապում
է «կյանքի ուրախություններից» վերջին անգամ ոգտը-
վելու: Աստված, պոռնիկ և անհեղինեցություն—ահա
վերջին խոսքերը նեխվող բուրժուական գեղարվեստի:

Գեղարվեստը յեվ բանվոր դասակարգի պայ-
տարշ:—Այն գեղարվեստը, վոր ստեղծում է պլոյե-

տարիատը, նոր-նոր է սկսում ծաղկել։ Դաժան կապիտալիստական շահագործումից ձնշված բանվոր դասակարգը բուրժուազիայի տիրապետության տակ քիչ բան կարող եր ստեղծել գեղարվեստի բնագավառում։ Մինչ-հեղափոխության ժամանակ ժողովրդական գեղարվեստը արտահայտվել ե գլխավորապես յերգերի մեջ և մասամբ գրական յերկերում։ Յերգերի մեջ ավելի ցայտուն ե արտահայտվել։ Այդ յերգերը արտահայտում են բանվոր մասսայի ծանր դրությունը։ Այդ յերգերը անդրադարձնում ելին բանվորների և գյուղացիների անյել դրությունը։ Այդ յերգերը չելին կարող մասսաներին միացնել պայքարի համար, բայց նրանց մեջ զարթեցնում ելին ատելության ընդհանուր զգացմունք դեպի իշխող պարագիտները։

Բայց մարտական հեղափոխական յերգերը վոչ միայն կարծես ասում ելին՝ «ատիր», այլև՝ «կռվիր»։ Իրանց այդ գերը հեղափոխական յերգերն կատարել են և առաջ, նրանք այդ գերը կատարում են նաև այժմ։ Դասակարգի առանձին անդամը, նույնիսկ ամենապաս-սիվ անդամը, այդ յերգերը ուրիշների հետ միասին յերգելով, միանում ե ընդհանուր աշխատանքին ու պայ-քարին։ Յերգը նրան գրավում ե, յերգը ազդում ե նրա մտքի վրա, նրա կամքի, նրա զգացմունքի վրա։

Պրոլետարական հեղափոխությունը, պլրոլետա-րիատին ամեն տեսակ ձնշումներից ազատելով, հնա-րավորություն ե տալիս նաև գեղարվեստի բնագավա-ռում հսկայական քայլեր անելու դեպի առաջ։ Մեր հեղափոխությունը ցույց տվեց, թե ինչ հսկայական դեր կարող ե խաղալ գեղարվեստը։ Վերցնենք թեկուզ

պլակատային գեղարվեստը։ Որինակ, բանվորների և դյուղացիների յերկերը նվաճել ձգտող հականեղա-փոխականների թաթերը պատկերացնող մի հաջող նկար, վոր տարածվում եր հազարավոր և տասնյակ հազա-րավոր որինակներով, —լայն մասսաներին վոգեորում ու ծանր պայքարի յեր հանում։ Նա ամենախուլ ան-կյուններում խոսքից ավելի զորավոր ներգործություն եր ունենում աշխատավոր մասսաների գիտակցության վրա։ Գեղարվեստի բոլոր տեսակներից՝ հեղափոխա-կան պլակատն ե ամենամեծ և ակտիվ մասնակցու-թյուն ունեցել մեր պայքարի մեջ։

Այժմ արդեն ստեղծվում ե նոր պլրոլետարական գրականություն։ Նրա խնդիրն ե —աշխատավոր մաս-սաների գիտակցությունը կազմակերպել հեղափոխա-կան վոգով։ Նոր շինարարության համար։ Ուստի և նա իր բովանդակությամբ խիստ տարբերվում ե բուրժուական գրականությունից՝ իր մեջ անդրա-դարձնելով հեղափոխական պայքարի, տնտեսական հա-մառ աշխատանքի, բանվորական կենցաղի մոմենտներ։

Բայց, իհարկե, բավական դժվար ե գրական գեղար-վեստական յերկերի նոր բովանդակությանը համապա-տասխան նոր ձև ստեղծել, նոր լեզու մշակել, զրելու նոր յեղանակներ։ Սակայն դա ևս ժամանակի խնդիր ե, Պրոլետարական ստեղծագործության հետագա զար-գացմամբ, նաև այդ ուղղությամբ կաձեն ու կզարդանան այն ընձյուղները, վոր արդեն հրապարակի վրա յեն։

Բացի իր բովանդակությամբ և շարադրության ձևով, պլրոլետարական գրականությունը մյուս բոլոր նախընթացներից (առանց բացառության) տարբեր-

վում ե իր թափով։ Յեթե առաջ մարդկային ստեղծագործության այդ բնագավառը ընդգրկում եր միայն փոքրականակ «վերխուշշկան», ապա այժմ պրոլետարական գրականության խնդիրներն ու միջոցները ուրիշ են։ Նա չի կարող զարգանալ վորպես ջերմածուի բույս։ Առանց լայն մասսաների ստեղծագործական աշխատանքի—նա չի կարող կենսունակ լինել։

Լեռինը պրոլետարական գեղարվեսի մասին։— Կարևոր ե վոչ թե մեր կարծիքը գեղարվեսի մասին, կարևոր ե վոչ թե այն, թե ինչ ե տալիս գեղարվեսուր բնակչության ընդհանուր թվից մի քանի հարյուրին, նույնիսկ մի քանի հազարին՝ յերբ այդ բնակչության քանակը միլիոններով ե հաշվում։ Գեղարվեսուր պատկանում ե ժորովրդին։ Գեղարվեսուն իր ամենախորը արմատներով պետք ե թափանցի աշխատավոր լայն մասսաների ամենախուլ անկյունները։ Նա պետք ե այդ մասսաներին հասկանալի լինի և նրանցից սիրվի։ Նա պետք ե շաղկապի այդ մասսաների զգացմունքը, միտքը և կամքը, նրանց պետք ե վեր հանի։ Նա նրանց մեջ պետք ե զարթեցնի արվեստագետներ և դրանց զարգացնի։ Արդյոք մենք պետք ե փոքրամասնությանը քաղցր նուրբ կարկանդակներ հրամցնենք այն ժամանակ, յերբ բանվորներն ու գյուղացիական մասսաները կարիք ունեն սև հացի... Մենք պետք ե միշտ մեր աշքի առաջ ունենանք բանվորներին ու գյուղացիներին։ Նրանց շահերի համար մենք պետք ե սովորենք տնտեսավարել, հաշվել։ Դա վերաբերում ե նաև գեղարվեսի ու կուլտուրայի բնագավառին։

Ահա Լեռինը ինչպես եր հասկանում գեղարվեսի գերը։ Այդպիսի գեղարվեսը պրոլետարիատի համար կմնի պայքարի ուժեղ գործիք՝ կոմունիզմի ճանապարհին։

Բայց այսպեղ պրոլետարիատի հանդեպ հսկայական գժվարություններ կան, և ամենից առաջ՝ մեր տընտեսության քայլայման հետևանքով առաջացած նյութական աղքատությունը և կուլտուրական հսկայական յետամացությունը։ «Վորպեսպի»—ասում ելենինը—գեղարվեսը կարողանալ մոտենալ ժողովրդին և ժողովուրդը գեղարվեսին, մենք պետք ե նախ բարձրացնենք ընդհանուր կրթական և կուլտուրական մակարդակը։

Քանի վոր պրոլետարիատն արդեն կառուցում ե իր տնտեսությունն ու պետությունը, նա արդեն կարող է ստեղծել իր գեղարվեսը, և հետզետե նա նրան ավելի յե մոտեցնելու ամենալայն մասսաներին։

Գեղարվեսի դերը կոմունիզմի որո՞ւ։—Մարդկությունը կոմունիստական հասարակակարգում գեղարվեսը շատ ավելի կզարդացնի։ Կոմունիզմի որոք գեղարվեսուն այլս չի ծառայի դասակարգային պայքարին, այլ ամբողջ մարդկային կողեկանին։ Գիտության հետ միասիննա կդառնա յերկրագնդիս վրա ապրող միլիոննավոր մարդկանց պարապմունք։ Գեղարվեսուն այն ժամանակ ևս կլինի մարդկանց կազմակերպելու միջոց։ Միայն թե նա մարդկանց կկազմակերպի վոչ թե դասակարգային պայքարի համար, այլ բնության վրա ել ավելի հաղթանակ տանելու, բնությունը մարդկությանը յենթարկելու մեծ նպատակի համար։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակի առաջաբանից	3
Խմբագրության կողմից	4
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	5
Աշխարհայեցողություն: Աշխարհայեցողության դասակարգային բնույթը: Պրոլետարական և բուրժուական աշխարհայեցողություն: Մարքսիզմ և լենինիզմ:	

ԳԼՈՒԽ I. ԴԻԱԼԵԿՏԻԿԱԿԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԻԶՄ

1. ՄԱՏԵՐԻԱԼԻԶՄ	10
Իդեալիզմ (11): Մատերիալիզմ (12): Մարքսիզմ կամքը վորոշվում և իրենց կյանքի պայմաններով (15): Կամքի ռազմառությունն չկա (16):	
2. ԴԻԱԼԵԿՏԻԿԱ	18
Ամեն ինչ հոսում և և փոփոխվում (18): Եվոպուցիւա և հեղափոխություն (ռեվոլյուցիւա) (20): Հակասությունները մղում են առաջ (24): Դիալեկտիկական որենք (26): Չկա վոչինչ անջառ (32): Վերացական ճշմարտությունն չկա, ճշմարտությունը կոնկրետ է (35): Վճռ միայն բացատրել, այլև փոփոխել (38):	

ԳԼՈՒԽ II. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԲՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ. ԱՐՏԱԴՐՈՂ, ՈՒԺԵՐ	41
Մարդու տարբերությունը կենդանուց: Աշխատանքի գործիքների դերն այդ խնդրում (43): Ի՞նչպես և կատարվել անցումն կենդանուց դեպի մարդը (44): Ամեն մի կենդանի կամ բույս բնությանը հարմարվում	

ե (46): Մարդու հարմարվիլը բնության պայմանակին (47): Տեխնիկա: Արտադրող ուժեր (48): Արտադրող ուժերի զարգացումը (49): Աշխարհագրական միջավայրը և հասարակության զարգացումը (50):

2. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

52

Հասարակություն (52): Աշխատանքային կապ (53): Արտադրական հարաբերությունների յերկու տիպ (54): Աշխատանքային կապերը կամ հարաբերությունները կազմում են մարդկային հասարակության հիմքը (57): Աշխատանքային հարաբերությունները վորոշվում են տեխնիկայով (արտադրող ուժերով) (57): Արտադրական հարաբերությունները վորոշում են հասարակության կամքի բոլոր կողմերը (60): Մի քանի ամփոփմանը (61):

3. ԱՐՏԱԴՐՈՂ, ՈՒԺԵՐ, ՀԵ՞ՇԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ, ԿՈՄՈՒՆԻԶՄ

62

Կապիտալիզմը դասակարգային հասարակության վերջին ձևն ե (62): Կապիտալիզմի հիմնական հակառակությունը (63): Խմբերի խառնական պատերազմը մի փոքր եր՝ լուծելու կապիտալիստական հակառակությունները չքայլայելով կապիտալիզմը (64): Կոմունիզմի անհրաժեշտությունը (65): Կառլ Մարքսի կարծեքը՝ կապիտալիզմից գեպի կոմունիզմ անցնելու անխուսափելիության մասին (66): Կոմունիստական հասարակությունը և արտադրող ուժերը (66): Հեղափոխությունը և արտադրող ուժերի ժամանակավոր քայլայումը (67): «Կոմունիզմը—զա Խորհրդային իշխանությունն ե՝ պլատ ելեքտրիֆիկացիան» (68): Աշխատանքի արտադրականությունը (70): Պրոլետարական հեղափոխությունն ե (70):

ԳԼՈՒԽ III. ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐ

1. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԿԱՌՈՒԹՅՎԱԾՔԸ

72

Նախնական կոմունիզմը (72): Նահապետական իրավակարգի և ուսակարգերի ծագումը (73): Կապիտալիստական հասարակության հիմնական դասակար-

գերը (75): Դասակարգի հինգ հատկանիշները (75): Դասակարգերի լենինյան բնորոշումը (76): Հիմնական դասակարգերը (77):

2. ԴԱՍԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՅՔԱՐ

78

Բանվոր դասակարգի կրած ճշշումները (80): Դասակարգային պայքարի թագնված ձեզ (82): Դասակարգային գործակցության ձեզ: Առաջին ձեզ—հիմնական շահերը զոհաբերգում են ժամանակավոր շահերին (84): Դասակարգային գործակցության յերկրորդ ձեզ—դասակարգային մշտական շահերի միացյալ պաշտպանություն (85): Հիմնական դասակարգերի պայքարը՝ դաշնակց ձեռք բերելու մամար (86): Պայքարի զարգացումը բոլոր դասակարգերին միացնում են միայն յերկու իրար թշնամի բանակների մեջ (88):

3. ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ

89

ինչն յե հարկավոր կուսակցությունը (89): Կուսակցությունը դասակարգի մի մասն եւ կուսակցությունը գասակարգի մեջ չի լուծվում (91): Կուսակցության շրջա եմմնաները—ա) կուսակցության պատմությունը (92): բ) կուսակցության ծրագիրը (93): գ) կուսակցության տակուիկան (96): Կուսակցություն և դասակարգ (98): դ) կուսակցության կազմակերպությունը (102): Կուսակցության առաջնորդները (107): Մեծ մարդիկ (109):

4. ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

112

ի՞նչ ե պետությունը (112): Պետությունը դասակարգային հակասությունների անհաշտելիության արդյունք ե (113): Պետությունը դասակարգային բռնության գործիք ե (114): Բուրժուական պետությունների նեմոկրատիա (115): Խորհրդային պետությունը և բուրժուազիայի պետությունը (118): Բանվոր դասակարգի դիկտատուրան (119): Պյուղացիությունը Խորհրդային պետության մեջ (119): Պրոլետարիատի վերաբերմունքը գեղի պետությունը (120): Լենինը պետության մասին (121):

5. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

122

Կապիտալիզմի զարգացման վերջին ստադիան—իմպերիալիզմ (122): Միակ յերը՝ պրոլետարական հեղա-

փոխության մեջ ե (123): Հեղափոխության հիմնական հարցը՝ պետական լշխանությունը բռնադրավելն ե (124): Խխանությունը ձեռք ե բերվում զինվածապստամբության միջոցով (125): Լենինի կարծիքը հաջող ապամամբության պայմանների մասին (125): Պրոլետարիատը ջարդում և բուրժուական պետական մեքենան (126): Բուրժուական և պրոլետարական հեղափոխություններ (127): Ոպորտունիստների թեորիան՝ կապիտալիզմից գեղի կոմունիզմի անցնելու մասին (128): Այդ թեորիայի սխալը (129): Բոնությունը ամեն մի նոր հասարակության մանկաբարձուհին ե (129): ի՞նչ վերաբերմունք ունի դեպի պետությունը պրոլետարիատը, և ի՞նչ — բուրժուազիան (130): Կոմունիզմ (131): Դասակարգի և պետության մահացումը: Կոմունիզմի առաջին աստիճանը (132), Կոմունիզմի հետագա աստիճանը: «Յուրաքանչյուրից—ըստ իր ընդունակությունների, յուրաքանչյուրին—ըստ իր կարիքներից» (133):

ԳԼՈՒԽ VI. ԻԴԵՈԼՈԳԻԱ

1. ԲԱԶԻՍ ՑԵՎ ՎԵՐՆԱՇԵՆՔ

135

Նյութական և «հոգեկան» արտադրություն (135): Մարդկանց գիտակցությունը վորոշվում է իրենց կեցությամբ (137): Բազիս: Քաղաքական և իդեոլոգիական վերաշենքներ (138): Վերաշենքների ազգեցությունը բազիսի վրա (138): Մարդկային հասարակության կառուցման սխեման (142): Իդեոլոգիական վերաշենքների գլխավոր տեսակները (143):

2. ԻՐԱՎՈՒԽ

143

ի՞նչ ե իրավունքը: Որենք և իրավական հարաբերություններ (144): Ամեն մի իրավունք—դասակարգային իրավունք ե (145): Բուրժուական իրավունք (145): Խորհրդային իրավունք (147): Խորհրդային դատարան (148): Իրավունքը կոմունիզմի որոք կմանակ (149):

3. ԲԱՐԵՑԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

149

ի՞նչ ե բարոյականությունը (150): Բարոյականություն և իրավունք (150): Բուրժուական բարոյականություն (151): Բուրժուազիայի յերկու տեսակի բա-

ոռյականությունը (152); Պրոլետարական բարոյականություն (153); Առաջին որինակ — սպանություն (154); Յերկրորդ որինակ — աշխատանքի արտադրողականություն (155); Յերրորդ որինակ — պրեցողություն (156):

4. ԿՐՈՆ	157
Ի՞նչ և կրոնը (157); Ի՞նչպես և ծագել կրոնը (157); կրոնը դասակարգային հասարակության պրոդուկտ է (159); Կրոնական գալանությունների տարբերությունը (159); Միասնակածություն և բազմաստվածություն (162); Թշնամի աստվածներ (162); Յեկեղեցի, կրոն և դասակարգային պայքար (163); Հենինը կրոնի մասին (165); Հեղափոխական պայքարը և կրոնը (166); Կրոնը արդյոք մասնավոր գործ է (167); զոմունիդմի որոք չի կարող կրոն լինել (168):	
5. ԳԻՏՈՒԹՅՈՒՆ	169
Ի՞նչպես և ստեղծվել գիտությունը (170); Մարդկային լեզվի և մտածողության ծագումը (170); Գիտության զարգացումը (172); Փիլիսոփայությունը բոլոր գիտությունների ընդհանուր հիմքն է (173); Մասնէրիալիզմ և իդեալիզմ (174); Գիտության գերը ֆեռապոմի եպոփայում (175); Բուրժուազիան և գիտությունը (176); Բուրժուազիան գիտելիքները մոնողութան յեղածին; Այդ մոնողութայի նշանակությունը (177); Պոլտարհատը և գիտությունը (179); Գիտությունը կոմունիստական հասարակության մեջ (181):	
6. ԳԵՂԱՐՎԵՍ	182
Գեղարվեստ տեսակները (182); Գեղարվեստի ներգործությունը (182); Ի՞նչպես և ստեղծվել գեղարվեստը (183); Գեղարվեստի զարգացումը (184); Գեղարվեստը ֆեռալիզմի եպոփայում (185); Բուրժուական գեղարվեստը (186); Բուրժուական գեղարվեստի ժամանակակից այլասերումը (188); Գեղարվեստը և բանվոր դասակարգի պայքարը (189); Լենինը պրոլետարական գեղարվեստի մասին (192); Գեղարվեստի գերը կոմունիդմի որոք (193):	

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵԿՑԻԱՆ

ԼՈՒՅՍ ՏԵՍԱԾ ԳՐՔԵՐԻՑ ՊԱՀԵՍՏՈՒՄ ԿԱՆ ՀԵՏԵՎՅԱԼՆԵՐԸ

Սոցիալիզմի ուղին,—Ն. ԲՈՒԽԱՐԻՆ	1 ռ. 25 կ.
Ազգային Հարց,—ի. ՍՏԱԼԻՆ	1 ռ. 60 »
Դյուդացիական Հարց,—ի. ՍՏԱԼԻՆ	50 »
Լենինի պատգամները ծողովրդ. լուսավորության մասին	20 »
Լենինի պատգամները յերիտասարդության	15 »
Համ. Կոմկուսի (թ) պատմությունը,—Վ. ՎՈԼՅԵՎԻՉ	1 ռ. 50 »
Բոյլեվլիկների կուսակցությունը 1917 թվին,— ՅԵԼ. ՅԱՐՈՍԼԱՎԻՑԻՑ	85 »
Ինչ սկզբ Հոկտեմբեր բանվորներին,—Մ. ՏՈՒՄԱԿԻՅԻՆ	20 »
1905 թ. մեր Ի-ին բանվորացուդացիական նեղափոխությունը,—ի. ՖԼԵՇՈՎՍԿԻՅ	70 »
Քաղաքական բառարան,—կազմեց Վ. ԱԲՐԱՄՅԵՅԱՆ (656 էջ) 2 ռ. —	80 »
Պատմական մատերիալիզմի այբովենը	80 »
Պայմանի յեկ շինարարության տարի,—ի. ՆՈՎԱԿՈՎՍԿԻՅԻՑԻՅԻ	70 »
«ի. ՍՏԱԼԻՆ» (համառ. կենսագր.)	7 »
Ինչպես աշխուժացնել զյուլիստորիոդները,—Զ. Ա.Վ.ՐԵՆՑԵՎ	30 »
Պատերազմ շենք ուզում, բայց դիմադրելու պատրաս ենի,— ՅԱ. ԱՎԻՆՈՎԻԼԻՑԻՅԻ	10 »
Ինչով և ուժեղ կարմիր բանակը,—ԶՈՐԻՆ	15 »
Տգիտությունը յեկ սեահավատությունը,—Վ. ԴԻՄԻՏՐԻՑԻՅԻ	15 »
Մերոդական ձեռնարկ (ուսուցիչների համար)	70 »
Հասարակագիտությունը Ի-ին ասինանի դպրոցում,— Բ. ԺԱՎՈՐՈՆԿՈՎ	65 »
Գեղօկտնինի յեկ յերիտասերը	25 »
Ի՞նչպես և սարված տիեզերքը,—Գ. ԳՐԱՎԵ (նկարագ.)	50 »
Արեվիր, եռա վորդիները յեկ բուները,—Բ. ՍԵՐԵՅԵՎԻՆ (նկ.)	40 »
Ինչպես և առաջացել յեկ զարգացել կյանքը յերկրի վրա, Մ. ԳՐԵՐԵՅՎԻԿԻ (նկարագար)	50 »



Մարդու յեվ կենդանիների ծագումը,—Դ. Ա.ԳՈԼ. (նկ.) .	35 "
Մարդ-մետենա,—Ա. ԳՐԵՄՑՅԱԿԻ (նկարազարդ)	"
Մարդու անհսանելի քենամիներն ու բարեկամները,— Լ. ԶԻԼԲԵՐ (նկարազարդ)	20 "
Վորոն, կայծակ, ելեֆտրականուրյուն,—Ա. ԳՐԵՄՑՅԱԿԻ (նկարազարդ)	40 "
Պատաճի Պիռներ (ժողովածու, նկարազարդ)	60 "
Պիռներ, հետեւիր Լենինի պատգամներին	20 "
Հոկտեմբերը (համառ. պատմ.)	10 "
Մեր ավագ յեղբայրները—Կոմյերիտականները,—Լ. ԿՈ- ԼԵՍՆԻԿՈՎ	33 "

ՊԱՄՈՒՆԻ ՏԱԿ ԵՆ ՑԵՎ ՊԱՏՐՈՍՏՎՈՒՄ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Հեռագիր, հեռախոս, ռադիո (նկարազարդ)
Զվարճակի պատմվածքներ «Ասվածաշնչից», 84 ծաղրանկարով,
Կրօնների ծագումը (նկ.) (մասսայական):
Ոպպոզիցիոն հոսանքները Համ. Կոմկուսի (բ) մեջ:
Քաղցրագիտուրյան դասագիրք (կոմս. բաղադային դպր. համար):
Քաղաքական գրույցներ (կոմս. գյուղ. դպր. համար):
(Վեցին 2 գրքերը առաջիկա 1928—29 ուսումն. տար. համար են):

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՊԱՀԵՍՏԸ ԳՏՆՎՈՒՄ Ե ՄՈՍԿՎԱՅՈՒՄ <small>(Մոսկվա, Խոյոլսկայ 10. Կենտրոնաց)</small> ՊԱՏՎԵՐՆԵՐՈՎ ԿԱՐԵԼԻ ՑԵ ԴԻՄԵԼ ՆԱՅԵՎ՝ ՌՈՍՏՈՎ, (Դոնի վրա)՝ ՄԵՐ ԲԱԺԱՆՄՈՒՅԹԻՆ, ՑԵՐԵՎՈՒՆ՝ ՊԵՏՎՀՐԱՑԻՆ, ԲԱԴՈՒ—ԱԶԳԻԶԻՆ. ՊԱՀԱՆՁԵՑԵՔ ՄԵՐ ՀՐԻՎ, ԳՐԱՑՈՒՑԱԿԸ ՎՈՐ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Ե ԶՐԻ
--

28924

80 ч.



А. Раевский

**Азбука
исторического
материализма**

На армянском языке
(с переработкой)

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ С. С. С. Р.
Москва, центр, Никольская, 10

«Ազգային գրադարան



NL0146716

